



Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

### **Правила пользования**

Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

### **О программе**

Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу <http://books.google.com>.

GRAD  
EREN  
240  
BUHR

A 980,184



Հանձնարար. 20

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԲԱՐԵՐԱՐԻ



Ի ՀԱՅԲԱԳԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԱՏԹԵՆՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՏԻՐ  
ԿԱԹՈՒՂՈՍՈՒ ԱՄԵՆԱՅԻ ՀԱՅՈՑ

Ի ԳԱՏԻԱՐԻՓՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՕԼՍՈՑ

ԱՄԵՆԱԳԱՏԻՒ Տ. Տ. ԳՕՂՈՒՄ

ՄԻՒԶԱՆ ԱՐԻԲԳԻՍԿՈՂՈՒՄ




ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՕԼՍՈՑ

Ի ՏԳԱՐԱՆԻ

ՅԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- 1864 -



Handwritten notes and signatures on the right margin, including the name 'Հ. Կ. Կ.' and other illegible text.

62  
Ա. Կ. Կ.  
Լ. Կ. Կ.  
Մ. Կ. Կ.  
Կ. Կ. Կ.  
Կ. Կ. Կ.

1. Introduction  
 2. Objectives  
 3. Scope  
 4. Methodology  
 5. Results and Discussion  
 6. Conclusion  
 7. References  
 8. Appendix  
 9. Bibliography  
 10. Index

Մոսկ  
LREN  
240  
9.11.99

## Ա Ջ Դ

Ազգային Անդուգական Բարերար ԳԷՂԱՅՈՆ (ՂԱՋԵՂ) ՅՍ-  
ՐՈՒԹԻՒՆ ամերային կենսագրութիւնը մեր հրատարակած յան-  
նակ Հայրենասիրտ Հանդիսին Ա. տարւոյ շրջանին մէջ մաս մաս  
ի լայն ընծայելով ամբողջ աւարտեցինք. նոյնը հիմա առանձին  
գրքուկով մը կը նուիրենք մեր սիրելի Ազգին :

Պէզճեան, այս շաշխարհիկ անձն՝ իր ժամանակին և Ազ-  
գին վիճակին նկատմամբ Հայոց մէկ նոր գիւցազն եղած է :  
Պէզճեանի անուր սիրով կը լսենք մեր հայրերէն ու պապերէն,  
որոնք նոյն մեծագործ Անձին ժամանակակից գտնուելով, ան-  
յայտնաբերել կերպիւ. մեզի կը պատմեն անոր բարեպաշտական և  
ազգասիրական մեծագործութիւնները և հանձարեղ ու խոհա-  
կան ընթացքը : Աստիկ անդուգական անձի մը վարքը, որ դէ  
Յի տարի յառաջ կ'ապրեր, երբ մինչև մեզի հասնիլը բառա-  
պայտութիւններ կրել սկսած է, հայտն արշափ պիտի այլերը  
երբ դարեր անցնէին. և ան ատեն ինչպէս գուցէ շատերոյ  
անանկ ալ այս մեծ բարերարին անուր միայն մնար, և  
ձերն անսոյոց : Եւ թէպէտ մեր հրատարակած Ազգային  
մտութեան Դասագրքին Ա. անգամի տպագրութեանը մէջ Պէզ-  
ճեանի մեծագործութեանց վրայ համառօտ տեսութիւն մ'որած  
էինք : Կ'ըզգայինք սակայն թէ աւելի մանրամասն պատմութիւն  
մը կը հարկաւորի նոյն Բարերարին վարուց և գործոց համար :  
Արդ այս պետքը լրուցած էր Պերպեւեան Աւետիս Պատուե-  
լին, որուն քով գտանք Պէզճեանի գործոց հաւաքածոյն : Ժա-  
մանակագրութեան կարգով, և ստացանք զայն :

Պերպեւեան Պատուելին կը հաստատէ մեզ թէ, Պէզճեա-  
նի ծննդեան և զարգացման ճիշդ տեղեկութիւնները Աստու-  
ծաբան Յովհաննէս Պատրիարքէն և Պէզճեանի կիբահայր Պա-  
պայեան կարապետ աղայէն առած է : Բարեպաշտական գոր-  
ծոց վրայ ճիշդ տեղեկութիւններն ալ Վանեցի Էանիեան Յով-  
հաննէս Պատուելին օրագրութիւններէն քաղէր է, որ կարա-  
պետ և Ստեփան Պատրիարքաց օրովը Պատրիարքարանի մէջ  
գրագիր ըլլալով, բարեպաշտ ամերային գործերը մասնաւոր  
տետրակի մը մէջ նշանակած ունի եղեր : Ինքը Պերպեւեան  
Պատուելին ալ ժամանակակից ըլլալով Պէզճեանի, և ժամանա-  
կակից դէպքերու ուշադիր, խնամով և զգուշութեամբ հաւա-  
քած է Պէզճեանի գործերը, և նոյն ատենի ազգային և քաղա-  
քական զլխաւոր դէպքերն ալ :

Պերպետուան Պատուեղբին տեղեկութիւնները՝ Պեղձեանի ժամանակակից երևելի անձանց միջոցաւ ալ տուագեցինք. և մեծ խնամ տանելով որ Ճշգութիւն և անկողմնակցութիւն պահենք Պատուութեան ընկացքին մէջ, այն Կենսագրութիւնը գրի առինք Պերպետուանին ջուրջցած ժամանակագրական կարգը պահելով, և զեղբերուն շարժառիթներուն և հետեանց վրայ ալ լաւ ուշադիր ըլլալով:

Կերկայ Կենսագրութեանս բովանդակութիւնը վաւերացած է ոչ միայն Պերպետուանի հաւաքածոներէն, երևելի անձանց մեր ըրած հարցուփորձներէն, այլ և Թեքեան Եպարծութիւն աղայէն, որ Պեղձեանի հետք միշտ չքաղ սպասուողներէն մեկն էր, և անոր առջև ծայրէ ծայր անցեալ տարի կարգալով մեր պատրաստած ներկայ պատմութիւնս: Կարկ եղած սրբագրութիւնն ըսինք:

Պեղձեանի հանձարեղ խօսքերուն և զուարճալի գործոց մաստ հաւաքածոյ մ'ալ կայ մեր քով: Բայց անոնց մէջ ուղութեան և հարցուփորձի ու անգեկանալու կարօտ կեանք մտալով այս անգամ շիրջանք հրատարակել. կը յուսանք որ իշ անգամի պատահութեամբ թէ այս հաւաքածոյն և թէ Պեղձեանի կենդանագիրն ի մասին այն Կենսագրութեանս հետ խոստարակելու բազմը կ'ունենանք. սրպէս զի այն անգլագան կան անձը որ իր կենդանութեանը բազմագիրն բախեալ և երբտեղք պերճացուց Ազգը: Իր մահու ընէն ետքը վայելէ իր երբտեղք փոխարինութիւնը՝ Ազգին մշտնջենաւոր երբտեղք պարտ զգացմանց մէջ. ու անմահ անուն տանայ մեր ու մեր ապագայ սերնդոց մէջ:

1 մարտ 1864

ՍՏԵՓՆ Գ. ԳՕԼՈՍ ՓՕՓԵՂԵՆՏ

Սեփնտիսիչի վարժարան

Ղալաթիոյ:

Կ Ե Ն Ս Ե Գ Բ Ո Ւ Թ Ի Յ Ն

Յ Ը Բ Ո Ւ Թ Ի Ւ Ն Պ Ե Չ Ա Ն Ը Ն

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ա Ն Ջ Ո Ւ Գ Ա Կ Ն Բ Ե Բ Ե Ր Ա Ր Ի

Գ Լ Ո Ւ Ի Ե Ը

Պ Ե Ջ Յ Ե Ա Ն Ի Ն Ծ Ն Ո Ւ Ն Դ Ը Ե Ի Ջ Ե Ր Գ Ա Ջ Ո Ւ Մ Ը

1768 թին, Սուլթանն Սուլթանաբադ Գ. երբ Ռուսաց գեմ պատերազմ բացաւ, երկու հարիւր հրաձարտակ հանեց Նիսասուլթի ամեն կողմերը, պատուէր տալով որ ամեն կուսակալներն իրենց զօրքերովը՝ յաջորդ տարւոյն մտրա ամսին մէջ գան ժողովին Ադրիանուպօլիս քաղաքը, ուր ինքը Սուլթանն ալ նուիրական գրոջակով հանդերձ երթալու կը պատրաստուէր:

Կայսերական այս հրամանին համեմատ, ոչ միայն Ղեյմաթէի և Թիմար ըսուած թոշակաւոր զինուորները պատրաստուեցան պատերազմի երթալու, այլև ինքնակամ ենիչերթներն ալ, որ ի-րի-կ և Էվլատ ֆաթիհան կ'ըսուէին:

Արդէն պատերազմի ձայն ըսուելուն պէս թուրքատասի ամեն բնակչաց սիրան առ հասարակ ահով ու գողով կը լցուէր, վասն զիներբին պատերազմներն միանգամայն կ'ըսկսէ-

ին . և ժողովրդաց՝ մանաւանդ քրիստոսնէից  
կեանքն , ինչքը և պատիւը վտանգի մէջ կ'ը-  
նային : Անիշխերիները որ խաղաղութեան ժա-  
մանակն անգամ անզուսպ էին , ինչպէս պատ-  
մութիւնը մեզի կը ցուցնէ , աւելի աներ-  
կիւղ և համարձակ կ'ըլլային պատերազմի ժա-  
մանակ :

Ահա այս անգամ ալ ճիշդ առջիններուն  
նման եղաւ . թէ Ա. Պօլսոյ և թէ Փոքուն  
Ասիոյ հռչակաւոր քաղաքաց շուկաներն ամէնքն  
ալ կողոպտուեցան : Շատ սրիկաներ ալ ելան  
զանազան քաղաքներէ , պատերազմի երթալու  
պատրուակաւ , և անթիւ անօրէնութիւննե-  
րով ու կողոպտուաներով անցան գնացին Ադ-  
րիանուպօլիս : Արիսն ու Արսա քաղաքները  
մանաւանդ այս աւարառութեանց կենթակայ  
եղան . որով անոնց մէջ բնակող Հայ ժողովրդ-  
դեան մեծագոյն մասը յետին թշուառութեան  
մէջ ինկալով , անձարացած և յուսահատած ,  
թողուցին իրենց հայրենի երկիրները , և չը-  
մեռնելու չափ ապրուստ մը ձարելու համար  
ատդիս անգին ցրուեցան , յանձն առնելով  
մինչեւ ամենաստորին ծառայութիւնները :

Այս վնասուող անձանց կարգն էր նաեւ  
մահաւետի Պօղոս անուանով հայազգի վաճառա-  
կանը , բնիկ Արսա քաղաքէն , որ յետին ազ-  
քատութեան մէջ եկաւ ի Ա. Պօլիս , թերեւս  
այն յուսով որ հոն մխիթարութիւն մը իր Աղ-  
պէն , և ձեռնառութիւն մը իրեն ծանօթ  
քաղաքակիցներէն գտնել կարողանայ : Հաւա-

նակին կը թուի թէ մահատեսի Պօղոսի ծանօթ  
քաղաքակիցներն ալ ուրիշ անգամի աւարտ  
առ թիւններէ ասիոյու ամ, չքաւորութեամբ  
Պօլիս դիմած ըլլան, և հոն իրենց յաջողա  
կութեամբը զարգացած :

Մահատեսի Պօղոս իր յոյսէն չլքիպէցաւ . և  
շատանց Պօլիս գաղթած, և Վայր Ալեքզեյուց  
Տէր Յակոբ քահանային փեսայացած իր մէկ  
հաւատարիմը, կարապետ կարսեցին, գտաւ  
որ կտաւագործ ըլլալով՝ գործարան և սենեակ  
ունէր ի կէտիկ բաշա : Մահատեսի Պօղոս մեծ  
ընդունելութիւն գտաւ իր բարեկամէն և ա  
նոց աներէն . և կտաւներ յանձնուեցան իրեն  
որ շահայն և քաղաքին փողոցները շքեւով  
վաճառէ, որով իրեն ըստ բաւախանին ասը  
յուստ մը ձարել սկսաւ :

Քիչ ատենէն մահատեսի Պօղոս իր բարե  
համբաւով և գործունէութեամբը ծանօթա  
ցաւ գրեթէ շատերուն, մինչև օտարազի  
պատուաւոր անձանց ալ, և ամէնքն ալ զինքը  
Պեղծի Պօղոս անունով ճանչնալ սկսան, սա  
կէց մնաց իր մականունը Պեղծեան : Տէր Յա  
կոբ քահանայն և ս Պեղծի Պօղոսին գործուն  
եաց և ժրջան ընթացքը և պարկեշտ վարքը  
տեսնելով, փաւթացաւ իր թառը, Վառվառէ,  
շերտիչեալ կտաւագործ կարապետին գուսարը  
կնութեան առ Պեղծի Պօղոսին : Հինգ վեց  
ամիս աներոջը առնել մնայէն զինի, Պեղծեան  
Պօղոս երաւ Ալեքիգարու գնաց, ա հոն իր  
մէկ բարեկամին՝ Պեղծի - Վարտահամին առնելը

բնակեցաւ հանդերձ իր ընտանեօքը, ուր ծը-  
 նաւ իր անգրանիկ որդին ի 10 տարիլի 1771,  
 և Սուրբ աւաղանէն Յարութիւն կոչուեցաւ,  
 վասն զի Քրիստոսի յարութեան օրերն էին:  
 Յետոյ Պէղձեան Պօղոս երկու աղջիկ զաւակ և ու-  
 ունեցաւ, Սարիամ և Համասիլուս անունով:  
 Պէղձեան Յարութիւն եօթ տարեկան էր,  
 երբ իր ժամանակին Սայր դպրոցը դրուեցաւ,  
 որ նոր բացուած, և առաջին դպրոցն էր. ուր  
 հինգ տարի կենալով հազիւ թէ հասարակ ըն-  
 թերցանութիւն մը և գիր գրել մը սորվեցաւ,  
 և տասներկու տարեկան ըլլալուն պէս դպրո-  
 ցէն հանուելով մետաքսավաճառի մը քով  
 աշկերտ մտաւ: Պէղձեան Յարութիւն ժա-  
 մանակին բերմունքէն եթէ չկրցաւ իր հրաշա-  
 լի բնածիր հանձարը փայլեցնել ուսմանց և  
 գիտութեանց մէջ, տակոյն շուկայի մէջ իր  
 առեւտրական յաջողակութեամբը այնչափ փայ-  
 լեցաւ, և իր սրամտութեամբը և նրբանկատ  
 գործունէութեամբը այնչափ զարգացաւ, որ  
 տասներկու տարի շարունակ իր մետաքսավա-  
 ճառ վարսէտին հետ ընկերութեամբ առեւ-  
 տրի զբաղելէն զինի, յաջողեցաւ նաեւ մե-  
 տաքսավաճառի առանձին սենեակ բանալ, և  
 փաճառականաց քով ալ բարի անուն և համ-  
 բաւ ստանալ, միանգամայն սիրելի ըլլալով  
 թէ իրմէ առուտուր ընող այլևայլ ազգի ան-  
 ձերուն, և թէ միևնոյն շուկայի մէջ իրեն  
 դրացի եղող հրէայ մետաքսավաճառներուն,  
 Այս մեծ հանձարով և աշխոյժ գործունէ-

աւթեամբը դարձեալ երբէք յանձնապատան  
 սգի չէր երեւէր Պէզճեան Յարութիւնին վը  
 րայ . իր պատանեկան եռանդուն հասակին  
 մէջ բոլոր իր գործունեւ թիւնները յաջողե  
 ցրնելու յոյսն աւ Մտուած դրած , և անոր  
 միայն ապաւինած էր : Չ երմեռանդ էր յոյժ  
 Ս . Կէղեցւոյ Մտուածային պաշտամանց  
 մէջ , մահկանացու պատերաւն աղղոյ և երկու  
 յին միեթագրութեամբ զօրութիւն սուող այն  
 հոգեւոր սրբանուէր ժողովանոց անմեռնչ  
 ձայնակցելու հանապապրդելէ չէր դադարեր :  
 Իր հայրենական սուրբութեանց անխտոր հե  
 տեւող ըլլալով , Սուրբ Կարապետի համար  
 սեպհական օրերու պահքը եօթը տարի անընդ  
 հաս պահէլէն զկնի , փութաց ախաի երթալ  
 ի Կեսարիա սրանչելագործ Սրբոյն վանքը :  
 Թէ հոգեւոր և թէ մարմնաւոր այս ան  
 զուգական ձիրքերով վայլող անձի մը՝ ապա  
 գայ ժամանակի մէջ խիստ փառաւորութիւն  
 և եղական քարերուս մ'ըլլալու արժանաւ  
 րութիւնը ասանապուն փայտ ու իր դարմանոց :

### Գ Լ Ո Ւ Ի Բ .

ՊԵՋՃԵԱՆ ՅԼԲՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԱՅԱԼՈՒԹԵԱՆ

ՊԱՇՏՕՆՈՎ ԳՐԱՏՆԷ ՏԻԻԶԵԱՆՅ ԲՈՎ

Սահտեսի Պօզոս իր որդւոյն յաջողակու  
 թիւնը և օր ըստ օրէ յառաջագիմութիւնը


տեսաւ . և իր ծերութեանը մէջ միտիժարուած  
կնքեց իր մահկանացու ընթացքը , իրեն յա-  
ջորդ թողլով իր բարեյիշատակ Յարութիւն  
որդին՝ իմամածու և հաւատար իւր տանը .  
որ իր մօրը և երկու քոյրերուն հետ Լէնիգա-  
բու կը բնակէր :

1802 ին Տիւզեան Յովհաննէս չէլեպին  
երբ Տերութեան գանձէն վարձեց մետաքսի  
մաքսը , հարկադրուեցաւ շուկային մէջ գրաւ  
ոնենակ մը բանալ , և այն դրասենեակին ալ կա-  
ռավարելու յարմար և վարժ և մետաքսի իւ-  
րաբանչիւր տեսակներուն և անոնց վաճառ-  
մանը տեղեակ անձ մը փնտուել . և հարցու-  
վորձ ընելով կ'ընտրէ Պէզճեան Յարութիւնը ,  
և զանի գործակալ կը կարգէ այս մեծ պաշտօ-  
նին վրայ :

Չիաբուեցաւ Յովհաննէս չէլեպին իր  
այս ընտրութեանը մէջ . և ամէն բանի մէջ  
Պէզճեանի ժրաջանութիւնը և աշարջութիւ-  
նը և հաւատարիմ ծառայութիւնը նկատելով ,  
իր համարումը և սերն ալ օր ըստ օրէ անսր  
վրայ աւելցնել սկսաւ :

Այն միջոցներուն Պէզճեան իր բնակու-  
թիւնը Լէնիգաբուէն Գումգաբու փոխեց .  
և հոն Պապայեան Կարապետ աղային տունը  
բնակեցաւ . ուր իր երկու քոյրերուն հարսնի-  
քըն ալ կատարեց , օրիորդ Մարիամը՝ Նուբեան  
Յովհաննէս աղային տալով , և մէկ տարի ետքը՝  
օրիորդ Համասփիւռը՝ Սերկէտեան Գէորդ  
աղային :

Հետզհետե Պէղծեան մեծ համբաւ և համարում ստացաւ Լէրոսպացի վաճառակա- նաց քով ալ, իբրև ակնաւոր ու իր խոստ մանց մէջ հաստատուն մեկը . որով բեհեղև և ուրիշ ասոր նման եւրոպական ապրանքներու սենեակ մը բացաւ . այս սենեակին գործակալ հարգեց Լուրեան Զովհաննէս և Մէրիէսեան Վեդրդ իւր երկու քեռայրները :



### Գ Լ Ո Ւ Ի Գ .

ՊԵՂԾԵԱՆԻ ԽՈՏԱԿԱՆ ԶԱՆՔՈՎ ԶՈՐՍ ԱԶՆՈՒԱԿԱՆ  
ԱՆԶԱՆՅ ՍԱՀՈՒՐՆԵՆ ԵԶԱՏՈՒԻԼԸ .

1807 Մայիսի 28 ին Լէնիցերիներն ոտք ե- լան . և հինգշաբթի օր մը Տէրութեան ակա- նաւոր անձերէն տասներկու հոգի սպաննե- լով, հեռեւեալ օրը՝ ուրբաթ Վէլիքի փոխա- նորդ Սուսա փաշայի աւաջնորդութեամբը՝ Սուրբան Սէլիմն իջուցին թափաւորական ա- թուէն, և Սուրբան Համիտի որդի Սուրբան Սուսդաֆայ Գ . թափաւոր դրին :

Ըսանկ ալէկոծեալ վիճակի մէջ՝ այս ասպու- տամբներուն գլխաւորաց ձեռքն էր գրեթէ բոլոր իշխանութիւն և բացարձակ հրամանա- տարութիւն . և գլուրին է մակաբերելը թէ՛ երբ աւերութեան նախարարներն ահադողն մէջ կը տագնապին . հպատակներն ինչ օարսաւ փելի սրարագաներու մէջ կը ծփին : Լէւ ալ

դարեւ չոտ չանցաւ, երբ ապտտամբ Աշենի-  
 շէրիներուն գլխաւորները խորհուրդ ըրին որ  
 իւրարանշիւր հարստակ ազգերէն մէյմէկ երե-  
 ւելի և հարուստ անձինք սպաննեն, և անոնց  
 ինչքն աւարի ամն. որով իբր թէ իրենց ոյ-  
 ժը և զօրութիւնը յույրցած, և Վ. Պօլսոյ  
 բնակիչները վախցուցած ըլլան:

Այս գաղանտարոյ անգթութեան զոհ ը-  
 լալու համար ընտրուեցան Հայոցմէ՝ Աղած  
 աստուր ըսուած հացագործ Զարութիւն ամի-  
 րան, Հոռմէական Հայոցմէ՝ Տիւղեան Եով-  
 հաննէս չէլէպին, Զունացմէ՝ գինեպան  
 Թոսորաբին, և Հրեկոցմէ՝ շապճի Մուսին:  
 Ասոնց մահուան դատակնիքը Աշենիէրիք ի-  
 րենց գատաւորէն առնելով, կ'երթան Աթ-  
 մէյտանիի զօրանոցը, որպէսզի այն չորս ան-  
 մեղ գատաւորտեալներն ալ հան բերեն, և  
 կտոր կտոր ընելով սպաննեն. ինչպէս սովորու-  
 թիւն ունէին իրենց ապտտամբութեան ժա-  
 մանակը այս կերպով սպաննելու՝ որն որ  
 ուզէին:

Պէղձեան Զարութիւն այս լուրն առ-  
 նելուն պէս, կը փութայ առանց ժա-  
 մանակ կորսնցնելու՝ երթալ գանելու-  
 իր քեռայրը Աուրեան Զովհաննէս, որ  
 ապտտամբաց գլխաւոր Վաղանձը հաճի Մուս-  
 դաֆային ծանօթն էր, և այն չորս անձինքը  
 անպարտ մահուրնէ ազատելու համար անոր  
 հետ միտքանելով՝ կ'երթան Աթմէյտանին:  
 Հոն՝ այն բազմամբոխ հրապարակին մէջ կը

գրտնէն հաճի Կուսդաֆա եղևնաւ որ և դա-  
ժան մարդը . և մէկ կողմ առնելով՝ կրտանին  
զօրանոցին մէջ սենեակ մը . ուր Պէզճեան ար-  
աստուարից աչօք և բազմահայց թախանձա-  
նօք այն չորս անձանց արեան անպարտ թափ-  
ուելուն վրայ խօսելով, և մեծամեծ պարգև-  
ներ և շատ սակի խստամտարով, հարկը հազ  
հաճի Կուսդաֆային միտքն ի գթու թխն և  
ի մարդասիրութիւն շարժել կը կարողանայ :

Մնտնէն հաճի Կուսդաֆա գուրս կ'ելիէ  
տեղէն, և Վթմէյտանի թէրթիպ ճամփան  
կը մտնէ . հոն իր գլխաւոր ընկերակիցները  
համոզելով՝ չորս աղետական անձանց մահ-  
ուան դատակնիքը կը պատուեն, բազմութեան  
մէջ մտնելով կանչել տալով թէ . Մյն չորս ան-  
ձիկքը՝ զօրոնք սպաննելու պատրաստուած է-  
լիք, աղէկ տուգեցիկք՝ որ մահուան արժա-  
նի բան մը գործած չեն, ուստի ի շնորհս Վէ-  
նիչէրի ( ) ճագին թող կուտամք որ ապրին :

Պէզճեան այս բերկրաւիթ ուեռտան իա-  
կոյն տարաւ Տիւղեան Յովհաննէս չէլէպիին,  
որ ահաւ դողով պատած ժամ առ ժամ կ'ըստա-  
սէր անօրէն դահճաց գալստեանը՝ և մի ըստ  
միտքէ եղածն անոր կը պատմէ : Տիւղեան չէ-  
լէպիին այս անակնունելի ազատմանը վրայ մե-  
ծապէս ուրախացած փառք կուտայ Մտուծոյ  
որ զիրենք փրկեց այն անկարծելի ու դառն  
մահու ընէն . և զՊէզճեանն եւս՝ անոր այս  
տիրասէր և հաւատարիմ ծառայութեանը,  
մանաւանդ թէ գործունեաց ու աղնիւ բնա-

և որս թեանք համար վարձատրել ու զելով,  
 կանչեց իւր վեց սրբերը, որոնց անուններն  
 էին Կրկոս, Սարգիս, Կարապետ, Միքայել,  
 Յակոբ, Պօղոս, և Պեղճեանին բարերարու  
 թիւնն ու բարեորաւ թիւնը անոնց պատմելով  
 կ'ըսէ. Ինչպէս դուք իմ զուակներս էք, նոյն  
 պէս ալ աս ( Պեղճեան ) իմ զուակս է, և ձեր  
 եղբայրը. ուստի յատկապէս կը պատուիրեմ  
 ձեզ որ իմ մահուընէս ետքը դարձեալ եղբոր  
 տեղ պիտի գնէք ասի, և անոր խրատներուն  
 և հրահանգաց ակննջ պիտի գնէք, վասն զի  
 խահապան և ուշիմ և բարեոխրո մարդ մ'է,  
 և ամեն բանի յաջողակ: Հնազանդեցան այս  
 հայրական պատուէրին անոր ազնուական որ  
 գիրք, և այնուհետեւ միշտ ելեայր կանչել լու  
 կրտան. և գրեթէ ամեն սակն խորհուրդ կը  
 հարցնէին անոր իրենց գործոց մասին, և ա  
 նոր խորհրդով կը շարժէին:

Արանի թէ անխախտ բռնուէր այս հայ  
 բանն պատուէրը՝ զոր ձերբանազարդ հայր  
 մը իր փառաւոր զարմին սպառաց ամենատը  
 խուր և ցաւ ալի մի՞ձաղը կանխատեսելով և  
 գգայով մը աւսած կ'երեւի իր սրբւոց. և  
 չարակամութիւնը ու նախանձը չթմրադրէր  
 զուրիչները՝ պղատելու այն ազնուական զու  
 ւակաց մարբերը, ուրիշ մեծ ու կարուստ բա  
 պառնացող ազեւ մը հետեւեցաւ Տիւղեան  
 գարմին գլխուն. Ինչպէս յետոյ պիտի տես  
 նենք:

## Գ Լ ՈՒ Խ Գ .

ՊԵՋՃԵՒՆԻ ՀԱՍՏԱՏԻՄ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ . ԵՒ  
ԼՆՈՐ ԱՌԱՋԻՆ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՆ Ի ԽԱՐԻԱԼ

Ընտելեալ Պեղձեան իր հաւատարմ  
ժառայութիւններով կ'առաքինանար միշտ :  
Չէլէպիին համակրութիւնը և հայրական սէ-  
րը զինքն աւելի կը զօրացնէին . և իր բնածիր  
հանձարովը շատ դէպքերու և գործերու մէջ  
նշանաւոր եղած է ի նորաստ Չէլէպիին : Այլ  
ժանաւոր ժառայութիւնն իր արժանաւոր  
վարձքն երբ կ'ընդունի , տարակոյս չկայ որ  
ժառայութիւնն ընողին և ընդունողին մէջ  
փոխադարձաբար այնպիսի սերտ կապակցու-  
թիւն մը կը մտնէ , որուն բարեկամական նր-  
շանակութիւն մը ասլ կ'արժէ : Այսպէս եր  
նաև Տիւղեանի և Պեղձեանի համար . Տիւղե-  
անի բարեպաշտութիւնը և Պեղձեանի հաւա-  
տարմութիւնը յամենայնի կը փայլին : Պեղ-  
ձեան իր աշախարհ և դպոյշ բնաւ որութեանը  
վրայ պարճենկասութիւն մ'ալ չէր ցուցնէր  
բնաւ , և ոչ ալ ինքնասաւանաութեան սգի . կը  
ջանար ուրիշներու նախանձն իր վրայ չչարժե-  
լու :

Պեղձեանի տիրաւէր և հանձարեղ ժառա-  
յութիւններուն օրինակներ շատ պատասճաճ-  
էն . բայց անսնցմէ մէկը միայն յաւաջ բերէնք :  
Երբ Անիչէրինեքէն սպաննաւած տասնեքիւ-  
աւազ անձանց ինչքը ի վաճառ հանելու ար-  
քունական հրաման եղաւ , որպէս զի անսնց-

մէ պահանջք ունեցողներն երթան վաճառ-  
 աւածներէն առնեն, և մնացեալը յարքունիս  
 գրաւուի. Յովհաննէս չէլէպին ալ անոնց ա-  
 մէն մէկէն շատ կամ քիչ առնելիք սենեկալով  
 իր կողմէն Պէղծեանը խրքիկեց որ գնաց և  
 ձեռքն ունեցած պարտաւոր հակներուն հա-  
 մեմատ շատ մը ազամանդներ և Հնդկաց  
 ցլիսիներ (շալ) առնելով բերաւ Չէլէպին:  
 Արամանդները պահեց Չէլէպին, վասն զի  
 թէ Սուլթանին և թէ փաշաներուն համար  
 շատ անգամ կը փնտառէին. իսկ ցլիսիները  
 սրահերը հարկ մը չունենալով, ուղեց որ ա-  
 նոնցմով իր սրարքերը վճարէ:

Քանի մը ամիս յառաջ Չէլէպին երկու  
 հարիւր հազար զուրուշ փոխ առած էր Պա-  
 պայեանն Ա. կարապետ աղայէն, որ երևելի  
 և համբաւաւոր էր շուկային մէջ. Պէղծեան  
 Պապայեանին գնաց և ուղեց որ Չէլէպին  
 պարտուց փոխարէն այն ցլիսիներն անոր տայ,  
 համոզելով զինքը թէ Ժամանակ հուզայ որ  
 շատ կարևորութիւն կ'ունենայ անանկ ցլիսի-  
 ներու, և ան ատեն չկրնար գտնել. Պապայ-  
 եան մերժեց. Պէղծեան ալ չէր ուղեր որ դա-  
 տարկաձեռն ետ դառնայ. ուստի Պապայեանը՝  
 զոր կը սիրէր՝ ազագայ շահու մը համար՝ նայն  
 միջոցին համոզելու հետք մը մտածեց: Ար-  
 քունի պաշտօններէն հինգ անձիք կանչեց, և  
 անոնց պարգև խաստանալով՝ առաջարկեց որ  
 շուկայն Պապայեանին սենեակը երթան և  
 Հնդկաց ցլիսի փնտառեն, իբր թէ արքունի

պաշտօտականաց համար խիստ կարևոր եղած  
 ըլլան : Վեղճեանին հրահանգին համեմատ  
 հինգն ալ հետզհետէ Պապայեանին երթալով  
 ցրփսի փնտռեցին , և այն աստիճան որով  
 ամբողջումով ուսկէ արդեօք գտնել կարելի ըլ-  
 լալը կը հարցնէին անոր , որ Պապայեան հե-  
 տեւեալ օրը փութաց , կանչել առաւ Վեղճեա-  
 նը , և ցփոսները թախանձանօք խնդրեց :  
 Վեղճեան առ երեսս դժուարութիւն մը ցու-  
 ցնելէն զկնի , վերջապէս ի շնորհս բարեկա-  
 մութեան հնարք մը գտած ձևացուց , զանոնք  
 ուրիշ գնել ուղղներու ձեռքէն առնելու և  
 դարձեալ իրեն բերելու : Այս կերպով Տիւղ-  
 եան Չէլէպիին պարտամուրհակը ետ առնե-  
 լէն զատ , նաև բաւական գումար մը դրամ  
 ալ բերաւ յանձնեց Տիւղեանին : Պապայեան  
 ալ շնորհակցաւ , վասն զի քիչ ատենէն ետքը  
 երբ Սուլթան Վահմուտ թագաւորական գահն  
 ելաւ , այնչափ փնտռուեցան այն տեսակ ցրփ-  
 սիները , որ Պապայեան կրկնապատիկ շահե-  
 ցաւ անոնցմէ , և բոլորով սրախ ներեց Վեղ-  
 ճեանին , ուսկէց առաջ սասաիկ վշտացած էր :  
 Այն միջոցները՝ երբ Վեղճեան զբօանաց  
 համար խորդալ գիւղը գնաց , տեսնելով  
 գիւղացւոց հիւրասէր բնաւորութիւնը , ու-  
 ղեց իր բարեսրտութեանը մէկ յիշատակը թո-  
 ղուլ հոն . և որպէս զի այն ալ գիւղացւոց  
 ուղածն ըլլայ , հարցուց անոնց թէ ի՞նչ բանի  
 պէտք ունին : Խեղճ գիւղացիները մեծ ու-  
 բախութեամբ իմացուցին թէ՛ գիւղին եկե-

զեցին քայքայելու վասյ է, և կարողութիւն  
 չունին զայն նարսպելու, և թէ դպրոց չունին,  
 որուն համար իրենց տղաքներն առաւօտուր  
 նէ մինչեւ երեկոյ փողոցներն աագիս անդին  
 խաղալով՝ ժամանակնին պարսպ կ'անցընեն:  
 Պէզճեան խոստանալով անոնց բաղձանիքը յօ-  
 ժարութեամբ կատարել, եկաւ Պօլիս, և  
 Տիւզեան Չէլէպիին միջոցաւ Խարթալի եւ  
 կեղեցւոյն նորագութեան, դպրոցի մը շինու-  
 թեան, և եկեղեցւոյն բակին մէջ աղբիւր մը  
 հաստատուելու հրովարտակն ստացած՝ վերա-  
 գարձաւ ի Խարթալ, հետը սանկելով նաև  
 Տէփլիս հայապի ճարտարապետը, և թէ  
 եկեղեցին թէ դպրոցը և թէ աղբիւրն իր քը-  
 սակէն շինել առաւ, և իր անուինը հաշակել  
 չուզելով, Տիւզեանին կողմէն շինել առած  
 ձեացաւ: Մշտակս յիշատակաց արժանի բա-  
 րեգործութեամբ մը Խարթալը սց ուրախու-  
 թեանը և միսթարութեանը պատճառ կ'ըլ-  
 լայ, ինք եւս բաժանորդ ըլլալով անոնց բերի-  
 րութեանը, և կը միսթարութի այն վեհանձն  
 ժողովը, որ ապագայ ժամանակին մէջ իր ան-  
 զուգահան բարեգործութիւններովը առաջին  
 տեղը պիտի բռնէր Մզգային Քարեքորաց  
 գառուն մէջ:

## Գ Լ Ս Ի Խ Ե :

Ս. ԵՐՈՒՍԱԿԱՆՄԱՅ Ս. ՅԱԿՈԲԱՅ ՎԻՆՈՒՑ ԽՆԴԻՐԸ :  
ԱՐԻՈՒՆԻ ՄՈՒՊԱՆԵԱՅԻ ՊԱՇՏՈՆԸ ՊԵՋՃԵԱՆԻՆ  
ՅԱՆՉՆՈՒՒԼԸ

1809ին, Սուլթանի Մահմուտի թագաւո-  
րու թեան երկրորդ տարին, Քոնստանդուպոլիս քաղաքի  
փառան մեծ եպարքոս կարգուած էր ի Վ. Պո-  
լիս, որ բնութեամբ ժամաւ և ազահ մարդ մը  
ըլլալով, առեւ անիրաւութիւն կը գործէր,  
միայն թէ կաշառքը հարուստ և գահացուցիչ  
ըլլար: (Յայեկը որ պատահութեան կը փնտր-  
ուէին Ս. Արուսաղեմայ վանուց՝ կերպով մը  
տիրանալու, խեղցեւ շատ կաշառք և ընծայ մա-  
տուցին անոր՝ իրենց կարգը գրաւելու համար:

Արուստ փառան զիջաւ անոնց լսելու, և  
փութաց Սուլթանին մատուցանելու անոնց  
խնդիրը, իբր թէ Ս. Արուսաղեմայ մէջ  
գտնուած Ս. Յակոբայ վանքը շատ առաջ  
Յունաց ըլլալով, ետքերը Հայոց ձեռքն ան-  
ցեր է կաշառքի ղորութեամբ, ու մինչև հի-  
մայ անանկ մնացած է, ուստի Յայեք հիմա  
Սուլթանին արգարադատ և բարեխնամ կա-  
ռավարութեան վրայ վստահացած կը խնդրեն  
որ նոյն վանքն իրենց դաւնայ, և ստոր հա-  
մար ալ հարգար քօակ նաւ իրելու պատրաստ են  
արքունի գանձուն:

Ետք խնամ Սուլթանն ուղեւով այս եղե-  
լութեան վրայ ստոյգ և հաւաստարիմ տեղե-

կութիւններ հաւաքել, սկսաւ գործը երկա-  
րել, մինչև տասն և չորս ամիս :

(Զարութիւն Պէղձեան իմանալով այդ բա-  
նըս, իսկայն զեկոյց Զովհաննէս Արքապանին,  
որ նոյն միջոցին Կ. Պօլսոյ Պատրիարք էր. և  
անոր կողմանէ երթալով առ Զովհաննէս շե-  
լէպին Տիւղեան, խնդրեց որ իր հզօր ազդե-  
ցութեամբն օգնէ Ազգին այս դէպքին մէջ :  
Զովհաննէս Չէլէպին գիտնալով որ մեծ Ա-  
պարգասը քանի մ'ամիսէն Պաւսոյ դէմ պա-  
տերազմի երթալու կը պատրաստուէր, տա-  
ժամն լռեց, և երբ Ապարգասը Պօլսէն հե-  
ռացաւ, ու Եպիք Մեմէտ փաշան՝ փողերա-  
նոցի նախկին վերապետուչը մեծ Ապարգասի  
փոխանօրդ նստեցաւ, Տիւղեան հոգ տարաւ  
անոր սիրաւ Հայոց կողմը յանկուցանելու,  
և անոր խորհրդով աղերսագիր տուին  
Հայք Սուլթանին, յայանելով Զուհայ ազ-  
գին անիրաւ պահանջումը, և այն վստույց  
Հայոց ազգին ըլլալը, Կօմեր Խալիֆայի ամի-  
րապետութեան, Ազխարասի Սուլթան Սալա-  
էտտինի, և Ասիղ-ը կոչուած Սուլթան Աեւիմ  
Մաջլինին օրերէն ի վեր, անոնց յատուկ հրա-  
վարտանկերովը :

Արկրորդ անգամ մ'ալ աղերսագիր տրուե-  
ցաւ Սուլթանին, որ հրաման ըրաւ անուշառ-  
դատ ըլլալու Հայոց և Զուհայ մէջ Ենիիւ-  
լաճի դուռը, ուր քանի մ'ամիս հարցուփորձ  
ըլլալէն զինի՝ վճիւր գրուեցաւ Սուլթանին :  
Սուլթանը հրաման ըրաւ յատուկ հրովարտա-

կաւ որ Ս. Գալորայ վանքը Հայոց սեպհա-  
 կան է և մնայ այնպէս, սյլ և հրաման ըլլաւ  
 որ Ս. Արտասաղեմայ մէջ գանուած բոլոր  
 ուխտաւորները սրտաւ ին, թէ սրոնք են  
 Հայոց կամ Գալորայ կամ Գաւանկայ սեպհա-  
 կանութիւնները. կամ սրոնք մէջ ամէնքն ալ  
 բաժին աւնին. և ինչ կերպով հարգողացու-  
 թիւն աւնին մէկմէկու հետ, ուխտի և պա-  
 տարագի ինչ արտօնութիւններ սահմանուած  
 են: Այս ամէնք հրովարտակին մէջ նշանակե-  
 լով, երգմամբ յանուն Մահմեդի և անոր բա-  
 նադրանօրը հրովարտակը կնքեց Սուլթանը, որ-  
 պէս զի այնուհետեւ բնաւ փոփոխութիւն  
 չըլլայ:

Մեծ եղաւ Հայոցս ուրախութիւնը, և  
 Գալհաննէս Պատրիարք օրհնեց Տիւղեան  
 գերգատանը և Աղլատեր Վեղճեան Գարու-  
 թիւն աղան, և բոլոր անոնք՝ որ այս մասին  
 Աղլին իրաւանց պաշտպան կեցան, ու ամէն  
 ճիգ թափեցին:

Մեծաբոյի մարտին վարձակալութեան ժա-  
 մանակն երբ լրացաւ, Գալհաննէս շէլէպի  
 Վեղճեանին հաշիւը քննելով, և անոր հաւա-  
 տարիմ և աշարուրջ ծառայութիւնը աննե-  
 լով, բոլոր իր առանձին և արտաքին գործոց,  
 և ելու մտից և միւս պաշտօնատարաց վրայ  
 վերահայցու և տեսուչ կարգեց զինքը: Արիւ-  
 տարի ետքը Տիւղեան արքայի Ծառայի  
 պաշտօնակալ կարգեց Վեղճեանը Աշարը խանին  
 մէջ, իր ասնք անշարթիւնն ալ վրան թողով:  
 Եւ սրովհետեւ Վեղճեան ազատ էր ամէն ե.

րեկոյ իր տունն երթալու, ուստի պատշաճ սեպեց իրեն փոխանորդ՝ Տիւզեանց տանը անտես և հոգաբարձու կարգել Քիլիարձ Մարտիրոսը, և Չէլէպիին ետեւէն գնացող սարասաւոր Քիլի Յովհաննէսը, որ իր ծանօթն ու հաւատարիմն էին. և ինքը շաբաթն անգամ մը կամ երկու կ'երթար այցելութիւն կ'ընէր անոնց, և հարկ տեսած հրահանգը կուտար:

Սոյն միջոցին մեռաւ Տիւզեան Յովհաննէս ազնուական չէլէպին, բարի ու առաքինասէր վարուք և Աստուածահաճոյ գործերով իր մահկանացու ընթացքը կնքելով, իւր բարեխառութեան ժառանգ թողլով վեց մանչ և վեց աղջիկ զաւակներ:

Տարի մ'ետքը՝ Յովհաննէս Չէլէպիին քրտակից Աստուածասէր Մարիամ տիկինը իր Գրիգոր և Սարգիս սրբւոյց ամուսնութեան հանգէսը կատարեց խիստ փառաւորութեամբ, և հազիւ վեց ամիս անցած էր, մեռաւ ինքն ալ, այն բարեպաշտ Տիկինը, որ շատ տնանկ գերդաստաններու և կարօտեալներու թոշակ կատարած էր, և կը խնամէր զանոնք: Այս տարածամ կորստեան վրայ սաստիկ սգացին հանգուցեղն սրղիքը և աղգակահիքը և բոլոր ծանօթ և անծանօթ աղգայիք:

Այնուհետեւ Գրիգոր և Սարգիս չէլէպիներն սկսան հայրաբար կառավարել իրենց բոլոր եղբարքը և քոյրերը և ամէն պարագաները, արքունի փողերանոցին խնամակալութեանը ամէն կերպով զգուշաւոր փոյթ ունէ-

ին խորհրդով Պեղձեան Յարութիւնի, զոր վայրկեան մ'իրենց քովէն չէին հեռացներ : Կօրհնէր Աստուած անոնց բարի սիրտը, որ միշտ առատ էր իրենց թշուառ Ազգին վրայ . և կը պահէր ամէն թշնամանքներէ և զբարատութիւններէ, որոնց մէջ միշտ կը ծփային նոյն ժամանակի սոյնօրինակ պաշտօնատար բարձրաստիճան Հայերը :

Օր մը ցաւալի դիպումը մը տեղի ունեցաւ փողերանոցին մէջ : Պարատական ներքինի մը Բայեար անուն իւր սուրը Սարգիս չէլէպիին տաւած էր ոսկեղօժեղ տալու համար, բայց Չէլէպիին գրեթէ մոռցած քանի մ'ամիս յապաղեցաւ ցած էր անոր խնդիրը : Ասոր վրայ ներքինին զայրացած, փողերանոց կուգայ և Սարգիս չէլէպիին կը փնտռէ, ու զամբին պէս զայն գանակածել միտքը դնելով : Հոն Չէլէպիին չգանելով, Պեղձեանին յոխորտաբար հարցումներ կ'ընէ . Պեղձեան չէլէպիին դէմ անարգական խօսքերուն չհանդուրժելով, գոհացուցիչ կերպով շարտասխաններ, ու ստի ներքինին կաողած կ'ըսկսի ձեռքի խորազանով չարաչար ծեծել Պեղձեանը : Պեղձեան տեսնելով որ աղատելու ճար չկայ, ներքինիին վրայ կը յարձակի ու գետնին կը զարնէ, կը փռէ . այս միջոցին ամէն կողմէ օգնութեան կը հասնին և երկուքն իրարմէ կը զատեն : Յետոյ երբ Սարգիս չէլէպիին եկաւ, խնացաւ եղածը, և արքունի պալատն երթալով բողոքեց ներքինապետին, և արժանաւորապէս պատուհասել առաւ այն անօրէն ներքինին : Սակայն Պեղ

ճեան իր գլխուն կերած խարաղանէն տատիկ  
տազնապելով գնաց տուն, և թէպէտ ամիս մը  
դարմանուեցաւ, բայց մերթ ընդ մերթ դը-  
խուեցաւ և յնցում իրմէ չպակտեցան գրեթէ  
մինչև մահը :

## Գ Լ ՈՒ Խ Օ :

ՊԵՋՃԵՆՆ ԿԸ ՀՐԱԺԱՐԻ ՊԱՇՏՕՆԵՆ : — ՏԻՋԵՆՆԻՔ  
ԿԸ ԲԱՆՏԱՐԿՈՒԻՆ . ԵՒ ՊԵՋՃԵՆՆ ՓՈՂԵՐԱՆՈՑԻ  
ՊԱՇՏՕՆԵԱՅ Կ'ԸՆՏՐՈՒԻ :

(1817) Փողերանոցին կառավարական ըն-  
թացքը օր ըստ օրէ վասթարանալու վրայ էր .  
հոն գանուող պաշտօնակալաց ղեղխ և շոյլ  
բարքը կանխագուշակք էին այն աղիտից, որ  
Տիւղեանց գերդաստանին կործանումը պիտի  
տային :

Պէղճեանի հեռատեսութիւնը զինքն ան-  
հանգիստ կ'ընէր, գործերուն ընթացքին գոհ  
չէր, և օր մը պատեհ գանելով ղեկոյց Վրի-  
գոր և Սարգիս չէլէպիներուն թէ՛ ինչ անհո-  
գութիւն և ինչ ղեղխութիւն կար փողերա-  
նոցին պաշտօնակալաց վրայ, որոնք ամէն  
շաբթու գլուխ առանց հաշուի քսակնին ու-  
կուով լեցնելով կ'երթային Պէյօղլու, Պէյիւք-  
անրէ և Պէլկրատ գիւղերը վատնելու, և  
բոլոր ասկէ ինչ աղէտալի հետեանք կրնար գու-  
շակուիլ, եթէ շուտով դարման չտարուի :

Չէլէպիներն զգացին Պէղճեանին ըսած.

ներքև, և վրդալեցան, և փութթով սրտչեցին  
 բարբնալ փողերանոցի դորձէն դագրեցնելու,  
 և Վուգահեային բոլոր գործը Պեղձեանին  
 յանձնելու, որ կենար ան ասեն մինչև մէկ  
 տարի ամէն բան իր նախկին վիճակը բերելու:  
 Աւասի փութացին ժողով դումարելու ի Վու-  
 յու չէշմէ՝ իրենց ծովեղերեսց բնակարանիւ.  
 և հսն բոլոր պաշտօնակալաց առջև դրին ի-  
 բենց սրտումը: Կրեթէ ամէնքն ալ դժկամա-  
 կելով զայրացան, ոչ թէ իրենց շապլութիւնը  
 և անհոգութիւնը յայանուելով փողերանոցի  
 դորձէն դագրելուն վրայ, այլ առաւել Պեղ-  
 ձեանին վրայ, որուն պաշտօն պիտի արուեր  
 թէ իրենց շապլութեամբ կորուսածներուն  
 տեղը լեցնելու, և թէ այնուհետև շապլ-  
 շապրին իրենց սորվեցնելու: Վասնզի թէև  
 սրաշտօնէ պիտի դագրէին, բայց շաբթէ շա-  
 բաթ միայն իրենց ասն ծախուց բաւականա-  
 ցող դումարն անխափան փողերանոցէն ստա-  
 նալու շնորհն իրենց պիտի ըլլար Չէլեպինե-  
 բուն կողմէն: Պաշտօնակալներն այս նախա-  
 տանաց չհանդուրժեցին, մանաւանդ որ Հայ  
 մը պիտի բաւականանար այս վերանորոգ բա-  
 բեկարգութիւնը մտցնելու փողերանոցին մէջ.  
 Ինչպէս Ակրաիչ չէլեպին անհնարին զայրաց-  
 մամբ կը պնդէր և կը կրկնէր Կրիգոր և Վար-  
 գիս չէլեպիներուն առջև թէ. Հայ մը միայն  
 պիտի բաւէ այդ ծառայութիւնը ձեզ ընե-  
 լու, և մեիք ամէնքս՝ ձեր ազգակիցքը միթէ  
 այդչափ անճրկած ենք և անհոգ՝ պէտք եղած  
 դարմանը հայթայթելու:

Մյս ազգակցու թեան խնդիրն այն աստիճան զարթուցիչ և զգայուն եղանակաւ բացառեցին, որ վերջապէս յաջողեցան Չէլէպիներն իրենց դիտաւորութենէն շրջելու և անոնց սիրան իրենց յանկուցանելու: Պէզ ճեան ալ բոլորովին տազնապելով, և սիրան աղէկէզ մորմոքելով հրաժարեցու իր պաշտօնէն, ստանալով իր հաւատարիմ ծառայութեանը և ստակ մը տալիք չունենալուն վկայագիրը թէ Չէլէպիներուն և թէ փողերանոցի վերատեսուչ Ապտըրահման Պէյի ստորագրութեամբը և կնքովը վաւերացած:

Մյս միջոցին (1819) խիստ երեւելի էր Հալեթ էֆէնաի հռչակաւոր ոխերիմ թշնամին քրիստոնէից, որ Սուլթանին ալ շատ սիրելի ըլլալով իր ամէն կապը կատարելու դիւրութիւն ունէր: Ասիկա փողերանոցի վերատեսուչ Ապտըրահման Պէյը տէրութեան ներքին գործոց աւսչութեան պաշտօնին բարձրացուց, (որ ան ատեն Քէհեա Պէյ կամ Վէլը Քէհեաի կ'ըսուէր.) և անոր տեղը փոխերանոցի վերատեսուչ դրաւ իր սիրելին Խայրուլլահ էֆէնաի, որ յառաջ Շէհր էֆէի էր: Տիւզեան չէլէպիներուն Խայրուլլահ էֆէնաին ոչ միայն առջի օրէն մարգասիրական ցոյց մը չտուաւ, այլ անոնց դէմ սարսափելի հակառակութեամբ մը վարուեցաւ. փան զի վերատեսուչ ըլլալուն պէս՝ Սուլթանէն հրամանագիր ստացաւ փողերանոցին հաշիւը տեսնելու, ուստի հրամայեց Վրիգոր և Սարգիս չէլէպիները փողերանոցին մէջ բանտարկելու:

և անոնց բոլոր արկերը , հաշուեալ մարնե-  
րը և սենեակները կնքելու , 1819 օգոստոս 29  
ուրբաթ օրը : Աւերակի օրն ալ փողերանոց  
բերել առաւ Վիքայել չէլէպին՝ և անոր քե-  
ռայրը Ալէքսանեան Յովհաննէս , Ակրտիչ չէ-  
լէպին՝ և անոր քեռայրը Աղնաւուր Յովսէփ ,  
և պահանջեց որ ստորագրութիւն տան , թէ  
բանտարկուած Տիւղեանները պարտական են  
արքունի գանձուն : Արեքը ստորագրեցին , և  
միայն Աղնաւուր Յովսէփ չստորագրեց , ու  
չզլծայակապ բանտարկուեցաւ : Հետեւեալ  
երեքշաբթի առաւօտ կանուխ՝ մեծ ծովապետ  
Տէրի Արտուրաճ փաշա , և թէրսանէ քէհեա-  
սը , Պոսթանձը սրաշը , և թօփձու պաշը ,  
Վալէ ազասը , և ստտիկանութեան բազմա-  
թիւ զինուոր Տիւղեանոց և անոր ազգա-  
կանոց , և մերձաւոր գործակալաց և պաշ-  
տօնատեարց առնները կոխեցին , այր և կին  
ամենքն ալ դուրս հանեցին , այրերն ի բանտ  
և կիներն ի Վումգաբու Ղղգային Պատրիար-  
քարանը խրկեցին , և առններն ալ գոցելով և  
դռները կնքելով՝ պահապաններ դրին ու մեկ-  
նեցան :

Սարսափ և արհաւիրք առհասարակ ամեն  
ազգայնոց վրայ տիրած էր , ոչ ոք կը համար-  
ձակէր այս գեղքին վրայ բան մը հարցրնելու  
և տեղեկանալու . ամենուն սիրտն ազիւզորմ  
կը ճմլէր , և Պեղձեան մանաւանդ՝ երբ լսեց  
այս չարագուշակ լուրը՝ սասաիկ լացաւ , վասն  
զի ինք առաջուց զգացած էր թէ այնպիսի  
ժամանակի մէջ այնպիսի աւուր պաշտօններու

վրայ գտնուող հոգատակաց նրչափ հարկ է որ  
 ըլլան զգնչ, հեռատես և գործունենայ . ուր  
 կը մնայ կասկածի տեղի տալ այնչափ շուայլ և  
 շափաղանց ծախսերով . որ եթէ արդար վառ-  
 տակով ալ ըլլային՝ գարձեալ շատ մեկու-  
 թիւններ կրնային վերցնել և նախանձ գրգը-  
 ոելու առիթ ըլլալ : Ար տաղնապէր Պէղճեան  
 հնար մը գտնելու իր բարերարներու նօգնու-  
 թեան հասնելու համար . այլ անձեռնհաս և  
 յուսահատ յորդ արատասուք կը հեղաք գիշեր  
 ցորեկ : Ալ մինչ այսպէս յուղուած անհան-  
 դիտա կը տառապէր . ահա իրեն կուգայ ար-  
 քունի ճարտարապետ Գրիգոր Վիրան , ծա-  
 նուցանելու թէ Տիւղեանց տեղը անցնելու  
 յարմար և փորձառու Հայ մը իր միջոցաւ  
 կը խնդրուի , և թէ ինք ալ միայն Պէղճեանի  
 վրայ կրնայ վտահու թիւն ունենալ : Պէղճեան  
 անխորհրդաբար մերժեց առաջին անգամ այս  
 առաջարկութիւնը , իր անձնական տկարու-  
 թիւնները մէջ բերելով . վտան զի ոչ երբէք  
 յանձն կ'առնէր իր բարերարաց դէմ այդպի-  
 սի ընթացք մը բռնել : Բայց երբ Գրիգոր ա-  
 միրան ծանոյց թէ ասանկով գուցէ հնար ըլ-  
 լայ Տիւղեանց հաշիւները կարգի դնելու , և  
 դանոնք բանաէն ազատելու , և մանաւանդ  
 Տիւղեանց աղանաւոր թշնամի քանի մը Գօ-  
 լէճեաններու ջանքն ի դերև հստելու , որ այդ-  
 պաշտօնն ստանալու ետեւէ էին , Պէղճեան  
 ինքզինքն լստուծոյ յանձնելով փութաց եր-  
 թալ Գրիգոր Վիրային հեռառ սենեկապետն  
 Սուլթանին Պերպէր ուշի , Պերպէր պաշին քրն-

նելով Պէղձեանին ծառայութիւնները, և ա-  
նոր փորձ և հմուտ հանձարը, Սուլթանին  
հրամանաւը սեպտեմբեր 5ին խրկեց զինքը  
փաղերանոցի տեսուչ Խայրուլահ Եֆենտիին,  
որ սիրով ընդունեց զինքը և ամէն բան յանձ-  
նեց անոր: Պէղձեան անոր սիրալիր ընդունե-  
լութենէն օգուտ քաղել ուզելով՝ անմիջապէս  
գործի սկսաւ, և պէտք եղած կարգադրու-  
թիւններն ընելով ետէն եղաւ թէ ինչ հը-  
նարքով կրնայ ազատել իր բարերարներն այն  
աղէտալի վիճակէն:



## Գ Լ Ո Ւ Խ Լ :

ՏԻՒՋԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԻՆ ԿՈՐՈՒՍՏԸ

Սեպտեմբեր 17ին (1819) Գրիգոր և  
Սարգիս չէլէպիները փաղերանոցէն հանեցին  
և Պոսթան-սրաշիի բանար իջուցին: Սեպ-  
տեմբեր 29ին ալ Ալքայէլ չէլէպին Անիոյ զ  
Յոյն նաւաւարի մը տունը գանձելով, բերին ի  
բանա Պոսթան-սրաշիին, նայնպէս հոն բան-  
տարկեցին Սոֆաիա խալիվայի ըսուած արքու-  
նի գանձուն սեղանաւոր Գրիգոր Վանասեանը:  
Եանապետը որ բոլոր Պոլիս ճարտիւտած էր,  
բանտին մէջ ալ ներգործելով, մեռան Գրի-  
գոր Վանասեան, և վէրիլխարձ՝ Վարտիրոս  
և Արարպետ չէլէպի ալ ժանտախտէն զար-  
նուելով խելացնորեցաւ, բայց յետոյ աւսղ-  
ջացաւ:

Այս միջոցին բոլոր կնքուած տուները աւ  
մէն հինգշաբթի օրերը բանալով՝ յաճուրդ կը  
հանէին ինչ որ տանը մէջ կը գտնէին, մինչև  
պարտէ զներուն ծառերն ալ :

Հսկանմբեր 4, շաբաթ, Քրիստոսի 72  
աշակերտաց տօնախմբութեան օրը, տաւառու  
եան ժամը Աին գլխատուեցան Քրիզոր և  
Սարգիս չէլէպիններն ի Պասլը Հիւմայուն, և  
միւս եղբայրը Սիբայէլ և անոնց հօրեղբօրսը  
դին Սիրաիչ Անիգիւզի ծովեղերեայ տանը  
պատու հանէն կախուեցան :

Ողբ և կոծ և սոսկում բովանդակ Աղբը  
ըջապատեցին այս աղէտալի դէպքին վրայ .  
ամէն Հայ լացու : և միայն Վանախըլի գիւ  
ղը անողորմ և քինախնդիր հանդիսարան մը  
եղաւ . վասն զի մինչդեռ Տիւղեան բարեյի  
չատակ չէլէպիններուն մարմինը յարիւն թա  
թաւեալ ի տես կը կենային, հոն ի Վանախը  
լի Տափուաեան Աստանի տունը մեծ խնձոյք  
կ'ըլլար ուր հրաւիրուած՝ ներկայ էին Թրն  
կրեան Զակոր և Զովսէփ, Վրձեան Քրի  
զոր և ուրիշ բարեկիրթ որդիք Վոլէճեան  
քահանայից, որոնք Աբբայեան ուխտին պաշտ  
պաններն ի մահ գատապարտուած աեանելով  
յրնծութեան տօն կը կատարէին ի նախատինա  
Քրիստոսնէութեան և մարդկութեան իսկ :  
Բովանդակ Աղբն ի խոր խոցեցաւ անոնց այս  
բարբարոսական քսումներն վարմանց վրայ :

Պեղձեանի սուգն ալ անմխիթմար էր, և  
որրամտութիւնն ալ վերջին աստիճան սասու  
կացած ընդդէմ այն Վոլէճեաններուն, ուս

տի փութաց յաջորդ երկուշաբթի օրը Շամ  
պէօրէյի Յարութիւն աղայի միջոցաւ հը-  
րաման խնդրել ՚. Դռնէն՝ Տիւղեանց մար-  
մինները թաղելու . և ստանալով, թաղեցին  
այն չորս ազնուականներն ի Վուրու-էջմէ-  
խրենց նախնեաց գերեզմանատունը :

Քանի մ'ամիս անցնելէն զկնի երբ Սոււ-  
թանն իր սրտմտութենէն զիջաւ, Պէղճեան  
օր մը բարեպատեհ առիթ գանելով Պերպէռ  
պաշխին տոքն ինկաւ, և աղաչեց որ Տիւղեան  
միւս երէք եղբայրները և անոնց աղգականները  
բանակն ազատուին :

Պերպէռ պաշին ընդունելով անոր խըն-  
դիրը, և հրաման առնելով Սուլթանէն, մարտ  
ամսոյ Վին բոլոր բանտարկեալները Պօղոս  
Պատրիարքին խրկեց, որ զանոնք պատշաճ  
անգիր պատրէ :

Պօղոս Պատրիարք երէք ազնուական եղ-  
բայրները Կարապետ, Յակօբ և Պօղոս Տիւղ-  
եան խրկեց ի Ալեսարիա Ս. Կարապետի վանքը,  
տեղւոյն աւաջնորդ Ստեփան վարդապետին  
ալ գրելով, որ մեծարանօք և պատուով պահէ  
զանոնք : Ընոնց քեռայրը Ալէքսանեան Յով-  
հաննէս երէք եղբայրներով մէկ անգ խրկեց  
ի Ալիպէ . միւս քեռայրը Չամչեան Յովսէփ  
ի Միտիլի ի կղզին . Տիւղեանց հօրեղբօր կինը  
Մարիանէ իր Յարութիւն զաւակոյն ի Ստան-  
քեց . Ազնաւուրեան երէք եղբայրները Մլի-  
միա կղզին . Տիւղեանց քեռայրը Թընկերեան  
Յարութիւն և գրագիր Աթանասը և անոր  
եղբայրն՝ ի Ախպրոս . Քիւչիւկ Յովհաննէսն

ի Հռոդոս . և Հ . Ստեփաննոս վարդապետը որ նոյն գիշերը Տիւղեանց տունը գտնուեցաւ՝ յիլիմիա : Իսկ մնացած այրերն ու կիները հրամանաւ Բ . Դրան թողուց որ իրենց ուղած տեղերն ազատ երթան :

Բ . Դռնէն վերստին հրաման եկաւ յԱզգային Պատրիարքարան , որ Տիւղեան տան վեց քահանաներն ալ արտորուին : Պօղոս Պատրիարք փոխանակ Աբբայեան կրօնաւորներէն արտորելու , խորհրդով Պեղձեանի կանչեց ի Պատրիարքարան Անտոն Տալուտեանը , և Յակոբ Թընկերեանը , և անոնցմէ վեց Գուլէճեան քահանաներ պահանջեց , որոնց աւուաններն են . Գերապայծառ կոչուած Անտոն Լյախիսպոս , Սառուշ Պօղոս վարդապետ , Գայիշ գուշար ճգնաւոր կոչուած , Պետրոս վարդապետ , Յովհաննէս վարդապետ , և Դաւիթ վարդապետ , որ կամովին յօժարեցաւ արտոր երթալու , ըսելով՝ եթէ արտորելոյ թիւը լցուած չէ , զիս խրկեցէք : Այս վեցն ալ Արշերկրական ծախուն կղզիներն արտորուեցան , Գանախլի ինձոյից մնացորդը հոն անցընելու :

### Գ Լ ՈՒ Խ Բ :

ԽԳԻԻՐ ՎԵՐԱՆԱԲՁԻ ՀՈՌՄԷԱԿԱՆ ՀԱՅՈՑ Ի ԾՈՑ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՆՈՐՁԱԿԱՆ Ս . ԵԿԵՂԵՑԻՈՑ

Հռոմի արքանեակներէն ի վաղուց մեր Ազգին մէջ ցանուած երկպառակու թեան որս .

մը գաղտնի և անգոր աճում մ'ունենր : Եւ  
մանակին երկիւղը և քաղաքականութիւնը ար-  
տաքին երևոյթ մը տալ չէր ներէր սրտակ-  
տեալ մասին , այլ Տերա նստող Վատինա-  
յւոյ Ապիսկոպոսին հետ գաղտնի տեսակցու-  
թիւններով , և իւրաքանչիւր ոք իրենց տան  
մէջ մատուռ և սլատարագամատոյց սեղան  
ունենալով կը բաւականանային :

Տիւղեան գերգաստանին տուները բաց-  
ուած միջոցին Տ. Վրան յայտնուեցան այս  
գաղտնի յարաբերութիւնները Հռոմայ եկե-  
ղեցւոյն հետ . իւրաքանչիւր տան մէջ գտնը-  
ւած սեղանները և եկեղեցական զարդերը  
մասնեցին այն Հայերը , որ Ազգային եկե-  
ղեցիէն բաժնուած էին , և հետեւաբար ազ-  
գային Պատրիարքին իրաւասութիւնը չէին  
ձանաչեր : Եւ սրովհետև Հայոց Ազգը իբրև  
մէկ մարմին Տ. Վրան առջև իր ներկայացու-  
ցիչն , այն է Պատրիարքն ունի , որ սլատա-  
տանատու է բոլոր Ազգին համար , և Պատ-  
րիարքին ալ Ազգին վրայ ունեցած իրաւասու-  
թիւնը իր հսգեւոր իշխանութեամբն է , և քա-  
նի որ Հռոմի եկեղեցւոյն յարող մաս մը Հա-  
յեր ի հսգեւորս իրենց Ազգային Ակեղեցւոյ  
հետ հաղորդակցութիւն ընելէ դադարած են ,  
հետեւաբար Հայոց Պատրիարքին երաշխաւ-  
րութիւնը և վստահութիւնն ալ ստանալէ  
զրկուած էին : Օայս տեսնելով Տ. Վուռը  
հրաման ըսաւ Հայոց Պատրիարքին , որ փու-  
թով այս բաժանումը վերցնէ , և բոլորն ալ իր  
իրաւասութեան ներքև առնելով երաշխաւոր

ըլլայ ամէնուն, և անհնազանդ գտնուողները  
Ի. Գրան իմաց տայ :

Հայոց Ազգն ալ պատրաստ էր այսպիսի  
բարձրագոյն հրաման մը սիրով ընդունելու,  
և իր ծոցը ժողովելու իրմէ բաժնուած սիրա-  
տուն զաւակները, որոնք օտար թելադրու-  
թեանց և ժամանակի հանգամանքներու և  
պարագաներու նկատմամբ իրմէ խորթացել  
էին : Արբուճի ճարտարապետ Գրիգոր ամիրա,  
Պէզճեան Զարուծիւն ամիրա, Ճանիկ ամի-  
րա, Արկանեան Ս. Զովհաննէս ամիրա, Ալե-  
նաւուրեան Կարապետ ամիրա և ուրիշ ազ-  
գասէր անձինք խորհուրդ ընելով Պօղոս Պատ-  
րիարքի հետ, Ղզգային Պատրիարքարան հրա-  
ւիրեցին Հռամեական Հայոց արհեստաւոր-  
ներն և իշխանները, և արբուճեական հրամանն  
անոնց իմացուցին : Ըստնցմէ ոմանք արդէն  
զոլուած ըլլալով այնպէս բաժնուած և օտարա-  
ցած մնալէն, ոմանք ալ առ երկիւղի՝ հաւա-  
նեցան և սկսան ստորագրել Արկիական հան-  
գանակին, որ անպակաս և անյաւելուած գըր-  
ուած էր թղթի մը վրայ, ոմանք ալ տարակու-  
սելով, և Գոլէճեան վարդապետաց զրպար-  
տութիւններէն պղտորուելով կը վախնային ըս-  
տորագրելու : Այս գործը խաղաղութեամբ  
և համոզմամբ վերջացնելու, և սէր ու եղ-  
բայրական միութիւն հաստատելու համար Հ.  
Մեսրոպ Վարդապետ Ազաջրաղեան 1820 յուն-  
վարի սկիզբը լռելեայն եկաւ Անիպարու-  
Աօնուղեան Զովհաննէս ազա հռամեական  
հայուն տունը, և անոր միջոցաւ խնդրեց

Ճարտարապետ ամիրային հետ տեսութիւն  
 ընել: Ամիրան սիրով ընդունեց անոր խնդիրը,  
 և իր առւնը հրաւիրեց նաև Պեղճեան և Ալ-  
 նաւուբեան ամիրաները: Հասաւ սիրալիկ  
 խօսակցութիւններէ վերջը միութեան համար  
 սա առաջարկութիւնն եղաւ թէ. պէտք  
 է երկու կողմէն ալ գիտնական անձինք նստին  
 և քննեն այն խնդիրները, որոնց համար վէճ  
 և այս բաժանումն եղած է: Հ. Անարայ  
 սիրով ընդունեց այս առաջարկութիւնը, և  
 կանչեց Հ. Սահակ վարդապետը, որ նոյն գի-  
 շէրը Անիգաբու հիւանդի մը տուն գնացած էր,  
 խրկեց զայն Հուսիւտիան իշխանաց ի Վերա,  
 անոնց ծանուցանելու այս առաջարկութիւնը:  
 Հ. Սահակ գնաց Վերա, այս լուրը խմու-  
 ցուց Ալլահվերտեան Սանուկ և Սասթեաս  
 ամիրաներուն, և ուրիշներու. ասանք ուրա-  
 խութեամբ ընդունեցին և հաճութիւն ար-  
 ւին. յետոյ Ատիսնացոց եկեղեցիները պահ-  
 ււտող վարդապետաց խմաց առաւ. և իսկայն  
 Հ. Թովմայ Վ. Մարտէթեան և Հ. Արքայէ  
 Վ. Ղէվահիրճեան գային առ Սոնիսեօս  
 Վինկէնտիսս Բօռէսի Ալիսիսոյոսն Ատիսնա-  
 ցոց, և հրաման առնելով անկէ իջան Անի-  
 գաբու Աօնուզեան Զովհաննէս աղայի տունը,  
 ուր էր Հ. Անարայ: Արկու օր ետքը հան ե-  
 կան նաև Հ. Թադէոս Վ. Ասկերեան, Հ.  
 Վրիգոր Վ. Վարդաաճեան, Հ. Քերքէ  
 Վ. Անուուբեան, Հ. Պողոս Վ. Բժիշկ, և  
 Հ. Ստեփաննոս Ալիսիսոյոս Ազգերեան, որ  
 երբեմն անոնց Վիշարն էր:

Կեր կողմանէ ընտրուեցան երեք անձինք ,  
 Տ . Կարոպ քահանայ Կայր Կիկեղեցւոյ , Տ .  
 Բարժսուղիսէոս քահանայ Ս . Խաչ Կիկեղե-  
 ցւոյ Իւսքիւտարու , և Թագաւոր վարժապետ .  
 երեք անձինք ալ Լ'բբացւոց կողմանէ , շ .  
 Կարոպ , շ . Թալմայ և շ . Կերոբէ , և ա-  
 մէն ժողովի ալ նախագահ կր'նատէր շ . Կա-  
 ժաննոս Կալիսկոպոս , և ունկնդիր կ'ըլլար : Ս .  
 Օննդեան ութերորդ օրէն սկսեալ մինչև Լ .  
 Լազ Չորեքշաբթի օրը տեւեց վիճաբանու-  
 թիւնը մերթ ճարտարապետ ամիրային և մերթ  
 Պէղճեանին տունը ժողով գումարելով , և  
 հուսկ յետոյ միաբանելով , և վիճուած կէտե-  
 րուն վրայ համաձայնելով զանոնք ի գիր առին .  
 և երկու կողմն ալ ստորագրելով՝ վերջացաւ  
 ժողովը :

Կնախջապէս եկեղեցական և աշխարհական  
 Բնդհանուր ժողով գումարուեցաւ Կայր Կի-  
 կեղեցւոյ մէջ , ուր Կիրոյ և Կիաբանութեան  
 վրայ ազգու առնաբանութիւն մ'ըրաւ Պօ-  
 ղոս Պատրիարք , և կարգաց երկու կողմն  
 գիտնականաց ստորագրած թուղթը , որուն  
 մէջ բացատրութեան կարօտ տեղեր ըլլալով ,  
 զանոնք ալ ըստ դաւանութեան Ս . Կիկեղե-  
 ցւոյ մերոյ բացատրելով , համալէց բոլոր ժո-  
 ղովեալները , որոնք իրենց ստորագրութիւն  
 ներով վաւերացնել զայն , խնդրեցին որ չ'ըս-  
 տիրու անունով տարուի նոյնը : Բիշ ժամանա-  
 կէն այս խնդիրն ու սրտչումն ևս կատարուե-  
 ցաւ : շատատուեցաւ Կիաբանութիւնը ,  
 և ժողովականները զիրար համբուրելով և օրհ-

ներով միութեան պատճառ եղողները՝ բաժնուկեցան, մեծ միութարութեամբ սրտի և քաղցր յոյսերով:

Աշխարհամատրան կիւրակի օրը 18 ապրիլի 1820, Գումգաբուի Մայր Եկեղեցւոյն մէջ նշանաւոր հանդէս կատարուեցաւ. հոն ժողովուած էին ամէն աստիճանի երեւելի անձինք թէ եկեղեցական և թէ աշխարհական, և խառն բազմութիւն, հանդերձ վերադարձող Հայոց աստիճանաւորներով և ժողովուորով: Աբբայեան վարդապետներէն Հ. Մեարոպ, Հ. Թովմայ, Հ. Թադէոս, Հ. Սերոբէ, Հ. Գրիգոր, և Գոլէճեաններէն Հ. Սահակ և Հ. Պօղոս վարդապետք վեղար և փիլոն զգեցան. և մինչ Հայ շարականը կ'երգուէր, առաջնորդութեամբ Պատրիարքական փոխանորդ Յակօբոս վարդապետի և Տ. Մեարոպ քահանայի, և Նարտարապետ, Պեղճեան, Անուարեան ամիրայից՝ մտան Ալեկեցի, ուր Պօղոս Պատրիարք աթոռոյն վրայ բազմած էր, դաւաղանի ձեռին, և դասին մէջ կարգաւ կեցան: Իւր ժողովուրդն ուրախութեամբ լցուեցաւ: Ս. Պատարագի ժամանակ Պօղոս Պատրիարք իր երկու սարկաւագները վարդապետ ձեռնադրեց. այս ձեռնադրութեան մէջ Ալեանի և Քաղկեդոնի ժողովոյն նղովքը չկարդացուեցաւ. և ոչ ալ յիշատակուեցան Յովհաննէս Արտանեցի և Գրիգոր և Մովսէս Տաթևացիք ըստ սրօշման միաբանական ժողովոյն: Ս. Պատարագի Աւետարանը Հ. Մեարոպ կարդաց,

նոյն օրը Եզնուղեան Յովհաննէս աղան ալ հա-  
ղորդուեցաւ Բրիտանի Ս. Մարմնայ և Արեան:

Ս. Պատարագն աւարտելէն զինի Պատրի-  
արքարան ժողովուեցան թէ՛ մեր Ամիրաները  
և թէ՛ Ալլահմէրտեան Մատթէոս և Նազա-  
րէթ ամիրայք, և թէ՛ սւրիշ գլխաւոր ան-  
ձինք, և վեղար և փիլնն զգեցող վարդա-  
պետք: Պօղոս Պատրիարք ամէնուն սիրապի-  
րնդունելու թիւն ընելով, զամէնքն աւ բովան-  
դակ Աղբն օրհնեց. յետոյ հրաման տալով,  
Ղարտարապետ ամիրան իւր՝ տունը հիւրըն-  
կալեց Մապառաձեան Բրիգոր վարդապետը  
և Պօղոս վարդապետը, Պէղձեան՝ Ղէվահիր-  
ձեան Սերովբէ վարդապետը, Երկանեան՝ Աղա-  
չըրաղեան Սեւրոպ վարդապետ, Ղանիկ ամի-  
րա՝ Թովմայ և Թադէոս վարդապետները .  
Յակօբ ամիրա Կարնեցի՝ Սահակ վարդապե-  
տը. և արժանաւոր ընդունելութեամբ կը  
պատուէին զանանք. զգեստ, վեղար, փիլնն  
շինելով, և կիւրակէ օրերն ալ մայրաքաղաքիս  
Ս. Եկեղեցեաց մէջ ի ներկայութեան խուռն  
ժողովրդեան հանդիսաւոր Ս. Պատարագ մա-  
տուցանել տալով:

Իսկ երևելեաց կողմանէ պատրաստուած  
խնձոյքներն անթիւ էին. որոնց մէջ նշանա-  
ւոր եղան Խասգիւղ Վարաբէհեա Ս. Աբրա-  
համ ամիրային տուած խնձոյքը. ՍՊրթազիւղ  
Ղանիկ ամիրային պատրաստածը. և էն նշա-  
նաւորը Թարասպիայի մէջ Մատթէոս ամիրա-  
յին խնձոյքը, որ երեք օր տեւեց:

Միջառնակ յիշատակոց արժանի գէտք մը . որուն մէջ յայտնի կը նշմարուին մեր Մղգային (Իզլափառ Ս) : Եկեղեցւոյ ներողամտութիւնը , սէրը իր բոլոր զաւակաց վրայ , և գուժի ու մայրական գորովը՝ իր ծոցը դիմնող և վերադարձող հարուզատ զաւակաց վրայ :

## Գ Լ Ո Ւ Խ Թ .

ՆԱՅ ԺՈՒՈՎՐԻԵԱՆ ԱՆՄՈՒԿԸ . ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՋՃԵԱՆ  
ԵՒ ՈՒՐԻՇ ԱՄԻՐԱՆԵՐ Կ'ԱՔՍՈՐՈՒԻՆ :

Մըջառնակ շատ էին այս միտքածաւթիւնը ինգրոզները , սակայն գարունի վայրնցում մը կար Հայ ժողովրդեան մէջ . սմանց շատ ախարժեղի չթուեցաւ Հրաւեր իրոյն : սմանք կ' Պօլսոյ Պատրիարք մը՝ որ բաց ի մարմնուոր իշխանութենէն ըստ հոգիսին վիճակաւ որ ետխերպոսի մը իշխանութենէն աւելի բան մը չունի . անձեանհաս կը նկատուին նյարդիսի միտքովնակն ինձգրոյ մը : Տարակոյս չկար , որ աւանակ եկեղեցական ինձիր մը՝ ընդ նախագահութեամբ Ս) : Իջմիածնի Մըջառնակ կաթողիկոսին՝ բոլոր Հայաստանեաց Եկեղեցւոյ Մարտիրոսոց և Եւրիշ բարձրաստիճան եկեղեցականաց ժողովով բննուելով և ըստ վճարոյ նորին կարգադրուելով կրնար լուծուիլ :

Պձոյս Պատրիարք ալ այնչափ չէր սնդի

տանար ասոր, իր ձեռնհասութեան վեր գործի մը ձեռնարկած բնական կը ճանկարչեց, անոր համար ի սկզբան բաւական յամառեցաւ քալնի մը խնդիրներու դեմ. բայց երբ Ս. Ղուսաբ կ'ընտելէր Վատրիարքը միաբանութեան գործը փութացնելու, երբ այն խտրութիւնները՝ որոնց համար Հռոմէականք իրենց Ղազարիս Նիկեոզեցիէն բաժնուած էին, ծանուցուած էին Ղուսաբ, թէ անոնք կրօնական էական մասեր չեն, հեռաբար գործն այնպիսի կերպարանք մը սկսաւ առնել, որ Պօղոս Վատրիարք պարտաւորեցաւ ետ կենալ իր յամառութենէն:

Դեռ Սրբազան Կաթողիկոսին և ուրիշ վիճակաւոր Արքեպիսկոպոսաց յանդիմանական գրութիւնները Պօղոս Վատրիարքին չէին հասած, դեռ Հայ կղերին և ժողովողեան մէջ գժգոհութեան յայտնի ցոյց մը չկար. երբ Հոսիս 12ին Պօղոս Վատրիարք օրհնեց վերջին օժման իւզը, և խրկեց եկեղեցիները, որ օժուիլ ուզող հիւանդը օծեն: Կաղատացի Հռոմէականաց զարմացումն օր օրի կ'աւելնար, քանի որ կը տեսնէին Հայոց անտարբերութիւնը, որ ժամանակին ճնշման արդիւնքն էր: Վերջին օժման իւզը գրգռութեան աւիթ եղաւ. (Գոստոս 7 շաբաթ օրը (1820) խորհրդով Բուցիանթի խոովայց զկարգաւորին ար Հայոց Ս. Նիկեոզեցւոյն ռեսերիմ թշնամի էր, Կաղատացի մը երաւ շուկայ, Սուսաւորչափան Հայու կերպարանքով, և Հրա-եւ սիրոյ տեսողը

ձեռքը, անոր սկիզբը գտնուած Ս. Լուսա-  
ւորչի պատկերին վրայ Պապին պատկերը  
իւստիցուցած, սկսաւ Արեւարացի կոչկահարնե-  
րու սենեակները շրջիլ, և գրգռել թէ .  
խնայանհոգ նստեր էք, Պատրիարքը Ֆրան-  
կոցրաւ, ուրացաւ Ս. Լ. Չմիածինը և Հռոմայ  
տթուացն հեազանդեցաւ . ասիէ ետքը Սուրբ  
Կիւռեակը վերցաւ . անոր տեղ ձգտով պիտի  
ածուինք աղցանքի նման . ալ լուելու ժամանակ  
է, մեր վաղը բողոք պիտի ընենք, բուք ալ  
մեղի հեա միացէք, իջնենք Պատրիարքարան,  
և իմայնենք որ մենք Լուսաւորչի որդիք ենք,  
և ոչ Հռոմայ Պապերուն . Լոանկով գրգ-  
ռու թիւնը իմստ սաստկացաւ :

Պողոս Պատրիարք նոյն իրիկունը այս լուրն  
առաւ և անմիջապէս իւր փոխանորդը Ռիո-  
նէսիոս Լախակոպոս խրկեց Կւսկիւտար Ղար-  
տարապետ Գրիգոր և Քեզձեան ամիրաներուն .  
բայց գիշերուան ժամը 3 էր, և բան մը չկը-  
ցան ընել :

Հետեւեալ առտուն անթիւ բազմութիւն  
Սայր Կիկեղեցին իջաւ, և միաբարբառ կ'ա-  
ղաղակէր թէ, մենք Հայ եմք, Ս. Լուսաւոր-  
չի որդիք . Պաանկ չենք ըլլար, թող վայ Պատ-  
րիարքը, ու զմեզ ապահովցնէ :

Պողոս Պատրիարք Լիւսւսաղէմի Մարկոս և  
Հասկոբեայիսկիոպոսները խրկեց, որ երթան  
հազմողեն ժողովուրդը . բայց ժողովուրդը մը-  
տիկ չըրաւ . անոնց, զարհաւ, և ի Պատրիար-  
քարան դիմեց . Իւները փակուած կ'տաւ,

գարկաւ, և խորտակեց զանոնք և ներս քաւե-  
ցաւ : Պատրիարքը ևլ փնտռէր, բայց սն  
պատուհանէն փակած էր մերձակայ ասանի  
մը տուն, և հոն պահու բտամ :

Հոտ չանցաւ, եկաւ Լէնիւէր Բըասին իր  
ղորբովը, և ամբողջին բանի մը գրեաւարնե-  
րը բռնեց և բանտ իրկեց : միւսները ցրուեց,  
և Պատրիարքբարանի գուռը պահպանելու ծա-  
մար զինուոր թողով՝ մեկնեցաւ : Ի. Գուռը  
այս գրգռութեան հեղինակները փնտռել ու-  
ղելով, բանտարկուածները տանջել հրայնացեց,  
որանցմէ մէկը՝ Տէլի Պազտասարը մատնեց, մէկ  
ուրիշն ալ Կեսարացի Կարապետ անուն սար-  
կաւագ մը, և ուրիշներ ալ գրգռող Գաղա-  
տացին, որ շատ փնտառեցաւ, բայց ի զուր,  
որովհետև Լէրոպա փակուցած էին զայն :  
Սարկաւագը տանջանաց մէջ նախ Լասաւա-  
ճատուր և Լրեմիա եղիսկոպոսները մատնեց,  
բայց անոնց վրայ բան մը չկրցաւ հատուակել :  
Յետոյ Սոյ Տ. Կիրակոս Ս. Կաթողիկոսը  
մատնեց, որ այն օրերը Պօլիս գտնուելով՝ նոր  
Ճամբայ ելեր էր իր աթոռը դառնալու, և  
տուէն սուրհանդակ իրկուեցաւ, և Կալը  
Խան տեղը գտնելով դարձուցին ի Պօլիս : Սէծ  
Լազարբոսին առջև Ս. Կաթողիկոսն ալ հարց-  
ու փորձ եղաւ, բայց բան մը չհատուակուելով  
Թող օրուեցաւ : Տէլի Պազտասարն ալ զինքը  
Թելադրող Եակոբ և Կարապետ Կեսարացի-  
ները մատնեց, միայն Եակոբ գտնուեցաւ :  
Յետոյ Սարկաւագը մատնեց Սախաբեան Գը

րիգոր ամիրան, և ամոր ազգական խեղճ պաւ-  
տանին Աջարիա : նոյնպէս Պէկխողցի տիրա-  
յու (Յովհաննէան Իւսկիւտարու : բայց սպ  
վերջինը իրիմ փախած էր : Իարձեալ երկու  
օր ետքը Իարկուազը մասնեց Արփիարեան  
Սիրտիչ ամիրան, Իառաքէհեա Ս. Աբրա-  
համ ամիրան, Կելիէլեան Ս. Պողոս ամիրան  
և Սարգսրեան Այա Պոզսր : Սյայն Իառա-  
քէհեան երկու օր ետքը ազատեցաւ բանտէն  
միջնորդութեամբ Աէճիզ Էֆէնտիին, որ է-  
գիպատոսի փոխարքային Քաբու Քէհեասին էր :

( ) Գոտոս 16 ին իրիկունը, գիշերուան ժա-  
մը Չին Սեճ Այարքոսը կանչեց Պոզա Պատ-  
րխարքը, և առանձին հարցուփորձ ընելով  
կ'ազէր տեղեկանալ թէ այս խռովութեան  
բուն շարժառիթն ի՞նչ է : Պոզա Պատրխարք  
որ ըստ ամենայնի գոհ չէր միաբանութեան  
խնդիրներուն մէկ քանիին վրայ, և արդէն իր  
հրատարականին վրայօք խորհող քանի մը գր-  
խաւորայ վրայ ալ վշտացած էր, պատեհ գտաւ  
ճանաչանելու թէ, Արայտերական կառավարու-  
թեան հրամանին համեմատ թէպէտ փութաւ  
ցեր է բաժանու՞մը Ազգէն վերցնելու միջոց  
ներուն վրայ խորհիլ, բայց քանի մը անձանց  
ազդեցութեամբը զիրնալով իր գիտցածին հե-  
տեիլ, անոնց կամօքը շարժելով, անվայել և  
անյարմար ընթացք մ'ընենցեր է, և ահա ա-  
նոնց խահախանութեան ժախճանն ալ այս ե-  
ղեր է : Այարքոսն այն քանի մ'անձանց ա-  
նունները կ'ազգէ գիտնալ, և կ'ըստանայ ատնիք,

Իրիզոր ճարտարապետ, Յարութիւն Պէզ  
ձեան, ճանիկ փայտազեան, Ս. Յովնանէս  
Երկանէան, և Կարսպետ Լընուուրեֆին :

Իսկ Սահայեան Իրիզոր ամիրան չկրնալով  
սանջանայ դիմանալ ու թառն շարքերն ալե-  
ւոր հպատակն մէջ, բարդ յանցանքն իր սրայ  
բառ, և թողք, զսառ և զգլխն անմեղ բազ  
մաւ թիւղ, և զիս միայն պատճեցէր : Իրն  
պէս կեսարացի Յակոբ և Տէր Պաղտատար  
ինքզինքնին յանցաւոր խտրողանեցան . և Լ-  
գարիս պատանին ալ խտրողանեցաւ որ իւր  
Թէ սարկաւագին հետ ապրիս անգին շրջած և  
գրգռութիւն ձգած ըլլայ : Սուտի այս հին  
գին մահը վճռուեցաւ : Սեպտեմ. 18, Վերաց-  
ման Ս. Խաչէ տօնին ու թերադգ օրը, այսինքն  
շագանձ երեկոյ՝ ըյ զարնի ժամանակ . Սայր  
Եկեղեցւոյ գրան առջև գլխաւորեցաւ Սա-  
խայեան Իրիզոր ամիրան . նոյնպէս Չեմպերի  
Տիբկի Թաշը գլխաւորեցաւ Յակոբ կեսարա-  
ցին, և Տէր Պաղտատարը Սամաթիա իր սրը  
ճանաչին առջև կախուեցաւ : Իսկ սրբան ան-  
մեղիբու արիւնը մանազ մասնիչ սարկաւա-  
գը (որ մահմետական կրօնքն ընգուհած էր  
բանդին մէջ, ) և Լգարիս պատանին կախուե-  
ցան ի Տարրիսգարու ի Սուլթան Պայպիկաւ :  
Հեռեկալ օրը Ըստուածատուր և Էրեմիա  
Եպիսկոպոսները և ուրիշ տասն և ինը անձինք  
բանտէն արձակեցան : Իսկ բանտարկուած  
եղևէրի Հայերը արտորուեցան . Սկրտիչ Լը-  
վիսարեան ի Ստանքեօյ . Ս. Պօղոս կեկեղեան

Աղիակա, և Այս Գոզոս Մարտիրոսան ի Հը  
 ուտոս : Այնպէս արտորուելու դատուպարու  
 ուեցան Պատրիարքին պործոց ձեռնամուխ ե-  
 դող հինգ անձինքը . բայց ասոնցմէ Ղանիկ  
 Փաւսաղեան որ Եպարքոսին սեղանաւորն էր՝  
 աղանոցաւ . նոյնպէս և Իրիգոր Ղարապարու  
 պեա աղանոցաւ . վասն զի հոկոյեմբեր Յին  
 օսասոիկ մրրիկ մ'ելելով, արքունի պալատան  
 շատ տեղերուն վնասեց, և Սուզթանին հրամա-  
 նաւը կանչուեցաւ որ զանոնք նորոգէ : Այ-  
 կանեան Ս. Յովհաննէս ալ այս միջոցին իրեն  
 դէմ եղած մէկ սարսափելի մատնութեամբ մը  
 գլխատուելու վտանգէն ազատելու համար  
 Սահմէտական կրօնքն ընդունեց : Իսկ Աղնա-  
 ւուրեան կարապետ ի Սաբրզ կղզին և Պէզձեան  
 Յարութիւն Աղիակա արտորուեցան :

Պէզձեան փողերանոցին հաշիւներն ամբողջ  
 հատոյց, և այն մասին փողերանոցին վերա-  
 տեսչէն գովութիւն ալ լսեց . իր պատժապար-  
 տութեան վճիւր ստեղաւ թէ . « Յարութիւն  
 Պէզձեան ամենայն հաւատարմութեամբ վա-  
 րեց արքունի փողերանոցին պաշտօնը, և իր  
 հաշիւն ամբողջ տուաւ . բայց ազգային գոր-  
 ծելու ձեռնածոն իս ըլլալուն, ի խրատ զգու-  
 շութեան այս օրինակ որստժապարտութեան  
 արժանի դատուեցաւ » : Պէզձեանի տեղն ան-  
 ցաւ Վրէլիկձեան Գոզոս Հռոմէական Հայր :

Ահա ասիկ այս կերպով յրոպայսն միութեան  
 փակաբարով վառուած սրտերը . և խաղաուլ  
 հիմարն վրայ գրուած անխորհուրդ շէնք մը այս

Վոյսճանն աննեցաւ : Իսկ վերայ և փրան զգե-  
ցող Մարայեան վարդապետաց հրաման խոր-  
կեց Պօզոս Պարիսարք սբ Պարիսարքարան գան ,  
որպէս զի երկուքք ՎՋմանին , երկուքն ի  
Մուշ և երեքն ի Ս . Երաւ սարգև իջակէ : Օպո  
լսեալ նոյն վարդապետները փութային գնաց  
Լատինացոց և կեղեցին , և հոն ապաշխարեցին :  
Եւնպէս անոնց եպեկն գացին Մարացի ժո-  
ղովուրդք :



Գ Լ Ո Ւ Խ Ժ .

ԳԵՂՏԵԱՆ ԵՒ ՏԻԷՆԵՐ ԱՔԱՌԻՆ

ԿԸ ՎԵՐԱՆԱՌՆԱՆ

Տարի մը չտեւեց Պեղճեանի արտորը , ու  
վերագարձաւ (1823) . և առաջ ճեպի շի-նո-  
յոնի սեղանաւ որո թեան պաշտօնն ստացաւ :  
Շինգ վեց ամիս ետքը վերադին փողերանոցի  
տեսուչ կարգուեցաւ . և սբ օրի փառօք և  
պատուով կը յառաջադիմէր . և Սուլթան  
Սահմուտ Ի . հօր ինքնակալին այ սիրելի բը-  
լալով , օր օրի իշխանութեամբ կը ձոխանար .  
և առանց կասելու բարեգործութենէ , ան-  
ընդհատ աղքատին և տառապելոյն գթաւ  
թեան ձեռք կը կարկառէր :

Շալէթ էֆենտի և անոր սեղանաւոր իս-  
խէլ շրեայ երկու չարագործները երբ իրենց

անորէնու թեանց պատիւը որդարու թեանի  
սաստցան քորեզու թեան Պաւլթանէն և որդարու  
նայ մէջ խեղդաման սաստիցան քրիստոսե  
եայ հայաստանի աստիցանի սաստիցանի և  
հանցաստիցան : Պեզճեան ալ առ թեան պատու  
Սաւլթանէն խնդրեցաւ որ Տիւզիան Վարու  
պետ և Յարս և Պարս շէքեպիները սարս  
տուին տրարեն : Ընդ համար քանի մը երեկ  
լի նախարարաց սիրան իրեն յանկոյց և անոնց  
խորհրդով աղեղասպիր տուա Սաւլթանին ,  
որ հրաման տուա Տիւզեանց վերագաւթին :

Եւ որովհետև Տիւզեանց ի Վարու շէքեպի  
ուրեցան ծովեղեթեաց առնը Իսխէլին ձեռքն  
անցած լլարով Իսխէլին ինչքն ալ մահու քնէն  
ետար յարքսեմիս գրասուեցաւ , Պեզճեան  
փութաց յիշեալ տունը ծախաւ առնելու և  
առաջինին նման ամէն կահ կարասիրով զարդ  
արել սպարով զայն , բանայլինեքն առաւ և  
անաւ շահար լեմաններով լի սահառի մը մէջ  
գրած , իր Համապիւռ քրաջ տուա , որ ըն  
ծայ տանի Տիւզեանց Լքանուհի և Տիւզի  
քորերածն , որոնք իր առնն Ախնիգարու  
հիւրընկալած էր և իրենց եղբարց աղա  
տու թեան աւետար սպայ անոնց :

Սեճ ուրախութեամբ լլարեցան աղնուա  
կան քորերը , և համազուեցան որ տուա և սը  
խալ է եղեր այն կարծիքը , իբր թէ Պեզճեան  
պատճառ եղած ըլլայ իրենց գերդաստանին կոր  
ծանմանը , ահա ժամանակն ու պատեհութիւնը  
ապացոյց տուա թէ Պեզճեանի վեհ ոգին բնաւ

առանկ ապերախտութիւն մը և անփթու թիւն մը չէ մտաբերած . այն ուրիշ՝ որ ոչ միայն իր ժա մանակի մարդոց մէջ նշանաւոր կը փայլէր, այլ ապագայ դարուց մէջ ալ անմահ պիտի յաւեր ժանար . Օպա շուտով զգացին ազնիւ Լըրա նուհի և Տիրուհի տիկնայք . նոյնը զգացին նաեւ բոլոր Տիւղեանք և բոլոր ազգայինք . և Պէզնեանի անմեղութիւնը ու առաքինի և երախտագէտ սիրար ամէնուն ծանօթացաւ . հետեւեալս կարգիցան մնացին զայն բամբա սող լեզուները :

1823 տարիլ 13 ին Պրինս հասան Կորապետ, Զակոր և Վորա չէլէպիները, և անմիջապէս Պէզնեանի տունն իջան, ու հոն օթեանեցան շատ օր . Պէզնեան ուրախութեան արտասուօք համբուրեց այն տարագրեալ աղնուա կանները, և փոխադարձ երախտագիտութեամբք երկու կողմն ալ լցուած՝ չէին յագենար փոխադարձ շնորհակարութիւն մատուցանելով մէկմէկու . Պէզնեան անոնց ամէն պիտայքը հովալով և հարկ եղած սպասաւորներն ու պախիիններն ալ յատկացնելով, թող տուաւ որ իրենց հարեճական տունն ի Վուրուչէշմէ Վերթան : Տիւղեանք ան ատեն զգացին թէ սրչափ քաղցր է եղբւր բարերաբելը, և փոխադարձ բարերարիլը :

Պէզձեան՝ որ ամէն ջանք ի գործ դրած էր միաբանութեան խնդիրն արդիւնաւորելու և Մոսկու մէջէն բաժանուած ու երկայնակութիւնը վերցնելու, երբ տեսաւ թէ իր յուսացածին նման վսիւճան չունեցաւ զորքը, փոխեց իր գիտաւորութիւնը, և յօգտաւ Հռոմէական Հայ եղբայրց խորհուրդ ընդ կարապետ Պատրիարքի հետ, որ Պօզու Պատրիարքի յաջորդ ընտրուած էր 1822 հոկտեմբ. 23 ին, Հռոմէական վարդապետներէն՝ Պատրիարքին կողմանէ Փոխանորդ մը կեցնելու ի Վալաթիա կամ ի Երա. որպէս զէ Պատրիարքարան եկած արքունի հրամաններն անմիջապէս նոյն Փոխանորդին միջոցաւ ծանուցուին Հռոմէական Հայոց:

Պէզձեան այս նպատակաւ օր մը դնաց ինքնա՛րա՛ Պիլէզիկձեան Պօղոս աղայի տունը, հան հրաւիրեց նաև Հռոմէական գլխաւոր Հայերը, Վաղատացի սեղանաւորները, Տիգրեան Զակոր չէլչիլին, և ուրիշներ. և ծանայց Պատրիարքին կամքն ու հաճութիւնը: Ի՞նչոք ժողովականներն ուրախութեամբ ընդունեցին այս առաջարկութիւնը, և շնորհակալ և սեղան: Խնդիրը ընտրութեան գալով, ամէնքն սլ առաջարկեցին Պէզձեանի, թէ ինքն իր վարդապետի համար հաճութիւն տալու:

ըրայ, այն ընդունելի է ամենուն ալ: Պէ՞զ  
 ձեան բաւական ընդդիմանալէն վերջը, Նու-  
 ըրիճան Մատն վարդապետին հասնար կ'առա-  
 ջարկէ թէ ինչպէս, յարմար կը դատեն: Մի-  
 արեջրան հաւանեցան ամենքն ալ, որ Նուրի-  
 ճան Մատն վարդապետը փոխանորդ կարգուի,  
 և միւս Հոռոմեական վարդապետաց մէջ գրե-  
 խառնոր սեպուի. և վերջացաւ ճաշակը:

Պէ՞զ ձեան այս մասին ալ անցաւուղ մնաց.  
 վասն զի գաղտնի զօրութիւնն մը կար, խորա-  
 մանկ, հեռաւտես, մտքերը պլուտոսոզ, արտե-  
 ռուն վրայ բանացող, այս զօրութիւնը՝ որ  
 Հոռոմի արքանեկաց զօրութիւնն էր, իրեն  
 դէմ միշտ ախոյեկան ունէր: Հետեւեալ օրը  
 վերատին ժողով կողմուեցաւ Հոռոմեական  
 սեղանաւորնեցաւ մէջ, և Վարդապետի Մա-  
 ռուշ Պօղոս վարդապետն ընտրուեցաւ փոխա-  
 նակ Նուրիճան Մատն վարդապետի, որ  
 հերեմտիկս Հայուն ընտրածն էր: Իւր օրով  
 հետեւ այս վարդապետն ալ Պատրիարքի հրաւ-  
 մանաւ փոխանորդ պիտի կարգուէր, և կեր-  
 պով մը անոր իրաւաստութեան ներքեւ պիտի  
 ըլլար, որքիչ խորհրդոյ մը ձեռնարկեցին. մը  
 տանեցին թէ ինչ հնարքով կրնան առանձին  
 Պատրիարք և Պատրիարքարան ունենալ, և  
 բարրովին բաժնուիլ իրենց համարին եղբայր-  
 ներէն և զիրենք ծնող Սուրբ և Վարդապետան  
 լիկեղեցիէն:

Ի՞նչ Պատրիարքի հրամանաւ փոխանորդ  
 մը քարեկաւ խորհուրդը՝ մինչեւ առանձին

պատրիարք մ'ունենալու ատփիճանք կը բարձրանայ. երբ մինչև ցարդ մխարանու թեան առ մեն խնդիրներն ի գերեւ կեննեն, և գաղտնի մեքենաներով առնն միջոցներ կը խորտակուին. զարմենալու չէ՛ նաև՝ բարձրովին բաժնու ած մը նալու և բնառ չգալ ու շտեմենալու, կամ միւս թեան առջեւ ահագին խոչնդոտներ և մեծ գծու արու թիւներ հանելու համար հը նարու ած միջոցներուն ալ վրայ: Սակայն գրչիսով ու առնն մասերով կերպաւորուած մարմին մը հարկաւ ատկալու ոյժ և գորու թիւն կըրնայ գոյացնել իր վրայ. և որչափ նոյն մարմնոյն որ և իցէ մասը այս կերպաւորու թեան հետ առանու ալ ըլլայ, մըչափ շանք ալ ի գործ դնէ. գարձեալ այն մարմինը՝ սր ամբողջ է ու ծնագ, և հայրենի առնն որբուզան յիշատակները, սովորու թիւները, արարողու թիւները պահող, դարերու գէժ միցող, Վզու թեան կնիքն, անունն ու բարձր յատկու թիւները իր նախահայրերէն ի վեր առնեցող և անխախտ պահող խիտ մեծագոյն մասն է, միշտ պատրաստ պէտք է գանալ իրիկ անջատուող փոքրիկ մասն որ մ'իր մեջ ընգունելու, և անոր անըզող անարգանայն ու անպատէհ ընթացից ներողամիտ ոգւով ակնարկելու ու սիրով գգուելու զայն:

Քաղաքագիտու թիւնը՝ որ շատ անգամ է՛ն փորձառու և հմուտ գլուխները կը պատրէ, և զանոնք խաղալիկ կ'ընէ աննշան գէպերու, և կը մատնէ անխորհուրդ ձեռնարկու թեանց.

Թշուառ հետեւ անքնեբուն, հասցն զչափ և օ  
 առ աւել այն գլուխները, որ Տիրոջը տաճարին  
 մէջ Ս: Սեղանոյն առջև իրնկարհած, մարդ  
 կային մեղաց քաւութեան ճամուց փասանորով  
 գելու, և աշխարհային ամեն զբարեւն իրնեւ  
 րէ ձեռք քաշած՝ միմայն հանդերձեմը առջ  
 խարհի զրայ խոկարու եւթարկուած եմ, մա  
 նաւանդ անանկ ձեռնարկու թեան ակջ, որ (ոչ  
 ժամանակին հանդարտուաց, ոչ երկրին օրինաց  
 և ոչ Տէրութեան քաղաքականութեան կը  
 պատասխանէ, որով և հետեւ աս թեմայալ յընդ  
 ւակ և նախատինք կը մնայ ձեռնարկու անխոր  
 հուրդ գլուխներուն: Ղիշդ ատանկ եղաւ  
 Հռոմէականաց՝ Ի: Դռնէն Պարսիացք կամ  
 առանձին ազգայեալ ուղեւ խնդիրը, և այս  
 խնդիրն արդիւնաւորելու համար հնարուած  
 միջոցը, ու անոր հետեւանքը:

Սուսաց ընգդէմ Պարսից արտերազմը,  
 որով գրաւեցին Արարապ նահանգը բոլոր  
 շրջակայ քաղաքներով և գիւղերով, որոնց մէջ  
 կը գտնուի նաև Ս: Աջմիածնի փանքը, որը  
 բոլոր Աղին ընդհանրական գլուխ Ս: Կաթու  
 ղիկոսը կը նստի, յարմար պարագայ և միջոց  
 տեսնուեցաւ Հռոմէական Հայոց գլուխնե  
 րուն: Ասով առիթ գտան իրենց խնդրոյն նիւթ  
 և փաստ գտնելու թէ. Հայք միանալով Սուս  
 սաց հետ մեծ ջարդ տուին Պարսից, և ազա  
 տուելով Պարսից հպատակութենէն, կը խոր  
 հին յարձակիլ նաև Օսմանեան Տէրութեան  
 սահմանները, և օգնութեամբ Սուսաց միաւ

նաւոր թագաւորութիւն մը կանգնել համ .  
 Հասմի եկեղեցւոյն յարող Հայերն ալ թէպէտ  
 Հայոց եկեղեցին ոչ կը յաճախեն, և ոչ ալ  
 անոնց հետ ի հոգեւորս հաղորդակցութիւն  
 ունին, սակայն որովհետեւ ՚՛ . Իրան առջե  
 իբրեւ մէկ ՚՛ղգի անդամ և մէկ Պատրիարքի  
 իրաւասութեան ներքե կը ճանչցուին . ուստի  
 երբ անանկ ապօրոտմբութեան խորհուրդ մը  
 երևան ելնէ, իրենք ալ անոնց միաբան և միա  
 խորհուրդ պիտի երևան, և իրենց հաւատար  
 մութիւնը ու հարազատ ծառայութիւնը ոչըն  
 չանալով, իրենք ալ արժանի պատուհաս կրե  
 լու ենթակայ պիտի ըլլան . արդ ասանկ աղէ  
 տայի վախճանէ մը ազատուելու, և բնաւ  
 կասկած մը չտալու համար հարկ է կանխաւ  
 ծանուցանել Սուլթանին . և խնդրել որ ա  
 ռանձին Պատրիարք կամ ՚՛ղգապետ մ' իրենց  
 շնորհէ, որպէս զի ՚՛ . Իուռն և ս զիրենք բռ  
 լորովին բաժնուած և առանձին ազգ, և բը  
 նաւ ի հոգևորս և ի մարմնաւորս ՚՛ղգին հետ  
 անհաղորդ ճանաչէ . ՚՛յս մտք ահա խմբագ  
 րուեցաւ աղերսագիր մը և տրուեցաւ Սուլ  
 թանին, ամենամեծ ապահովութեամբ յաջ  
 դութեան գործոյն, միջնորդութեամբ խոսրով  
 Սէհէմմէտ փաշայի՝ որ խիստ երեւելի և  
 Սուլթանին ալ սիրելի էր :

Թէպէտ ( )սմանեան պատմութիւնը ծայ  
 րէ ի ծայր լեցուն է Սուլթաններուն և շատ  
 անգամ Նախարարներուն մեր ՚՛ղգին վրայ  
 ցուցըցած մարդասիրական ազնիւ զգացմանց

ապացոյցներով, գակայն խիստ մեծ և առաջին կարգի մարդասիրական շնորհ մը կը համարինք որուած աղերսագրոյն նկատմամբ՝ Սուլթանին դարձեալ մեր Ազգին հաւատարմութեան և երախտագիտութեան վրայ ունեցած հաստատուն վստահութիւնը, և առանց խուզարկութեան և քննութեան լոկ Պատրիարքի երաշխաւորութեամբ բաւականանալը: Վասն զի երբ Սուլթան Սահմուտ աղերսագիրը կը կարդայ, կանչել կուտայ Պէզճեանը, և գրեռւածներուն բացատրութիւն կ'ուզէ:

Պէզճեան՝ որ կը յուսար թէ Հռոմէականք ազանձին պատրիարք խնդրելու համար աղերսագիր տալու չափ թերևս խելամտել կարող ըլլան, բայց այնչափ խորունկ քաղաքագիտական դաւածանութիւն մը մտաբերելինն ոչ կըմար տկնկալել, և ոչ իսկ ատանկ սոսկալի վատութիւն մը անոնց համար կրնար մտքէն անջրնել, առանց վազանելու՝ միտք մի Սուլթանին կը ներկայացնէ Վաղատայի Հռոմէական հայոց անհաշտ ատելութիւնը և թշնամութիւնը Հայոց Ազգին հետ, և թէ՛ Պատրիարքը ըստ սրում պատասխանատու է Ազգին համար, ան կրնայ երաշխաւորել բոլոր Ազգին համար:

Սուլթանին հրամանաւ Աղարգոսը Իուզը կը կանչէ թէ՛ կարասիտ Պատրիարքը և թէ՛ Պօղոս նախորդ Պատրիարքը: Եւ հարցուէ թէ՛ կրնան համարձակիլ և յանձն առնուը կրաւոր ըլլալու Օսմանեան Տէրութեան մէջ

գտնուող բոլոր Ազգին համար, անհաւատարմութեան և ապստամբութեան ցոյց մը և նշան մը բնաւ չերևալու պայմանաւ :

Պօղոս Եպիսկոպոս կը յառաջէ, և աներկիւղ կ'ապացուցանէ Հայոց Ազգին հաւատարիմ, հլու և տիրասէր ընթացքը, և Օսմանեան Տէրութեան շնորհիւ անդօրր և խաղաղ կեանք վարելով՝ ամէն օր աղօթող ըլլալը թէ Աւատագութ Սուլթանին և թէ անոր արդարասէր նախարարաց համար, և թէ ինք և թէ Պատրիարքը ըստ ամենայնի կ'երաշխաւորեն բոլոր Ազգին համար, ապահովցնելով օր ապստամբութեան վատ խորհուրդ մը բնաւ մտքէ անգամ անցած չէ :

Կրկին կը հարցուի . Ուսկից կրնաք գիտնալ հեռաւոր քաղաքներ բնակող ազգայնոց խորհուրդները, և ի՞նչպէս ապստամբութիւն չծագելու համար զմեզ կրնաք ապահովցնել, միթէ ինչ որ կ'ըլլայ՝ ձեր խորհրդովը կ'ըլլայ :

Կը պատասխանէ Պօղոս Եպիսկոպոս . Քրիստոնէական Կրօնիս մեջ ամենահարկաւոր խորհուրդ մը կայ, այն է որ ամէն մարդ իր սրտին գաղտնիքը սրտտականէ յայտնելու քահանային, և ինչ չար որ գործէ թէ բանիւ, թէ գործով և թէ խորհրդով՝ պիտի խոստովանի և թողութիւն խնդրէ Աստուծով : Քահանայն ալ կը խրատէ ու կը յորդորէ պայն՝ հեռու կեանալու չար ու անիրաւ գործերէ, որ ատելի են Աստուծոյ և մարդկան : Արդ եթէ քահանայք այդպիսի խորհուրդ մը նշմարեն և լսեն

իրենց ժողովրդէն, իսկոյն կը գրեն և կը ծա-  
նուցանեն մեզ, որ առաջն առնենք : Եւ ահա  
այս պատճառաւ բոլոր Լճիկն համար կ'երաջ  
խաւորենք, միայն Կաթիկ լսուած մաս մը հա-  
յերու չենք կրնար երաշխաւորել, որսնք ոչ  
մեր եկեղեցին կուգան, և ոչ մեր քահանայից  
կը իտժտովանին :

Համոզուեցու Լպարդոսը, և գրեց Սուլ-  
թանին ինչ որ լսեց Պատրիարքէն :

Շատ չտեց, Թնկրեան Յակոբ ի Կեսա-  
բիա, և եղբայրը Յովսէփ ի Սեբաստիա աք-  
սորսեցան իրենց ընտանիքներով հանդերձ,  
1827 հոկտ. 3ին :

Յունաստանի ապստամբութեան ժամանակ,  
երբ Օսմանեանց նաւատորմիդն ի Նաւարին  
այրեցաւ Եւրոպացւոց նաւերէն, Սուլթան  
Սահմուտ յանդիմանելով Քաղզիոյ Ընդդիայ  
և Ռուսաց դեսպանները ճամբեց, և պատե-  
րազմ հրատարակեց ընդդէմ Ռուսաց :

Հռոմէական Հայերն ալ որովհետև մին-  
չե ան ատեն ըստ ազգունի կամաց չեկան ու  
չմիտարանեցան Լճիկն հետ, և միշտ յարա-  
բերութիւն օւնէին Եւրոպացւոց հետ. ուս-  
տի Սուլթանը հրովարտակ խրկեց Հայոց  
Պատրիարքին, որով հետևեալ հինգ պատ-  
ուէրները կ'ընէր :

Ա. Իճոր Վազատացիներն իրենց հայրե-  
նիքն աքսորուին :

Բ. Հռոմէական կարգաւ որները յԵւրո-  
պա աքսորուին :

Գ. Պօլսեցի Հռոմէականներէն որոնք որ չհնազանդին Հայոց Պատրիարքին՝ արսորուին յԱնատօլու :

Դ. Սարապետները նոյնպէս արսորուին :

Ե. Հռոմէականք չնստին ի Ռեբա, ի Վալաթիա, և Լուրսպացի գտնուող գիւղերը, այլ ուրիշ հայաբնակ տեղերը բնակին :

Պատրիարքարանն այրած ըլլալով, Ստեփանոս Ս. Գեորգ եկեղեցւոյն մէջ, հրաւիրուած Լուսաւորչական և Հռոմէական մեծամեծաց և արուեստաւորաց ներկայութեանը կարգացուեցաւ հրովարտափր :

Սկսաւ արսորը. նախ Վաղատացիք արսորուեցան 1827 դեկտեմբեր 27ին. և որովհետեւ հրովարտակին մէջ որոշ չէր բացատրուած, Լուսաւորչական Վաղատացիներ ալ արսորուեցան, ինչպէս եղան ծերունի Պաղտ վարդապետը, սարրաֆ կարապետ և ուրիշներ : Ետևան վար 27ին ալ Պօլսոյ մէջ տեղափոխութիւններն եղան. փետրվար 6ին ալ կարգաւորներն արսորուեցան յԼուրսպա. փետր, 28ին ալ մարապետներն արսորուեցան 30ի չափ ի Փանտրմա, և 11ի չափ ալ ի Սահալլա :

Իսկ այն Հռոմէականները՝ որոնք նոյն տարին ապրիլ 29ին Սուրբ Հաղորդութիւն առին Հայաստանեայց Ազգափառ Սուրբ Եկեղեցիէն, ինչպէս էին Տիւղեան Եպիսկոպոս, Ելլահվէրտեան Եպիսկոպոս և Երրաստամ Կաթողիկոս, Չամչեանք, և ուրիշ երևելի գեղաստաններ, հանգիստ մնացին Կ. Պօլսոյ հայաբնակ գիւղերուն մէջ :

## ՊԵՋՃԵԱՆԻ ԲԱՐԵՊՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ .

Մինչեւ ցարդ ժամանակագրական կարգով՝ Պէզճեանի կենսագրութեան հետ անմիջական յարաբերութիւն ունեցող ազգային գլխաւոր դէպքերու պատմութիւնն ալ շարունակեցինք . այսուհետեւ կ'անցնինք Պէզճեանի մեծամեծ բարեգործութիւններուն , բարեպաշտական նշանաւոր գործերուն , և թէ՛ (սմանեան Պետութեան և թէ՛ Ղզգին մատուցած երեւելի ծառայութեանց պատմութեանը :

Պէզճեանի գթասէր և բարեսէր ոգին այնչափ մեծ համբաւ ստացած էր , որ ամէն կողմէ և ամէն ազգէ կարօտեալներ իրեն կը դիմէին և պարապ չէին դառնար , որով Պէզճեան առանց բարեգործութեան օր չէր անցըներ : Շատ աղքատներ և տնանկ գերդաստաններ իրենց վերջին յուսահատութեան վիճակին մէջ ո՛չ միայն ժամանակաւոր միտիթարանաց շնորհ մը կ'ստանային Պէզճեանէ , այլ և իրենց արուեստը մշակելու կամ ուրիշ առևտուր մը բանալու և մշտնջենապէս ապրուստնին հոգալու հաստատուն դրամագլուխ կ'ընդունէին :

Պէզճեան , այն առատագութ և բազմերախտ սիրտն ալ մի միայն իր միտիթարութիւնը բիւրաւոր կարօտեալներու օրհնութեանց և բարի հայցուածոց մէջ կը գտնէր . և այն վտանգալից վիճակին մէջ իրեն զօրավիզ՝ աղ-

քատին բարեմարտութիւններն ունէր . որով միշտ պարզերես՝ իր պաշտօնակներ մէջ, յարու դակ՝ իր ծանր և բազմակիճիւն ձեռնարկութեանց մէջ, և անձերբակալ իրեն չէմ բարեւոյճ որոգայթներուն մէջ կը գտնուէք ի մեծ նախատինս իւր խնայեաց և նմիանձուտ օրը տերու :

Արքունի նաւարանին մէջ Բ. Գրան կողմանէ եկեղեցի մը իր շորս որմերով և առաւ տաղով շինուած յանձնուեցաւ Ազգիս, որ պէս զի անոր շինութիւնն աւարտի : Պէզձեան յանձն առաւ զայն իր քսակէն շինել աւարտել տալու, և եկեղեցական քանն կարելորասպասներով և անօթներով զարդարելու : օժման օրը զայն Ե) : Յարութիւն անուանակոչել տուաւ ի փառս Ե) : Յարութեան Փրկչին մերոյ : Էւ որովհետեւ այս եկեղեցին իրեն սեպհական ժողովուրդ շունի, որ քահանայ մը շահելու չափ կարող ըլլայ, Ե) : Աստուածածնի Ե) այր Էկեղեցւոյն հինգ հազար զուրուշ յանձնեց, այն պայմանաւ որ ամսէ ամիս 50 զուրուշ շահը տրուի Գասըմիաշայի Ե) : Յակոբ Էկեղեցւոյն քահանայից դասուն, որոնք փոփոխակի կարգաւ ամէն ամիս նորաչէն Ե) : Յարութիւն Էկեղեցւոյն քահանայագործութիւնը կատարեն : Այս կարգադրութիւնը Ե) այր Էկեղեցւոյ դիւանին մէջ արձանագրել, և Պատրիարքի ու եկեղեցականաց ստորագրութեամբ զաւերացնել տուաւ :

Ասկէ յադաջ 1826 յուլիս 8 ին պատահած

մեծ հրդեհին . որուն երկայնութիւնը Պահ ձեգարույնն մինչեւ 1 անկա , և լայնութիւնը 1, 1/2 անկա միայնն մինչեւ . Սուլթան Պայազետ եր , պրեցան ոչ միայն փայտաշէն շինուածնե-  
րը . այլ և քարուկիք շինուածներ , պանդոկ-  
ներ , մզկիթներ , բաղանիքներ , նաև 11 այր  
Լիկեղեցին Գուճաքույի և Լճգային Պատրի-  
արքարանք : 11 եծ եզու Վեզձեանին ձեռն  
առուութիւնն ալ հրկիզեալներուն . շատ դրամ  
առուա նայն իսկ Եւրոպեոս Պատրիարքին , որ  
ասգիս անոյին անձամբ շրջելով պրժանաւոր  
հրկիզեալներու բաշխէ , և զամէնքն ալ միւ-  
թարե , առանց առաջին անունը տալու : 11 չ  
միայն Հայոց ըսաւ այս բարեբարութիւնը ,  
այլ Եունաց և Տաճկաց իսկ իմամներու ձե-  
ռք . սմանց համար տուն շինել , սմանց բնա-  
կութեան տեղւոյ վարձ , սմանց կարեւոր կահ  
կարասիք , և ուրիշներու ալ աւար պարէն  
տալով :

Ըյս միջոցներուն մեջ ուրիշ ազգագուտ  
մեծ բարեգործութիւն մ'ալ ըրաւ . Պալատ  
ցի Գեորգ Պատուելիին բազմափաստակ եր-  
կասիրութիւնը , Պարսկերէն և Հայերէն մե-  
ծահատոր Խառարանք Փէշտրմալձեան Գրիգոր  
վարժապետին քով գաննելով , ի յիշատակ իւր  
անուանը տպագրութեամբ ի լոյս ընծայել  
առուա . սրբագրութիւնն և ուրիշ ծանօթու-  
թիւնները յանձնելով Տիւզեան Եակոբ չելե-  
պիին : Ըյս կերպով երեք կերպ բարեաց պատ-  
ճառ եզու , մէյ մ' որ հեգինակին բազմափա-

տակ երկասիրութիւնը կորստեան կամ ուրիշին հեղինակութիւն տեփականութեամբ վտանգէն ազատեց . երկրորդ՝ Պարսկերէնի հետեւող անձանց մեծ դիւրութիւն մատայց . երրորդ՝ որ ամենէն առաւելն է, այնպիսի մեծագիր և մեծածախ տպագրութիւն մը ձրի ընծայեց Ղզգիս, ամէն գարացներու, մինչեւ հեռաւոր երկիրներ խրկել չզանալով:

Ո՛րք ատոր նման փութաց նաև ձեռնտու ըջալ Վենետիկի Միթարեան Հարց խմբագրած Հայկազեան ընդարձակ Ռառարանին տպագրութեանը. զոր չկրցաւ տեսնել իր կենդանութեանը. բայց իր ուսումնասիրութիւնը և Ղզգին մտաւորական զարգացմանը վրայ իր ժամանակին պահանջմանէն աւելի ջանք ունենալը հաստատեց թէ այս և թէ սակէ ետքը պատահած ուրիշ պարագաներու մէջ, ինչպէս սիրտի տեսնենք յետոյ:

Մտակնկալ ժամանակներու մէջ Սուլթանին կողմանէ ստեղծուած կանչուելուն համար, Պէղծեան ալ իր բնակութիւնը Վէնիգարույն (Օրթագիւղ փոխադրեց 1824ին):

Ըյս տեղափոխութիւնը զինքը դարձեալ մեծ բարեգործութեանց առաջնորդեց. Պէղծեան (Օրթագիւղ գալուն պէս, տեղւոյն եկեղեցւոյն եկեղեցականներն ալ շունչ և ոգի առնել սկսան. և որ մը խոստովանահայր քահանային միջոցաւ պատեհութիւն գտան իմաց տարցաւ եկեղեցւոյն պարտքը շինութեան ժամանակէն մնացած՝ 100 հազարէն աւելի:

Պէզճեան որ իր խորագէտ հանձարով ազէկ տեղեկութիւն ունէր եկեղեցականութեան վիճակին, մուրացկանութեան եղանակներուն, և պարտուց դիզման պատճառներուն, ազէկ հարցութիւններով ստիպեց զանոնք. և վերջապէս իմացաւ թէ եկեղեցւոյն շինութեան ժամանակը թէպէտ ոմանք ձեռնտուութիւն ընել խոստացած են, և իրենց անունն ալ դրանց վրայ յիշատակարաններու մէջ արձանագրել տուած, բայց յետոյ բան մը վճարած չեն: Աստի Պէզճեան սրտմխտելով այն անպիտաններուն վրայ, յիշատակարանաց արձանագրութիւնները ջնջել տրւաւ. և ինք հատուցանելով պարտքը, զարդարեց նաև եկեղեցին ընտիր ընտիր զարդերով, նախիրելով եպիսկոպոսական և քահանայական ամբողջ զգեստներ օսկեթել յօրինուածով կարմիր բեհէզներու վրայ, ակունակապ գաւազան, նաև գեղեցիկ շուրջաններ, փորուրարներ, սաղաւարտներ, սկիհ, և սկիհի ծանր ծածկոցներ, արծաթեայ մեծ խաչեր, բուրվառներ և քշոցներ, արծաթապատ Վետարաններ, խիստ ընտիր վարագոյրներ. և այլն. ևն. ամէն տեսակ եկեղեցական զարդեր. որոնցմով (Օրթագիւղի Ա. Այկեղեցին պճնուեցաւ. և տեղւոյն եկեղեցական աղաներն ալ փառաւորուեցան:

Պուճաբույի Մայր եկեղեցւոյն այրմանէն վերջը, դեռ շինութեան հրովարտակն ևլած չէր, երբ օր մը Պէզճեան Լէնիգարու

բաղանիք գնաց, և Սուլթանէն կանչուեցաւ : Պէզճեան կը փութայ անմիջապէս արքունահան պալատն երթալու : Սուլթանը տեղեկացած ըլլալով Պէզճեանին բաղանիքէ գալը, կը հարցընէ թէ հանգիստ էիր բաղանիքին մէջ : Պէզճեան որ ասանկ բարեպատեհ առիթները չէր կորսնցնէր, մանաւանդ թէ ինք կը հնարէր և կ'ըստեղծէր, խոնարհելով Սուլթանին՝ կ'իմացնէ թէ, տակաւին այրած եկեղեցին աւերակ մնացած ըլլալով, նոյն օրը կիրակի, ցուրտ և խոնաւ օդի մէջ, գլխիբաց աղօթքի կեցեր, և մտելով բաղանիք երթալ փութացեր է : Սուլթանը կը հրամայէ որ նոյն եկեղեցին առջինէն աւելի չքնաղ կերպով շինուի : Պէզճեան արտասուալից ուրախութեամբ կը համբուրէ Սուլթանին ոտքը, և տուն դառնալով իր հետագնաց սպասաւոր Թէլլի Պ. Յարութիւնը աւետաւոր կը խրկէ առ կարպետ Պատրիարքն :

1828 փետրվար 3, Բուն Բարեկենդանի օրը եկաւ արքունական հրովարտակը շինութեան Սայր եկեղեցւոյն, և Պէզճեան իսկոյն հրաւիրելով արքունի ճարտարապետ Վրիգոր ամիրան, և Ս. Տէփէթ կարապետ ճարտարապետը, եկեղեցւոյն ձևը գծագրել պատրաստել տուաւ անոնց : Փետրվար 10ին հիւննադրութիւնն եղաւ, և շինութիւնն անընդհատ տեւեց մինչև սեպտեմբեր ամսոյ վերջը : Ենուածքը խիստ փառաւոր և ընդարձակ եղաւ, երեք մեծ և երեք քիչ փոքրագիր եկե-

ղեցիներ՝ բաց ի աւանդատուներէն . և պա-  
հարաններէն . եկեղեցւոյն հիւսիսային կողմը  
Հայ լեզուի դասախօսութեան համար Աւ-  
սուսնարան մը, և հասարակ ընթերցանու-  
թեան և երաժշտութեան համար վարժոց մը .  
Ասուսնարանին մերձ ալ մեծ աւազան մը,  
միշտ ջրալից պատրաստ, և անոր քով հրաշիւ  
ջոյց ջրհաններու և ջրհանակիրներու սենեակ-  
ներ, եկեղեցւոյն դիմացն ալ Ըզգային Պատ-  
րիարքարանը վայելուչ ձևով շինուեցան :

Հոկտեմբեր 14ին եղաւ Ա . Եկեղեցւոյն օ-  
ծումը այնպէս հանդիսաւոր կերպով, որ անոր  
նմանը դեռ մինչև ան ատեն Պօլսոյ մէջ տեւ-  
նուած չէր . առաջին Այր Եկեղեցին օծեց  
Կորապետ Պատրիարք յանուն Տիրամօր Ա .  
Կուսի ի պատիւ հրաշալի Վերսիոխման Եւ-  
րին : Երկրորդը՝ որ անոր հիւսիսային կողմը  
կ'իյնայ, օծեց Եստուածատուր Ըրքեպիսկո-  
պոսը յանուն Ա . Խաչի : Երրորդը՝ որ Այր  
եկեղեցւոյն հարաւային կողմը կ'իյնայ, օծեց  
Երեմիա Ըրքեպիսկոպոսը յանուն սրբազան  
առաքելոցն Զակորայ և Զովհաննու՝ որդւոցն  
Արտաման . Այր . և Ա . Խաչի եկեղեցիներն  
անջրգետող եկեղեցին օծեց Զովհաննէս վար-  
դապետ Ա . Երուսաղէմի պատրիարքի փոխա-  
նորդը յանուն հրաշափառ Զարութեան Բրիւ-  
տոսի ի խնդրոյ Պէզնեան ջերմեանդ ամիրա-  
յին : Որդւոցն Արտաման եկեղեցւոյն կից ե-  
կեղեցին օծեց պատրիարքական փոխանորդ  
Խարժաղիմեսու վարդապետ յանուն Ա . Օնըն .

դեան Քրիստոսի : Եւ վեցերորդը՝ որ ՍԻՍԱՅ  
եկեղեցւոյն հիւսիսային կողմը կ'իյնայ, օծեց  
Անդրէաս վարդապետ յանունն Ս. Հրեշտակա-  
պետաց :

Շատ դիւրին է մակարերելը թէ այսպիսի  
մեծամարմին շինուածքի մը համար որչափ մեծ  
աշխատութիւն և հոգ և մեծագումար դրամ  
կը հարկաւորին . բովանդակ ծախսը երեք մի-  
լիոն դահեկանն անցաւ , որ նոյն ժամանակի  
համար նշանաւոր գումար մ'է . և իւրաքան-  
չիւր ազգային ըստ կարողութեան ձեռնտու-  
եղաւ այս շինութեան ծախուցը . մանաւանդ  
հարուստ սեղանաւորները , որոնց ինչպէս  
Պէդճեանի կենաց միջոցին ունեցած տուրքն  
ու սղորմութիւնը խիստ առաւել կը գանուի  
բազդատմամբ իրենց ուրիշ ատեն ունեցած  
տրոցը , նոյնպէս ալ անիրաւութիւններնին և  
ղրկանքնին խիստ նուազ բազդատմամբ ուրիշ  
ատեն ըրած զրկանքներնուն . երկուքն ալ վա-  
սըն ահին Պէդճեանի : Սանգի Պէդճեան ոչ  
միայն առատասիրտ էր տնանկներու , աղքատ-  
ներու , տառապեալներու , և ազգային բա-  
րեգործութեանց մասին , այլ և ահաւ սար-  
սափ անօրէններու , բռնաւորներու , հարրու  
տահարողներու և փարթամութեամբ ճոխա-  
ցող անձնապաշտներու , մինչև իւր անունը  
բաւական էր զանոնք սարսեցնելու և իրենց  
խորհրդոց մէջ զիրենք կործանելու . այս երկու-  
յտակութիւններովը , այսինքն Ազգին բարեք-  
րներու , և Ազգին չարիք կամեցողներու պա-

տուհասեղու ձեռնհաս ըլլալովը ԱԶԳԱՅԻՆ ԱՆ-  
ՋՈՒԳԱԿԱՆ ԲԱՐԵՐԱՐ կոչուելու արժանաւորու-  
թիւնն ստացաւ :

Ասանկ Ազգային շինուածոց կամ ուրիշ պի-  
տոյից համար դրամ պէտք եղած միջոցին, կը  
ժողովէր սեղանաւորները, և նախ ինք նշանա-  
ւոր գումար մը նպաստ կը գրուէր. յետոյ իւ-  
րաքանչիւրն ինք կը նշանակէր իրենց կարողու-  
թեան համեմատ. յետոյ ցանկը կը ցուցնէր  
անոնց, և ո՞վ պիտի համարձակէր ըսել թէ  
կարողութիւն չունիմ կամ չե՛մ ուղեր այնչափ  
գումար մը վճարել. դժկամակողին բան մը չէր  
ըսեր, բայց շուտով նոյն ինքն կը զզւար, և  
կրկինը վճարելով կը զիջեցնէր Պէզճեանի սիր-  
տը. երբեմն ալ Պէզճեան ինք դիտամմբ ցան-  
կէն դուրս կը թողուր այն անձը՝ որուն գտն  
սրտով նուիրատու չըլլալը գիտէր, բայց միւսը  
գիտնալով հետեւանքը, աւելի կը պաղատէր և  
կ'աղերսէր Պէզճեանին որ այն բարեգործու-  
թենէն զինքը չզրկէ, և եթէ Պէզճեան զիջա-  
նէր իրեն՝ շնորհք մ'ըրած կը սեպուէր. այս-  
չափ մեծ էր Պէզճեանի ազդեցութիւնը, և  
փոխանակ աւնողին ազերսել տալու, տուողին  
պաղատել կուտար շատ անգամ. յետոյ ինք իր  
բաժինը կը յանձնէր որու որ պէտք էր յանձ-  
նել, առանց ժամանակ անցնելու միւսներն ալ  
իր օրինակին կը հետեւէին: Ասանկ շատ անգամ  
ոպատահած բըլալը դեռ կենդանի անձինք կը  
վկայեն. և մեզի ալ կը թուի թէ ազգային  
փոքր նպաստի մը դանդաղող կարող ձեռաց

այսպիսի հարուածող մ'ունենալը մեծ բաղդ է .  
 Եւրոպայում նպաստները երկու միլիոնի  
 հասան . գրեթէ կէս միլիոնի չափ սլ Պէդճեան  
 ինք վճարած էր . սարսաքը մնաց հազար երկու  
 հարիւր քսակ : Պէդճեան սիրով յօժարեցաւ  
 այս պարտքն ալ ամբողջ վճարել Սախայեան Ս .  
 Սարտիրոս աղային ձեռք , որ եկեղեցւոյն  
 հոգաբարձուն էր . այս պայմանաւ որ մէկ քը-  
 սակին հարիւր փարա շահ հաշուելով՝ ամսէ  
 ամիս երեք հազար ղընուշ շահը եկեղեցւոյն  
 հոգաբարձուները մշտնջենապէս վճարեն , եր-  
 կու հազար հինգ հարիւրը եկեղեցւոյն Ու-  
 սու մնարանին և վարժոցին , և հինգ հարիւրն  
 ալ Խարգալի դպրոցին , զոր ինք կառուցած  
 էր : Կեղեցիկ հեռատեսութեամբ և իր բա-  
 րեգործութիւններուն յիշատակը յաւիտեան  
 պահել տալու սուրբ խորհրդով Պէդճեան այս  
 նպատը կը շնորհէ անխախտ կտակաւ : Պէդ-  
 ճեան կ'ըզգար որ եկեղեցւոյն պայծառու-  
 թիւնը դպրոցներով կ'ըլլայ , և գիտէր նաև  
 իր ժամանակի մարդոց գաղափարը , որոնք չէին  
 ըմբռներ թէ՛ դպրոցն ինչ է . անոր համար  
 դպրոցն ուրիշ , եկեղեցին ուրիշ , և թերևս  
 եկեղեցւոյն եկամուտը դպրոցի յատկացնելը  
 մեղք անգամ սեպէին . ( իրենց քսակը լեցնելը  
 աւելի վարձք սեպելով . ) ուստի ասանկ տնօրէ-  
 նաւ թիւն մը խորհեր ու որոշեր է որ եկեղե-  
 ցին պարտաւ որ ըլլայ դպրոցը խնամել անխա-  
 փան : Եսնք վկայուած և Պատրիարքի և իշ-  
 խանոց վաւերացուցմամբ հաստատուած բա-

րեգործութիւններն են որ մենք գիտենք և հիմա ի լուր աշխարհի կը հռչակենք. զի գիտեայն առատաձեռն անձը ուրիշ ինչ բարեգործութեանց որոշումներ ունեցեր է արդեօք, և զանոնք գործադրելը սրմնց և ինչ եղանակաւ յանձնած է, իր անունը ծածկելու ստիպուելով թերևս ժամանակին քաղաքականութենէն, և թէ՛ արդեօք յանձնարարութիւններն ամբողջ և ըստ կամաց Պէզճեանի կատարուած են . . . :

Պէզճեան խիստ ծանրագին և խիստ ընտիր եկեղեցական ամէն տեսակ զարդեր անթերի ընծայեց նաև Սայր Լիկեղեցւոյն ալ, նայնպէս Իւսկիւտարու Դ) . Խաչ եկեղեցւոյն, որոնց ամէնուն վրայ իր յիշատակութիւնն արձանագրուած պահուած է : Եւսև կը հաւատեն մեզի թէ գաւառներուն մէջ ալ շատ եկեղեցիներ կը կրեն Պէզճեանի մէկ և աւելի յիշատակն եղած եկեղեցական զարդեր :

Ընանց մոռնալու հոս կը յիշատակենք ևս թէ Պէզճեանի քոյր Համասիիւռ բարեպաշտուհի տիկինն իր ծախիւքը հիմէն նորոգել տուաւ Լյուսօի Դ) . Լիդիայի եկեղեցին, իսկ անոր զարդարանքը Պէզճեան հոգաց :

Երկայ ժամանակիս մէջ չորս կողմերնիս նկատելով, և սոյն օրինակ բարեգործութիւն սիրողի, և անձնուրաց ազգասէր անձի նուազումը դիտելով, պիտի կրնայինք խղճի դէմ չափազանց կամ աւելորդ գովաբանութիւններ համարել մեր ըսածները, եթէ անոր ժամա-

նակակից անձերն անձամբ չվիրյէին , և մեր  
 պատմածները տակաւին շատ համառօտ և հա-  
 րեւանցի ըլլալը մեզի չհաստատէին . միանգա-  
 մայն մեր շուրջը գտնուող Սայրաքաղաքիս  
 գլխաւոր եկեղեցեաց ծանրագին զարդերուն  
 յիշատակարանները , և դպրոցները , ևն ևն .  
 ամէնքն ալ կենդանի ապացոյցներ և վկաներ  
 չըլլային մեզի : յամանակը շատ հաւանական  
 է որ մեծամեծ ազգային բարերարներ մոռա-  
 ցութեան մէջ թաղած է , և ասոր համար է  
 որ , չգանգատինք բնաւ , հիմա գժուարին կ'ըլ-  
 լայ մեզի արժանաւոր բարերարներ ունենալը .  
 վասն զի երախտաւորները պատուելու մասին  
 շատ յեաթն ենք : Պեղձեանի համար ալ թե-  
 րեւս ասանկ ըլլար , և ժամանակ անցներով  
 այնչափ մոռցուեր , և այնչափ անխնս սեպ-  
 ուէր , որ մինչև անգամ հնակարկատ հրէի մը  
 չափ ալ պատմութեան մէջ տեղ բռնելու չոր-  
 ժանանար . և իրեն ասանկ պիտի ըլլար , եթէ  
 ուսումնականութիւնը առանձնաշնորհում մը  
 կամ մի և նոյն աղբիւրէ ջուր խմող կարգ մը  
 գրագէտներու սեպհականութիւնն ըլլար : Ոչ  
 ապաքէն նոյն իսկ մեր ամիրաներէն ոմանք  
 Պեղձեանի մահուընէն ետքը ջանացին անոր  
 յիշատակը ջնջելու չափ հնարքներ ի գործ դը-  
 նել , երկիւղներ կեղծելով , և զանազան պա-  
 տրուակներով իրենց ներքին սխր և չարակա-  
 մութիւնը ծածկել հնարելով :

## Գ Լ ՈՒ Խ Ի Ժ Գ .

ՃԱՐՏԱՐԱԳՅԵՏ ԳՌԻԳՈՐ ԱՄԻՐԱՑԻՆ ԱՔԱՐԻՆ ՈՒ  
ՎԵՐԱԴԱՐՁԸ : ՄԵԾ ՍՈՎԱԻՆ ԺԱՄԱՆԱԿԸ Կ . ԳՕԼ .  
ՍՈՅ ԱՆՔԱՏ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ՅԱ-  
ՆԱՏՈՒՄ ԱՔՍՈՐՈՒԵԼԵՆ :

Սուլթան Մահմուտ իր արքունի պալա-  
տան բաղնիքին շինութեան կերպին վրայ  
տհաճելով կը զայրանայ , և ճարտարապետ  
Գրիգոր ամիրած արքայի կուտայ , քի կեսարիա  
(1827) :

Պէզճեան որ ճարտարապետ ամիրային ե-  
րախտիքը կը ճանաչէր , ու շատ կը սիրէր զին-  
քը , բարեպատեհ առիթ մը կը փնտռէր Սուլ-  
թանին ցասումը իջեցնելու , և Վիրան ար-  
տրէն աղատելու : Մանազանի օրերուն մէջ  
(Սամանցիք սոփորութիւն ունին ընտիր հա-  
մամներով են պատուական կերակուրները ճա-  
շտիկէլ . Սուլթանն ալ շատ կը սիրէր պատուա-  
կան ապուխտ , ուստի Պէզճեան փութացաւ  
ընտիր ապուխտ գտնելով ընծայ տանիչ Սուլ-  
թանին : Սուլթանը շատ ախորժեց , և ուսկէ  
գտնելը հարցուց Պէզճեանին : Պէզճեան եր-  
կրպագութիւն ընելով իմացուց թէ , հա-  
ւատարիմ ծառայն Գրիգորը խրկած է կեսարի-  
այէն առ Նորին Վեհափառութիւնն : Յիշեց  
Սուլթանը իւր ճարտարապետը , և գոփելով  
Պէզճեանի խոհականութիւնը հրաման ըրաւ  
որ ճարտարապետն արքային վերադառնայ :

Պէզճեան իւր մեծ զարմանքն յայսնեց ի մեծ  
խնդութիւն Սուլթանին ըսելով թէ, ի վա-  
ղճւոց գիտէի որ ապխտով բռնուող և ծաւղակն  
իյնող կ'ըլլայ, բայց չգիտէի թէ ազատուողն  
ալ կ'ըլլայ եղեր :

Պէզճեան այս միջոցին ուրիշ նշանաւոր  
բարերարութիւն մ'ալ ունեցաւ, որուն մէջ  
թէ՛ իր խոհահանութիւնը և թէ՛ աղքատու  
սէր ու ժողովրդասէր բնութիւնը յայսնի կ'ե-  
րևան :

(Օսմանեան Տէրութիւնը ընդդէմ Սաւ-  
ասց պատերազմ բացած ըլլալով տարի մ'ա-  
ռաջ, ցորենի և ընդեղէնի և սարիշ կարևոր  
պիտոյքներու նուազութիւնն երթալով զգաւ  
լի կ'ըլլար և Պոլսոյ մէջ, Մսկէ օր-օրի արձ-  
տունը աւելնալ սկսաւ հասարակ ժողովրդ-  
եան մէջ, մանաւանդ հաճիկ կանայք բազմա-  
թիւ աղերսագրերով Սուլթանը կը շրջափա-  
կէին ուրբաթ օրերը :

Թէպէտ Մանուշուէն ցամաքի ճանսպար-  
հով ցորեն կը բերուէր, բայց խիստ ծանրա-  
գին կ'ըլլար, և ոչ ալ կը բաւէր Վայրաքաղա-  
քիս բազմամբոխ բնակչաց, ու տախտակն մարգ-  
առ հասարակ սովէն կը տալնուպէին, և բա-  
ներնին գործերնին թողուցած փառաբուն  
առջև կը լեցուէին աւուր պարէնը ճարելու  
համար : Մէկ մէկու ձեռքէ հաց յափշտակել,  
զիրար գանել, կին, տղայ և ծերունի սանա-  
կոխ ընել միշտ կը պատահէին փառաբուն  
առջև :

Հրաման ելաւ Սուլթանէն առ բոլոր հր-  
պատակս, որ ամէն ազգի պանդուխտներն ու  
օտարականները երեք մասի բաժնուին, երկու  
մասը հինգ աւուր միջոցի մէջ պատրաստուին  
ճանապարհ ելնելու դէպ իրենց հայրենի եր-  
կիրը, և իրենց առևտուրն ու գործերը հոս  
մնացող միւս մասին յանձնեն. և մէյ մ'ալ որ  
քնիկ Պօլսեցիներէն ամուրիք և տասնամեայ  
ամուսնացեալք երկու մաս Ննատուրու եր-  
թան, որպէս զի մնացեալներուն հաց և պա-  
րէն ճարել դիւրանայ մինչև պատերազմին  
վերջը :

Ինչպէս ամէն հպատակ ազգաց, նոյնպէս  
և մեր ազգային Պատրիարքարանին մէջ կար-  
դացուեցաւ արքունական հրովարտակր : Ին-  
չոր ներկայ եղող ամիրայք սուկացին, և Պէդ-  
ճեան Թեթևցնել ուղերով աղքատաց բաժին  
ինկած տառապանաց մէկ մասը, առաջարկեց  
ժողովեալներուն, որ խրենցմէ ամէն մէկը  
նախ փութայ իր ընտանիքը և ըստ ձեռնհա-  
սութեան իւրոյ ազքատ ընտանիքներ ալ հետ  
առած ուքիշ երկիր երթալու, որպէս զի աղ-  
քատը՝ որ աւուր պարէն ճարելու միջոց չու-  
նի իր ձեռքը, զերծ ըլլայ այս նոր ու տար-  
ժանելի տառապանքէն : Հաճեցան ամէնքն  
ալ այս խորհրդոյն, և հրաման եղաւ քահա-  
նայից որ իրենց ժողովուրդները գրի անցընեն :

Այլ Պէդճեանի սիրտն անհանգիստ էր, և  
ոչ այնչափ գոհ սոս անօրէնութեան վրայ, վա-  
ւրն զի ոչ միայն իր ազգակիցները կը խորհէր,

այլ միւս ամէն ազգի անհատներն ալ : Սուր  
Թանը Աստիղ-լէֆիլիին կը նստէր ի պահպա-  
նութիւն Սահմէտական դրօշին , հոն գնաց  
Լիֆիլին գիշերը և Պէզճեան : Սուրթանն ու-  
շադրութիւն մատոյց Պէզճեանի , և անմիջա-  
պէս հրաման հանեց թէ ով որ ուզէ թող  
երթայ Ռուսիի և Անասուրու , և ցորեն կամ  
արիւր բերէ ու վաճառէ հոս ինչ գինով որ  
կ'ուզէ . Տէրութեան կողմանէ ոչ մաքս և ոչ  
իկֆիսադիէ և ոչ ուրիշ բան մը չպիտի պահան-  
ջուի . և այնուհետև եթէ ժողովրդեան պա-  
կասել հարկ ըլլայ , հարուստ գերդաստանները  
թող պատրաստուին երթալու , իրենց հետ  
նաև աղքատներ տանելով :

Այս մտօք հրովարտակ կարգացուեցաւ  
ամէն տեղ , և տաներկու օր չուեց , կ' Պու-  
լիս լցուեցաւ հացի և ցորենի առատու-  
թեամբ : Սուրթանը ինչպէս որ շատ պարա-  
գաներու մէջ նոյնպէս , և այս պարագայիս  
մէջ Պէզճեանի խորախորհուրդ հանձարոյն  
փորձն առնելով , գովեց զնա . « ողջ մնաս  
Յարութիւն , իմ հացս որ կ'ուտես , քեզի յա-  
ւիտենական սնունդ տայ որ ըսելով :

Իսկ Պէզճեան ըստ աղքատասէր բնաւո-  
րութեան իւրոյ հարիւր հազար զուրուշ  
յանձնեց Պատրիարքին որ աղքատաց բաշ-  
խէ : Ամէն շրթունք բարեմաղթութիւններ  
կ'ընէին վասն կենաց Սուրթանին , օրհնելով  
ևս զՊէզճեան :

ԳԵՂՃԵԱՆԻ Կ'ԱԶԼՍԻ ԳԼԻՍՏՄԱՆ ՎՏԱՅԻՆ ՄԸ . ԵՒ  
ԹԱՍՎԻՐԻ ԿՒՄԱՅԱՆ ԸՔՈՒԼՍԵՆ Կ'ԸՆԴՈՒՆԻ :

Պէզճեանի կեանքը՝ ամեն բայէ կլանագի մէջ էր, իր ժամանակին քաղաքականութեանը նկատմամբ . և պարտաւոր էր ամեն ժամ ար թնու մնալ և զգուշանալու ոչ չմիայն իր վիճակին վրայ նախանձող օսմանցի բարձրաստիճան պաշտօնատարներէ, այլ իրենց սիրելի թշնամի Վեղու աղբակիցներէն ալ : Բայց այս վիճակին մէջ դարձեալ կը յաջորէր իր հնարաւ գէտ հանձարսիլը, վրանգներուն առջևն առնելու և պարզերե՞ս ելնելու :

Ուստաց դէժ պատերազմը սաստկանալով պատերազմին ծախուց դիմանալու համար Սեժ Լսյարքոս Սէշիու Սէհէմէտ փաշան՝ որ բանակին ընդհանուր սպարապետն էր, խորհեցաւ որ պղնձի դրամ պատրաստուի, և պատերազմէն ետքը վերստին հաւաքուի : Լսյարհրդոյն՝ հաւանեցաւ Սուլթանն ալ . բայց Պէզճեան դրամի պակասութեան առջևն առնելու համար պղնձի և արծաթի խառնուրդով դրամ պատրաստելու հոգն արդէն տարած և Դենպետին օրինագիրն ալ (Վէթփայի շէրիֆ) ստացած ըլլալով, Սուլթանն աւելի Պէզճեանի կարգադրութեանը հաւանեցաւ, և իր առջև հրամանը փոխեց : Լսյո նոք անսակ դրամները շուտով պատրաստուեցան և ցրու-

ուեցան . Սեճ Լյարբոսը ընց այս փոփոխու-  
թիւնը , և շատ մ'ալ Պեղձեանի վրայօք զը-  
պարտութիւններն անոր թշնամին բէն , և հա-  
ւատարմ' անոնց' օտարակ սրամտելով երգմամբ  
միտքը դրաւ , որ Պօլիս դառնալուն պէս գը-  
խտակել տայ Պեղձեանը , առանց որ և է պե-  
նածութեան կամ երկիւղի : Լորբ պատերազմը  
վերջացաւ ու խաղաղութիւնն եղաւ . Սեճ  
Լյարբոսն ալ Պօլիս դարձաւ , երեք որ' ետքը  
իր ծոռաներէն մէկը իրկեց Պեղձեանին , որ  
Է . Դուռը գայ շուտով :

Լինդարու իր տունը կը գտնուէր Պեղ-  
ձեան . ուր Լյարբոսին հրամանն ընդունեց .  
փութաց անմիջապէս գնալ Սայր Լիկեղեցին ,  
իր խոստովանահայր քահանայն կանչեց , և  
խոստովանելով և հաղորդուելով կենարար  
Սարճոյ և Էրեան Փրկչին , ազօձքի կեցաւ  
արտօնարարից աջօք : Յետոյ ուղղակի գնաց Է .  
Դուռը . և Սեճ Լյարբոսին դէմը ելաւ :

Պեղձեան շար ի բարձր սրտե յանձնուած էր  
Էմենակարող Լատուծոյ , և անոր վրայ մի մի-  
այն իր յոյժը և վստահութիւնը դրած էր , ա-  
ղատեցաւ նաեւ այս անգամի խիստ փոանգա-  
լից վիճակէն : Լյարբոսն ի սկզբան թէ պէտ լի  
ցասմամբ վարուեցաւ Պեղձեանի հետ , սա-  
կոյն Լյատուած շուտով զիջւոյց անոր սիրար , և  
հուսկ յետոյ Պեղձեանի անմեղութիւնը հաս-  
կընալով , և արքունի գանձին եղած շահն ալ  
խմանալով . սկսաւ պատուել Պեղձեանը , և  
նստել հրամայելով , սուրճ բերել տալաւ անոր .

որ մեծ պատուով նշան էր, և յետոյ մեծարանօք արձրիկեց : Վուրսելալ Պէզճեան, և գահուլթիւն տալով Լիտուծոյ, երեսուն հազար ղուրուշ իր ձեռքովը բաշխեց Լիպարթոսին ըստ պատահրացը, և երկրորդ օրը քսան հազար ղուրուշ ալ Լիպարս տնանկ ազքատաց բաշխել տուաւ : Պէզճեանի թշնամիներն այս անգամ ալ չըյաջողեցան և պապանձեցան մնացին :

Պէզճեան քիչ ատենէն ուրիշ խիստ մեծ պատուով մը արժանացաւ : Ռուսաց հետ հաշտութեան պայմաններէն մէկն էր պատերազմին ծախուց վճարումը : Եւս վճարումը երեք մասի բաժնուած էր. առջի մասը Ռուսաց կայսրը նուիրեց Սուլթանին, երբ Խալիլ փաշան ծանրագին ընծաներով արտաքոյ կարգի դեսպանութեամբ Բեգրսպուրկ գնաց և Լիպսեր ներկայացաւ : Երկրորդ մասին վճարման ժամանակն եկաւ, և Ռուսաց դեսպանը պահանջեց զայն Բ. Գունէն :

Լիբրունի գանձը անբաւական էր վճարելու այս պարտքը : Վասն որոյ նախարարներն ամէնքն ալ վարանման մէջ էին, և ոչ ոք իրենց մէկը համարձակէր Սուլթանին ներկայանալու : Պէզճեանը նախարարներէն յորդորուած, ներկայացաւ Սուլթանին, և հրաման ստացաւ քիչ օրէն փութով վճարելու այս պարտքը : Գնաց Պէզճեան և իր մանրիմ Լիբրոպացի վաճառականները կանչեց, և համոզեց զանոնք, որ իրենք երեք աւուր մէջ նոյն պարտուց գումարը վճարել յանձն առնեն, և յետոյ նոյն գումար

րին տոկոսիքը և թէ ամբողջ գումարը մաս առ մաս կը վճարէ արքունի գանձէն : Ծօծաբու թեամբ ընդունուեցաւ Պէզճեանի առաջարկութիւնը , և հետևեալ օրը պարտքը վճարուեցաւ Ռուսաց դեսպանին , և ընկալագիրը կայսերական կնքով վաւերացած բերուեցաւ առ Պէզճեան : Ուրախութեամբ գընաց Պէզճեան առ Սուլթանն . և Նորին Վեհափառութեան առջև դնելով ընկալագիրը , և վճարման եղանակը ու պայմանները , զարմացուց Սուլթանը , որ ինչան իւր բարձր գոհունակութեանը և համակրական սիրոյն՝ նոյն ինքն Սուլթանն իւր ձեռք թափարի շիւմայուն բարձր շքանշանը կախեց Պէզճեանի կուրծքը , և խրկեց Ռ . Դուռը Սեծ Լպարքոսին , որ անոր յանձնէ դեսպանին ընկալագիրը :

Պէզճեան Ռ . Դուռը գնաց , և տեսաւ որ հոն ժողովուած էին , Լպարքոսին քով , բոլոր աւագանին և օրինականք , Դենպետը , Սպարապետը , Օովակալը . և պարտուց վճարման համար հնարք մը գտնել կը խորհէին . Պէզճեան իմացուց իր գալը , և հրաման ստացաներս մտնելու : Պէզճեան դէպ ուղիղ դիմեց Լպարքոսին՝ անոր ոտքը համբուրելու : Բազմականները տեսնելով կայսերական Պատկերն ի կուրծս Պէզճեանի , ամէնքն ալ ոտք ելան ի պատիւ երեսաց Սուլթանին , և Պէզճեանն իրենց հետ նստեցունելէն , և որպիսութիւնն հարցնելէն ետքը , երբ տեսան ընկալագիրը ,

և լսեցին վճարման եղանակը ու սրբյամանները .  
և Սուլթանին ուրախութիւնը՝ որուն համար  
արժանի եղեր է այն բարձր շքանշանն ընդու-  
նելու , ամէնքն ալ ուրախացան , և գովեցին  
Պէզճեանի խոհականութիւնն ու հաւատա-  
րիմ ծառայութիւնը . և շնորհակալութեամբ  
ու գրուատեօք վերջացաւ , և դարձաւ Պէզ-  
ճեան իր տունը :



## Գ Լ ՈՒ Խ Ժ Ե .

ՊԵՋՃԵԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ Կ'ԸՍՏԱՆԱՅ ՄԱՅՐ ԵԿԵ-  
ՂԵՑԻՈՅ ՄԷՋ ԻՐ ԳԵՐԵՉՄԱՆԸ ՇԻՆԵԼ ՏԵԼՈՒ :  
ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՄԷՋ Ս . ԳԵՐԵՉՄԱՆԻՆ ՎՐԱՅ Ս .  
ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ Կ'ԸՍ-  
ՏԱՆԱՅ ՀԱՅՈՑ ՀԱՄԱՐ :

Պէզճեան իր առաքինի սրտին և բարեպաշտ  
զգացմանց համեմատ կը փափաքէր որ Սայր  
Լիկեզեցւոյ մէջ թաղուելու հնար մը գտնէ ,  
վասն զի Պօլսոյ բերդաբաղաթին մէջ թափա-  
ւորներէ և երեւելի փաշաներէ զատ ոչ ոք  
կը թաղուի :

Ի՛նչքն անանկ բերաւ որ օր մը Սուլթա-  
նը կանչել կուտայ Պէզճեանը , Պէզճեան Սայր  
Լիկեզեցին աջօթելու վրայ էր , երբ Սուլթա-  
նին հրամանն ստացաւ . քիչ մը ուշացաւ , և  
յետոյ ելաւ գնաց արքունիական պալատը :

Կ'ըսէ Սուլթանը ուր էիր Յարութիւն. — այն  
 Լիկեղեցին էի, որուն շինութեան հրամանը  
 ձեր վեհափառութենէն ստացանք, և հոն կ'ա  
 ղօթէի ձեր անգին կենացը համար, կը պա  
 տասխանէ Պէղճեան: Կ'ըսէ Սուլթանը, Լիկե  
 ղեցին մնաս, հոն մեռնիս: Լըրիպապութիւն  
 ընելով Պէղճեան կ'ըսէ, տուր, տէր իմ, հոն  
 մնալուս հրովարտակը, ինչպէս որ հրամայե  
 ցիր: Կը ծիծաղի Սուլթանը, և անոր պատ  
 րաստ պատասխանատուութեանը վրայ զար  
 մանալով, կը հրամայէ որ հրովարտակ տրուի  
 Պէղճեանին, որ մեռած ժամանակը Գուժ  
 Կարուի Վայր Լիկեղեցւոյն մէջ թաղուի:

Պէղճեան ստանալով հրովարտակը, իր գե  
 րեզմանը շինել տուաւ Վայր Լիկեղեցւոյ Ս.  
 Յարութեան տաճարին մէջ, ուր ստէպ ստէպ  
 այցելութիւն ընելով կ'արտասուէր շատ ան  
 գամ:

Պէղճեան որ բազմաթիւ մեծագործու  
 թիւններով անուանի կը հանդիսանար, իրեն  
 պահուած էր նաև այնպիսի մեծագործու  
 թիւն մ'ալ, որ Լըզգին համար մեծ բարե  
 բաղդութիւն մ'էր. այն է Ս. Լըրուսաղէմի  
 մէջ Ս. Կերեղմանին վրայ մեր Լըզգին քահա  
 նայից Ս. Պատարագ մատուցանելու արսօնու  
 թիւն ստանալը:

Պէղճեան պատեհութիւն գտաւ Զեյրա  
 նացւոց դէմ Լ. Իրան պատերազմ հրատա  
 բակելէն, և աղերսագիր մը պատրաստել, ու  
 բոլոր Լըզգին մեծամեծաց ստորագրել տալով

առաւ, և Սուլթանին ուրախ խամանակին  
 մէջ տուաւ անոր: Անմիջապէս հրաման րրաւ  
 Սուլթանը որ խաճճի Հիւմայուն տրուի,  
 որպէս զի Հայերն այլ Յունաց և Լատինա-  
 ցւոց հետ ամէն օր Ս. Պատարագ մատուցա-  
 նեն Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ: Հրո-  
 վարտահն եկաւ Ազգային Պատրիարքարանը,  
 և ժողովի մէջ կարգացուելով, Սայրաքաղա-  
 քիս բոլոր եկեղեցեաց և բոլոր գաւառները  
 ծանուցուեցաւ մեծազօր Տէրութենէն աւ-  
 նուած այս նոր արսնաւթիւնը, և ամէն  
 Հայ առ հասարակ ուրախութեան տօն կա-  
 տարեցին:

## Գ Լ Ո Ւ Կ Ժ Օ:

ՊԵՋՃԵԱՆԻՆ ՃՅՆԱԳԱՐԿՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԸՆԴ-  
 ՍՈՒԼԹԱՆԻՆ: ՃԱՆԻԿ ԱՍԻԲԱՅԻՆ Ի ՀՈՒՄՆՈՒ  
 ԵՔՍԱՐԻՆ ՈՒ ՎԵՐՄԱՐՁԸ: ԵՆԻԲԱՐՈՒՑԻ ՉԱ-  
 ԳՐԻ ՌԵՑԻՉ ԱՆՈՒՆ ՆԱԽԱՎԱՐԸ:

Սուլթանն 1831 ին Չանաքքալէ տնաց,  
 նեղուցին բերդերը տեսնելու համար. հետը  
 տարաւ նաև Պէզճեանը: Չանաքքալեցիք պա-  
 տեհաւթիւն գտան խնդրելու Պէզճեանէն,  
 որ Հայոց եկեղեցին պատուով մը շքափակի,  
 ընտ որում եկեղեցին ճանապարհի վրայ ըլլա-  
 լով, անցորդներէն շատ կը նեղուէր: Առանց

ժամանակ անցնելու, Պէղձեան իսկոյն կատարել տուաւ անոնց խնդիրը, և եկեղեցին պատով մը շրջափակեց ծախքն իւր քսակէն ընելով:

Չանաքքալէ եկան և Կէլիօլուի եկեղեցւոյանք, նախ շնորհակալութիւն մատուցին Պէղձեանի, ըստ որում ինք տարի մը յառաջ Կէլիօլուի եկեղեցւոյն նորոգ շինութեան հրամանն ստացած էր Ի. Քոնէն. յետոյ շէնութեան ծախուց հաշիւը ներկայացուցին. Պէղձեան սիրով հասոյց 10 հազար զուբուշ, որ շինութենէն մնացած պարտքն էր, և որախութեամբ զանանք արձրկեց:

Սուլթանն ելաւ Չանաքքալէէն գնաց յԷտիրնէ, հետն էր նաև Պէղձեան: Հոն ալ եկեղեցւոյն ծանր պարտուց ցուցակը ներկայացաւ Պէղձեանին: Ետզովի կանչեց տեղւոյն բոլոր երևելիները և առաջնորդ Սեթրոպ Լըքեպիսկոպտը ի տղան Պարտիզպանեան կարապետ աղայի. հոն Պէղձեան բննելով եկեղեցւոյն շինութեան հաշիւը, և մնացած պարտքը, բաժանորդագրութիւն մը բացաւ, և նախ ինքը մեծ գումար մը գրուեցաւ, յետոյ Լըքաջնորդը և բոլոր ժողովականք իրեն հետեւեցան, որով բոլոր գումարը պարտքէն ալ անցաւ: (Յետոյ իր գրուած գումարը հոն բերել տուաւ Պէղձեան, խնդրեց Լըքաջնորդէն և միւսներէն որ իրենց գրուած գումարները անմիջապէս բերել տան. Պէղձեանի խնդիրը կատարուեցաւ: Պարտատէրները կանչէլ ալ,

ւաւ , և անոնց պահանջքը իր ներկայութեան  
 նը վճարել տալով , անսնց ձեռքի պարտամուր-  
 հակներն ալ պատուել տուաւ : Ի ոլոր ժողով  
 եալները օրհնութեամբ և գովեստով և բա-  
 րեմաղթութեամբ բաժնուեցան իրարմէ : Եր-  
 կար ժամանակ միտատանջութեան ագարկայ ե-  
 ղոժ բան մը , երբ անակնուսելի զօրութեամբ  
 անմիջապէս ի գլուխ զը հանուի , հարկաւ մը  
 տատանջութիւն կրողներուն համար մեծ շնոր-  
 հակարութեան նիւթ կ'ըլլայ . թէպէտ և գարծն  
 ի գլուխ հանողներն իրենք էին , բայց զանանք  
 մէկմէկու քով բերող , և խոտացածնին անմի-  
 ջապէս վճարել տուող զօրութիւն մը պէտք էր .  
 ու ան ալ Պէզձեան եղաւ , նախ ինք օրինակ  
 ըլլալով անոնց :

Ի պիրնէ եկան Մալղարացի Հայեր , և  
 Պէզձեանին աղերսագիր տուին . որով կը ծա-  
 նուցանէին թէ եկեղեցւոյն պարտքը անկրան  
 ծանրացած , և պարտատէրներն ալ այնքան  
 անպթացած են , որ եթէ քիչ ժամանակէն չը  
 վճարուի պարտքը , եկեղեցին հարկաւ պիտի  
 փակուի : Պէզձեան տուաւ պարտքը և պատ-  
 ուեց մուրհակները : Ուրախութեամբ անղեր  
 նին դարձուց Մալղարացիները , և ինք ալ  
 Սուլթանին հետ Պոլիս վերադարձաւ :

Պէզձեան որչափ օգնութիւն և կարեկցու-  
 թիւն կը ցուցնէր աղքատին վրայ , նոյնչափ  
 ռիսերիմ էր զանոնք հարստահարողներուն և  
 տառապեցնողներուն վրայ : Անկէկողմէն կը  
 ջանար նաև Հայ սեղանաւորները միացնել ,

և անոնց բարեգործութիւնն ընել սարկեցնել .  
 Հոյ և Հռովմէական սեղանաւորաց վրաց մի-  
 անգամայն կը հսկէր . որ մէկմէկու դէմ ատե-  
 լու թեամբ՝ իրար կործանել չնկրտին . ինք ա-  
 նոնց հաշտութեան էր , և իր անուշը բաւական  
 էր որ զանոնք շուտով ի միութիւն զիջեցնէր :

Այս միջոցները սեղանաւորաց մէջ հակա-  
 ապոսթոլիկն սնաւ ընդդէմ Ղանիկ ամիրայի .  
 և միաբան ուխտեցին որ մեծ փնաս հարցնեն  
 անոր : Իմացաւ Պէզճեան , և Աղնաւուրեան  
 կարապետ ամիրայի միջոցաւ զանոնք փողերա-  
 նոց հրաւիրեց : Կաս մեղմաբար և քաղցրու-  
 թեամբ յորդորեց որ Ղանիկ ամիրային դէմ  
 քինախնդիր չըլլան . և երբ տեսաւ որ դժկաւ  
 մակութիւն կը ցուցնեն հաշտութիւն ընելու ,  
 զայրացաւ , և ծունկի գալով , ահեղ ձայնով և  
 խոժոռ հայեցուածքով լուաւ անոնց . կը հար-  
 ցնեմ ձեզի , թէ դուք ի՞նչ կը կարծէք զձեզ .  
 ահա Ղանիկն ես եմ , ինչ որ կրնաք ընել , ը-  
 րէք որ տեսնեմ :

Ի ազմականներէն մէկը ընդմիջեց Պէզճեա-  
 նի խօսքը , ըսելով , Տէր իմ , մինչեւ ցայսօր  
 ի՞նչ հրաժան ըրիր մեզի , ու մենք չկատարե-  
 ցիրք , մի բարկանար տէր իմ , պատրաստ եմք  
 ամենայն հնազանդութեամբ ձեր կամքը կա-  
 տարելու :

Պէզճեան մարդ խրկեց Ղանիկ ամիրային ,  
 և փողերանոց կանչել տուաւ : Եկաւ Ղանիկ  
 ամիրա , և երբ սենեակին դռնէն ներս կը  
 մտնէր , ստքի ելաւ Պէզճեան , և հրամայուց

որ նստի . իրեն հետևելով բոլոր բաղմականք սաքի ելան : Յետոյ Պէզճեան սուրճ բերել տուաւ անոնց , և բաւական յորդորելէն և Ղանիկ ամիրային հետ զանոնք հաշտեցնելէն վերջը , զամէնքն ալ պատուով իրենց տեղն արձրկեց :

Ի այց այս հաշտութիւնը կեզժ և առ երկիւղի էր . ինչպէս որ քիչ ատենէն յայտնուեցաւ : Վասն զի սեզանաւ որները փողերանոցին վերատեսուչ Լ՛հմէտ Լ՛Ֆէնտիին սիրան իրենց յանկուցին , և Լ՛Ֆէնտիին ալ օր մը կանչեց Ղանիկ ամիրան , և առանց պաաճառանաց սկսաւ զայն յանդիմանել և նախատել , ոտքի վրայ կեցուցած : Օգաց Ղանիկ ամիրա թէ ուսկէց թերագրուած է Լ՛Ֆէնտիին , և եզած անարդանացն ալ չկրնալով հանդուրժել , ինչ յանցանք ունիմ որ դատասպարտես զիս , գուչեց : Լ՛հմէտ էՖէնտիին ուզածն ալ սցս էր . առիթ գտաւ այս յանգուզն պատասխանատուութենէն , և ի . Ի ուռը գանգատ գրեց Ղանիկ ամիրային վրայօք , թէ անկիրթ և անքաղաքավար կերպով իր պատիւն արհամարհեց , և պէտք է որ արքորուի ի Շուճնու , որպէս զի բարեկրթութիւն սորվի , և թէ ինչպէս խօսիլ պէտք է Տերութեան պաշտօնակալաց առջև : Ըրքունի հրովարտակով յանկարծակի արքորուեցաւ Ղանիկ ամիրա ի Շուճնու :

Ըստ գէպքն իմացաւ Պէզճեան , և չխռովուեցաւ . բայց հագիւ թէ ամիս մ'անցած

էր, երբ յանկարծ փողերանոցի վերատեսուչն  
 [Նսմէտ Լֆէնտի ինկաւ իր պատուէն, և Ղա  
 նիկ ամիրա վերադարձաւ արսորէն : Սասանե-  
 ցան առ հասարակ Ղանիկ ամիրայի բոլոր Թըշ-  
 նամիները, և ամէն օր դողի մէջ էին, և գրե-  
 թէ ժամ առ ժամ կ'ըսպասէին իրենց արժա-  
 նի պատուհասն ընդունելու, ըստ որում Պէզ-  
 ճեանի խրատներուն անսաստելով, կերպով մը  
 դինքն անարգած գտնուեցան : Ի այց Պէզճեան  
 չուզեց Ղանիկ ամիրային Թշնամիներն ըստ  
 արժանւոյն պատժել. բաւական համարեց որ  
 զանոնք սասանեցուց, և իր կարողութիւնն  
 աւամենամեծ չազդեցութիւնն անոնց յայտնեց :

Պէզճեանի վեհ ոգին սրչափ խիստ էր աշ-  
 խարհիս վայելչութիւններով յղփացած և անի-  
 բաւութիւններով ճոխացած անձերուն հետ,  
 միշտ աշխարհիս սենայնութիւնը յիշելով, նոյն  
 չափ ալ քաղցր էր աղքատին վրայ, իր այն  
 պայծառ ու փառաւոր վիճակին մէջ անգամ  
 աշխարհիս վայելքներէն համ չառած, ամէն  
 ժամ ինքզինքը Վմենակարող Ստեղծողին յանձ-  
 նելով՝ հանդերձեալին մէջ իր կատարեալ միջ-  
 Թարութիւնը գտնել յուսալով : Հետեւեալ  
 պատմութիւնը պիտի ապացուցանէ մեր ըսա-  
 ծը. որուն մէջ Պէզճեանի վեհանձնութիւնը,  
 խոնարհութիւնը, և առաքինասէր բարբը մի-  
 անգամայն ակնյայտնի կ'երևան :

Վիրահի օր մը ժամերգութեան աւարտմա-  
 նէն յետոյ, ( )րթագիւղի եկեղեցիէն ելած  
 տուն կը դառնար Պէզճեան. ճանապարհին

վրայ անբաւար և դժուր հանդերձով ծերունի  
 մը տեսաւ . բարեւ տուաւ անոր , և իր առանձն  
 հրաւիրելով , դասուիրէց ծառաներուն ոգ  
 առնեն տուն բերին , և ինքն յառաջ անցաւ  
 ու տուն գնաց : Եփրայ ծերունին ալ , և երբ  
 մենեակէն ներս կը մտնէր , տաքի ելաւ Պէդ  
 ձեան , բունեց ծերունւոյն ձեռքէն և հաճե  
 բուրեց , և բովը նստեցնելով կ'ըսէ , Հայրիկ  
 կը յիշէ՞ տարիքդ այն երկու արտակները , որ  
 երեսիս զարկիր սուտեց խնայելու : Ապրեցաւ  
 ծերունին , որ Եփրայուցի Չարբը Ռեհզ  
 անուն նաւախորն էր . Մեջ կ'ըսեաւ ամիրս ,  
 այդ ինչ սասկալի դրոյսըսու թիւն է որ իմ վա  
 րայօքս կ'ընես , կ'ըսէ դողալով մը : Պէդձեան  
 կը կրկնէ . Չէ , դրոյսըսու թիւն չէ բաւձս :  
 Չարբը Մեհիլ տղայու թեանս ետեւ էի . ձրկ  
 նորսու թեան , և այնէն կիրակի քու նաւդ կու  
 գայի և անով ձկնարսու թեան կը պարսպէի ,  
 անդամ մ'ալ երկու շարթի որ մը շուկայ եր  
 թալ չու դեյի , ըստ սովորու թեանս եկայ նաւդ  
 որ ձկնորսու թեան երթամ . զիս տեսնելուդ  
 ողէս բռնեցիր տկանջես և երկու արտակ զար  
 նելով երեսիս , պսօր կիրակի է որ ձկնարսու  
 թեան եկած ես , շուտով շուկայ գնա , և չոր  
 լայ որ գրեղ հոս տեսնեմ , ըսիր , արտակները  
 կերաց , և գլխիկը շուկայ գացի . և այդ ար  
 ւած խրատդ այնչափ անպէց ինձի , որ այն օրէն  
 իմ գործիս սրարապիլ , և պաշտօնիս ոչայու ըլ  
 ըլտլ սկայ . ուստի հիմա այս վիճակիս մէջ  
 պարտական եմ քու երաստախբդ ճանչնալու :

Օ՛երունին ապշութեամբ մտիկ կ'ընէր . հուսկ ուրեմն սիրտը փլզկեցաւ , և Մատուծոյ սքանչելագործութեանց վրայ հիացած , փառք տուաւ Մատուծոյ , որ Պէզճի Պողոսի որդին այն փառքին մէջ ու աւետարանական հեղահոգիութեան և խոնարհութեան մէջ տեսնելու արժանի եղեր է : Պէզճեան իւր քեռորդիներն ալ կանչել , և ծերունւոյն ձեռքն համբուրել տուաւ . յետոյ ճաշ բրին . և ճաշէն ետքը Պէզճեան հանեց 500 դրշ . պարգեւեց ծերունւոյն , և ապսպրեց որ ամսէ ամիս պայ և 500 դուրուշ ստանայ մինչև ցմահ իւր :

Դուաքինութիւնը գովեստի կարօտ չէ : Բայ տաստմութեան մէջ Պէզճեան գեղեցիկ ծրիմանկ կուտայ ան հարուստներուն՝ որոնք վաղանցիկ աշխարհիս փառքով ճոխացած՝ իրենց սկար մարդ մ'ըլլալին մոռցած են , թէ ինք իր այն ամենափառաւոր վիճակին մէջ անպամ իր մարդըլլալը չէր մոռցած , և աշխարհիս ժամանակաւ որ վայելքներուն մէջ յաւիտենական աշխարհին մշտնջենաւ որ վայելքներէն չզրկուիլ կը խոսկար :

### Գ Լ ՈՒ Ե Ժ Ի

ՎԱՌՕՒԱԳԵՏ ԵՒ ՃԱՐՏԱՐԱԳԵՏ ԱՄԻՐԱՅԻՑ ՄԱՀԸ :  
ՏՆԱԿ ԱԸՔԱՏԱՅ ՀԱՄԱՐ ՌԸՈՐՄՈՒԹԵԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ : ԵԿԵԼԵՑԵԱՑ ԵՎԱՄՏԻՑ ԱԶԱՆ  
ՏՈՒԹԻՒՆԸ ՅԱՐՔՈՒՆԱՊԱՆ ԳՐԱՒՎԱՆԵՆ :

Արքունի Վառժայտուկ մեծահամբաւ Տա

տեան Միմէոն Լ՛միրան 1832 մարտ 12 ին վախճանեցաւ, և մեծահանդէս յուզարկաւորութեամբ թաղուեցաւ ի Պէշիկթաշ :

Նոյն տարւոյն մէջ վախճանեցաւ նաև Լ՛րքունի Ղարոտարապետ բարեպաշտոն Պալեան Գրիգոր Լ՛միրան, և մեծաշուք հանդիսիւ թաղուեցաւ յԷսկիւսար :

Ըյս երկու բազմերախո լ՛միրաները՝ Հայոց Ազգին երևեիլ պարծանք էին, թէ՛ իրենց հաւատարիմ ծառայութեամբը և վարկովք առաջի Ի. Դրան, և թէ՛ Լ՛զգիս վրայ ունեցած բազմաթիւ երախոյիքներովն :

Ըրքունի վառօգապետութեան և ճարտարապետութեան պաշտօնները հանդուցեալ բարեյիշատակ ամիրայից հանձարոյն և գործունէութեան սեպհականուած ըլլալով, աւանց վախճանէն ետքը, հարկաւ նոյն պաշտօնները դարձեալ անանց որդւոցը պիտի սեպհականուէին : Իայց շատեր եղան և մանաւանդ օտարազգի անձինք, որ ընծաներու և կաշառքի միջոցաւ մեծ ճիգ թափեցին այս երկու արքունական պաշտօնները գրաւելու, շնորհիւ մեծ սպարապետ խիւսրէվ բաշայի և ուրիշ նախարարաց : Եթէ այս յաջողէր, յայտնի կ'երևար թէ որչափ վնաս և ցաւ պիտի պատճառէր մեր Ազգին :

Սակայն Պէզճեան այս մասին ալ իր արեւութիւնը և աղգասիրութիւնը ցուցուց : Աճապարեց և իրեն կանչեց Միմէոն ամիրայի սրգին Պօղսս, և ստոր հօքեղբայքը Յովհան

նէս Տատեան . և զանոնք երկուքն ալ Սուլէ  
Թանին ներկայացնելով , խնդրեց որ հանգու-  
ցեալ Սիմէոն հաւատարիմ ծառային Վառօ-  
գապետութեան պաշտօնը անոր որդւոյն և  
եղբօրը յանձնելու շնորհն ընէ : Սուլթանին  
հրամանաւը՝ յատուկ հրովարտակով Պօղոս՝  
Լ՛յի Ստեֆանոյի վառօգարանին և անոր հօր-  
եղբայրը (Յովհաննէս՝ Լ՛գատլըյի վառօգարա-  
նին վառօգապետ կարգեցան :

Պէզճեան նոյնպէս Ղարտարապետ Գրի-  
գոր Լ՛սիրայի որդին կարապետը ներկայացուց  
Սուլթանին , որ իւր բարձր հրովարտակովը  
ճարտարապետ կարգեց զայն արքունի շինուա-  
ծոց , անոր օգնական տալով՝ քեռայրը (Յով-  
հաննէս Սէրվէրեան , որ ազգաւէր , ուսում  
նասէր և բարեպաշտ անձ մ'էր :

Ուրախացան ճարտարապետ և վառօգա-  
պետ ամիրայից գերդաստանները , և իրենց  
հետ քոլոր Լ՛զգը . ըստ որում այն երկու գեր-  
դաստանները հաւատարիմ ծառայք էին  
Սուլթանին , և բարեուէր խնամարկուք Լ՛զ-  
գին և պարծանք : Վառօգապետ Պօղոս և  
(Յովհաննէս ամիրաները , նոյնպէս ճարտարա-  
պետ կարապետ ամիրան ժառանգելով իրենց  
ծնօղաց պաշտօնները , օր ըստ օրէ սկսան պայ-  
ծառանալ , յառաջագիմել , և օգտակար ըլլալ  
Թէ բարեխնամ կառավարութեան և Թէ ի-  
րենց սիրելի Լ՛զգին :

Պէզճեան այսպէս Լ՛զգին երկու երևելի  
գերդաստանները վտանգէ ազատելով , զանոնք

Ազգին պարծանք և միմեզարու թիւնն ալ խե-  
 լու ծառայութեանը մէջ : Ազգին աղքատըն  
 տանիքներն ալ հոգայէ չէր գործած : զանաք  
 այն կարեկցութեան : գթայ և խնամոց արժա-  
 նի ընտանիքները որոնք գործել ոչ կարեն  
 մուրանալ ամառնէ : գոնէ ամառկան նպաստով  
 ժը միմեզարել չղանալով : Ժողով գումարեց  
 Ազգային Պատրիարքարանի մէջ : խորհրդի  
 կանչելով բոլոր իշխանագործները : արհեստագ-  
 շորոց գլխաւորները : և ջարդորեց զանոնք  
 օգնութեան ձեռք կարկանդակ անանկ առ-  
 քանաց վրայ : Օրինակով մը աւելի գգնարէն  
 բրաւ իր յորդորը : Ըսաւ Սեզեան : « ամառ-  
 գան երկար օր մը առտուքնէ մինչև երկկոյ  
 անօթի մնայած ունիմ, անանց փող մ'անէ  
 դամ ունենալու, որ հաց մը գնելով ուտեմ :  
 և իմ անօթութիւնս անցընէի : այս թանս  
 արդի վիճակիս մէջ բոլորովն սուա և երանգ-  
 կը թոռի ինձ : Ճիսիս իմ քակիս մէջ 4-5 գու-  
 հեկան ունիմ, թաց գիացէք եղբայրներ : որ  
 այս ալ սուտ և երանգ է : վասն զի այսօր կայ  
 սակայն կարելի է որ վաղը չըլայ, կարելի է  
 որ դարձեալ մէկ փողի մը կորոտ ըլլամ : ասիք  
 տարակոյտ չիկայ, վասն զի շատ օրինակներու  
 նիւր մեր ոչաց առջև : Արեմտեակտը չէ որ  
 մեր հարստութեան անպահիսնք : կրնայ զլաւ  
 որ մէկ ժամու մէջ բոլոր մեր ունեցածը կոր  
 օրնցները, այլ գիտնանք որ մեր ունեցածը  
 Աստուծոյ պարգևն է, և Աստուծոյ կը կամի  
 որ մենք մեր վայելքներով յղփայցած աստի՛ն :

աւուր հացի կարօտ տղքաները ժողովանք, և մենք որ այսօր կարող վիճակի մէջ ենք, անկարող անձերը ինամարկէր չգուծանք: Այժմ կը հաւատանք որ աշխարհի ճոխութիւնները աւփառքը վարանցիկ և չիւրափօխիս, են, ուրեմն մենք այլ անանց չկտրահանք, այլ աւելի Բաւուճոյ Գթութեանը վրայ մեր յայտ դրած, անոր սղորակութեանը համար գոհանալով, մեր ձեռքէն եկած օգնութիւնն ընենք կարօտեաց, քորցէ որ մայ մենք այն կարօտեաց կարգը խնայենք, և ուրիշէն նոյն օգնութիւնը տեսներու և սպասներու կարօտը պակսէ:

Մեզմանի բոլոր անհոգութիւնը, և գործի մը առաջնորդը բոլոր բաւական էին ապահով ու ապար նման շատ կրկէրի գործեր յառաջ տանելու: Ասկայն այնպիսի բարեպաշտական գործի մը ձեռնարկութեանը համար երբ յորդոր ալ մատուց, և իր նախկին կարօտ և նոյն մեջոցին անկարօտ վիճակին մէջ զգացածը անհաւան աչքին ստջև դրաւ, ի հարկէ բոլոր ներկայ եզրդներն իր խօսքին համապատասխան կը գրուներ:

Տեսնե՛ք ընկերներ սահմանուեցան Պոլսոյ Էրզրանցիւր թաղերու համար, որպէսզի սղորակութեան արժանի կարօտեաները ընկերին և արձանագրուին:

Քննութիւններն ու արձանագրութիւններն եղան, և երկու կարգի բաժնուեցան կարօտեաները, մէկ մասն անոնք էին որ աւ

ւուր հացի կարօտ էին, և միւս մասն անոնք որ թէպէտ աւուր հացը հայթայթել կրնային, սակայն հանդերձէ և ուրիշ պիտոյքներէ զրու կրւած էին :

Յաջորդ շաբթուն վերստին գումարեցաւ ժողովը, և որոշուեցաւ առաջին կարգի կարօտելոց համարամսէ ամիս հինգական<sup>1</sup> դահեկան տալ մարդ գլուխ. և երկրորդ կարգի կարօտելոց համար Օնսանդի և Օլատկի օրերուն մէջ մարդ գլուխ տասնհինգական դահեկան տալ : Ետր համար ալ Տնակայ Սփորի մը սահմանուեցաւ Պատրիարքարանի մէջ, և պէտք եղած գանձապետներն ու համարակալները կարգուեցան : Եւ մէն մէկ արհեստաւորներէ ալ տարեկան տուրքեր սահմանուեցան, իւրաքանչիւրէն՝ իր կարողութեան չափովը : Ինքն Պեզձեան տասը հազար գահեկան գրուեցաւ և նոյն ժամայն բերել տուաւ, իրեն հետեւեցան ուրիշներ ալ : Արոշուեցաւ որ ուրիշ տեղերու և գիւղերու աղքատներն ալ իւրաքանչիւրն իր գիւղին բնակիչներէն խնամարկուի, և եթէ պահսելու ըլլայ արուելիք ամսական ողորմութիւնը, պակասօր Տճանկաց Սնտուկի գանձապետէն առնուի անոնց

<sup>1</sup> Այս ամսական նուէրները նոյն ժամանակի աժնութեանը նայելով, մեծ բաներ էին, ինչպէս որ բիւրաւոր շքութունք կ'օրհնէին այս ողորմութեան անտուկին հաստատութեանը պատճառ եղողը. երթալով այս Տական զուրուշի նուէրն ալ ժամանակին ողութեանը հետ բարձրացաւ, մինչև բարոյքին վերցուեցաւ հիմա . . . . .

եկեղեցւոյն վերատեսչին ստորագրութեամբը :

Պէզճեանի պահուած էր ուրիշ նշանաւոր մեծագործութիւն մ'ալ , ոչ միայն Հայոց , այլ և (Յունաց և Հրէից համար անգամ :

Թաճիր էֆէնտի անուէն հախարար մը Լ՛վէ Գաֆ նալըի անուանեցաւ 1832 ին : Այսիկա Սուլթանին հաճութեամբը ուղեց հպատակ ազգաց Լիկեղեցեաց , Լթոռոց և վանօրէից եկամուտները արքունի գանձը գրաւել . ուստի հրաման խրկեց Հայոց , Յունաց և Հրէից , որ իւրաքանչիւրն իր Լիկեղեցեաց , Լթոռոց , վանօրէից , հիւանդանոցաց եկամուտներուն տուամարը Լ՛վէ Գաֆը խրկել փութայ :

Ի ոլոր հպատակ ազգերը ցաւեցան այս լուրոյն վրայ . և ամէնքն ալ այս աղէտէն ազատելու ակնկալութիւննին մի միայն Հայոց Լ՛վէ գին վրայ դրած էին , յուսալով որ Պէզճեանի հզօր ազդեցութեամբը այս աղէտիս առաջքը առնուի : Քանի մ'օրէն արքունական պալատը գնաց Պէզճեան , մաքուր կանթեղ մը ձեռքն առած , և սրահին մէջ՝ Սուլթանին սենեակին քով կը կանգնի , աչքը կանթեղին վրայ : Սուլթանը դուրս կ'ենէ սենեակէն , և Պէզճեանը տեսնելով , կը հարցնէ անոր թէ ի՞նչ է իւր ձեռքինը : Լիրկրպագութիւն կ'ընէ Պէզճեան և կ'ըսէ . Տեր արքայ , սուրբն Յիսուս և սրբուհի մայր նորա Սարիամ , իրենց եկեղեցւոյն մէջ վառելու իւր չունենալով , այս կանթեղը առ Կեօսազար Տէրութիւն

ձեր խրիեցին, որ իւր ինտրեն, ձեր վեհախոս  
ուսթեհն:

Սուլթանը ետ դարձուց իր նախկին հրա  
մանը, և ի. Իգուզը հրաման խրիեց: որչա-  
սերական հրովարտակ սրուի ի հարստու-  
թիւն ամենայն եկամտից եկեղեցեաց, վանո-  
րէից հպասակ ազգաց, ինչպէս որ մինչև ան  
ատեն էր, այնպէս մնայ միշտ և անփոփոխ:

Հրովարտակը եկաւ նաև մեր Ազգային  
Պատրիարքարանը. մեծ ժողով եղաւ, և կա-  
րապետ Լւսիսկոպոս Եկեղեցւոյ բեմն ելնե-  
լով, սքանչելի ատենաբանութիւն մ'ըրաւ.  
բնագանդակով Սաղմոսին սախօսքը. ի Տեա-  
նէ եղև այս, և է սքանչելի առաջի աչաց մե-  
րաց. և մեծ ուրախութեամբ բարեմաղձու-  
թիւններ ըրաւ վասն կենաց Սուլթանին և  
բարգաւաճման կայսերութեան նորին, և վասն  
Պէզձեան Ազգային Ընդունական հարեղարի,  
որ ոչ միայն իր Ազգին սիւն ամբողջեան և  
ապաւինի էր, այլ բոլոր հպասակ ազգաց  
խիւստով և անխնայ պարծանք Ազգիս բոլոր  
ազգաց առջև:

Գ Լ Ո Ւ Ն ԺԳ

ՏԵՆԻԿ ՍԵՐԱՍԻՏ ԵՒ ԽՆԻԻՐ ՍԵՐԱՍԻՐԱՆԸ ՍԵ  
ՀՍԱՆԵՐ ԱՍԵՏԱԳԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ԵՒ ՍՄԱՆՑ  
ԱԶՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պէզձեան իր գլխով և բարեխնայ բնաւ

բուժեան հետ բարկացում էր նաև բաց իր  
 զայրոյթն անցնելէ վերջը փութով կը դադար  
 և եթէ պակասութիւն մ'ալ գործէր իր բարե-  
 կութեան միջոցին, զայն ջնջելու համար պէտք  
 եղածը իր հանդարտութեան միջոցին անօրէ-  
 նել կը փութար, և վերադարձած սրտերը,  
 եթէ ըլլային, բուժել և մխիթարել չէր պը-  
 լանար :

Հետևեալ դէպքին մէջ ընթերցողը պիտի  
 դատէ թէ Պէզեան իր կենացը մէջ ինչ ան-  
 ջնջելի սրտով մը պիտի թողու իր անուան և  
 բարեկրօնութեանը հետէ շուտով չփութար  
 ըլլալիքին առաջնական նշուած իր ազգու-  
 ղոր ձեռնհասութեամբ :

Պէզեան (Գնչպէս իր կենացը բովանակ  
 ընծայքին մէջ երկրաւ յարեցաւ իր յոյժ-  
 դրեթէ ամէն օր Ամբղեցի կը յաճախէր, Վե-  
 զմայրամբ կը յամփշարակներ, վասակածային  
 օրբանդան պաշտօնանց արարողութեանց և  
 մանաւանդ քաղցրանսւ ազ և ըզոյ :

Մշտնի բարոյրածայն դպիք որ կը գտնուէ  
 ին Սայրաբաղաբիս մէջ, գրեթէ անոնց յա-  
 մէքն ալ կիրակի օրերը (Քրթագիւղի) կեպե-  
 ցին կու քային, գերմարդ Պէզեան վերա-  
 յին հօգեմէր և շարեմաշտ բնապրութիւ-  
 նը, որմէ միշտ կը վարձատրուէին և կը մե-  
 ծարուէին բոլոր դպիրք :

Սեր մէջ անխորութիւն եղած է, որ ին-  
 կեղեցւոյ դասին մէջ, ուր միայն քահանայք,  
 դպիրք և եկեղեցւոյ պաշտօնեայք պէտք է

կենան, աշխարհական երևելի անձեր ալ կ'երթան կը կ'սնգնին . անոնց նայելով ժողովուրդըն ալ հոն կը խռնի, որով նեղութիւն և դժուարութիւն կուտան թէ քահանայից, թէ դպրաց և թէ եկեղեցական սերիչ պաշտօնէից իրենց պաշտամունքը կատարելու մասին :

Պէզճեան այս անկարգութիւնը նկատելով խորհուրդ տուաւ Ակեղեցւոյ քարոսիչ վարդապետին թէ ազգու ծանուցմամբ արգելք դնէ, որ բաց ի դպիրներէն ուրիշ անձիւք դասը չմտնեն . և փակել տուաւ պահարանին դռներն ալ, որպէս զի ժողովրդոց գիւրութիւն չըլլայ Ղասը մտնելու :

Սոյն ժամանակներս (1832) երևելի էր Հայոց մէջ Սագսուտ ամիրա, որ Սուլթանին ներքին Քարտուղարին սեղանաւորն էր, և անոր շատ սիրելին . որուն միջոցաւ Տէրութեան բոլոր բարձրաստիճան անձանց ծանօթացած էր, մինչև անգամ Սուլթանին իսկ : Ասիկայ սովորութիւն ունէր Ղասը քահանայից քով կանգնելու : Արաբի օր մը Ակեղեցի եկաւ, և Պահարանին դուռը փակուած գտնելով, զայրացաւ և բաղխեց դուռը որ բանան : Աերսէն ըսուեցաւ թէ այս դրան բացուիլն արգիլուած է, որպէս զի ժողովրդէն և ոչ մէկը կարող ըլլայ ներս մտնելու : Սագսուտ ամիրա այս պատասխանին վրայ խռովուեցաւ, ժխանդի իր բարձրամուտութեանը կը դպչէր առ, և իրեն պատուոյն փոքրիկութիւն և անարգանք

մը սեպեց . սրտմտեցաւ , կանչել տուաւ Լւկեղեցւոյն Աւագերէց Տ . Վալուստ քահանայն և այն արգելքը դնողը անարգելով , հրաժան ըրաւ ինքն ալ որ բացուի դուռը :

Պահարանին դուռը բացուեցաւ , ներս մըտաւ Սաքսուտ ամիրա , և իր հետն եղողները , ու անցան Վասը բազմեցան :

Պէզճեան լսեց դուրսն եղած խօսքերը , և տեսաւ Սաքսուտ ամիրային դասն անցնիլը , լռեց . բայց չուզեց որ անպատիժ թողու այս ամբարտաւանութիւնը :

Սուլթանին ներքին Քարտուղարը՝ որուն տեղանաւորն էր Սաքսուտ , խիստ ագահ և անագորոյն անձ մ'էր . նաւեր ունէր , և Ռումէլի ու Անատոլու իր զօրութիւնը տարածած , ամէն կողմէ կը կեղեքէր ժողովուրդը , ցորեն , ոչխար , կով և ուրիշ մթերք աժան գնով կը ժողվէր , և ինք ծանր ու սուղ գներով կը վաճառէր : Արանկով շատ հարստացաւ , և Սուլթանին ալ սիրելին ըլլալով Տէրութեան բոլոր պաշտօնակալաց հրամայել սկսաւ :

Այս աստիճան բարձրացող և յաջ ու յահեակ չնայող պաշտօնակալի մը վախճանն ալ խիստ մծտալուտ սեպուելու է : Ատ շանցաւ Տէրութեան աւագանին առիթ գտաւ , և Լւգիպտոսի փոխարքայ Սէհմէտ Ալի փաշային դէմ պատերազմի երթալու վրայ եղող Աջա Հիւսէյին փաշային միջոցաւ , Քարտուղարին վրայօք գանգատանաց գիր հասուցին առ Սուլթանն . այնպէս թէ Քարտուղարն իր ա-

գնհուսմեամբն: Նստառար ի բնակիչները կե-  
զերած, և զամենքն յերկնս թշուառութեան  
ու աղբուսողութեան մեջ թողած զլայլոյ ընդ  
ժողովորդը զսարսալարեցուցած է արեւնար-  
ջունք թափելու, և երկինք ու երկիր իրենց  
աղաղահնետով լինոյցնելու:

Սուլթանը հարթալով գիրը, զարացու և  
անվիճաբէս հրաման ըրաւ յոր Յարսուսըրը  
դուրս ելնէ պարսաէն: Սագսուտ ամերայիկ  
աղաահնն, ու տիւնը հարմարեցաւ:

Պէզճեան՝ այս դեպքն առիթ գտաւ, և  
անպէց որ Սագսուտի ալ մի և նոյն փորձով խը-  
րածուի, և աշխարհիս փառքին ու մեծու-  
թեանը չխտահի բնաւ: Աստի Սուլթանին  
իմացուց թէ: Բարսուսըրին սեղանաւ որը և  
տիրէլին Սագսուտ անուսով մեկն է: Հրամայ  
քաւ: Սուլթանը և Սագսուտ բանտարկուե-  
ցան: Փորեբանոցին մեջ: Նոր հեղ բանտարկ-  
ուածցան յանիկ և խորիր ամերաները, որոնք  
աննիւրաւ էին, բայց Սագսուտի հետ ընկե-  
րու թիւն ալ նենայով, իրենք և սպասժուեցան  
անար հետ: Սոսից ետեքին ալ սէնեակները կըն-  
քուանցան, և արկերը ու հաշուետուարներ  
բը յանձնուեցան Փորեբանոցին վերտոն սուջ  
Նաֆիզ էֆենտին: Նիկաւ ալ պապեհու թիւն  
պապաւ և: Սուլթանին այնքան մեղապարտ  
նէ լինացածուց բանտարկեալները, որ անոց  
գլխապարտութեան ժամանկը ասու գաւ թիւն և  
հասանարու թիւն գտնելու մտայ էր:

Օրաց Պէզճեան թէ բանտարկելոց վիճար

կը զամսեղաւոր Վ. և ի խոր խոցեցաւ սիրտ  
 իւր . և ս առաւել խռովուեցաւ մանաւանդ ,  
 երբ ըսեց թէ բանտարկեալները Աճիւն չմէլի  
 Սարգիս արային միջոցաւ քահանայ մը խնդ-  
 րեր են պատրաստութիւն տեսնելու համար :  
 Պէզնեան բանտարկեալները գլխատելու հա-  
 մար սահմանուած կիրառի օրը ըսնալու գի-  
 շերը մինչև լոյս անքուն աղօթեց . առաւօ-  
 տուն կանուխ եկեղեցի իջաւ . Տ . Գալուստ  
 հօր խոստովանեցաւ , և մեծաւ զղջմամբ հա-  
 զորդուելով Քրիստոսի Ս . Սարմնոյ և Արեան ,  
 առանց սպասելու Ս . Գատարապին և ժամեր  
 գութեան աւարտմանը , ըսաւ Տ . Գալուստ  
 հօր . « ահա ես ալ կ'երթամ կամ բանտարկե-  
 տալներուն հետ մեռնելու , կամ անոնց հետ  
 ազատած ողջամբ վերադառնալու . աղօթք ը-  
 րէք , Տէր ողորմեա ըսէք որ իմ աղանձքս լը-  
 սելի ըրայ Սուլթանին » : Գուրս ելաւ Լիւն-  
 ղեցիէն , և ուղղակի Գալատը գնաց : Սուլ-  
 թանը մեծ սրահը մտած ատեն տեսաւ Պէզ-  
 նեանը , և զարմանքով նոյն օրը այնչափ կա-  
 նուխ գալուն պատճառը հարցուց : Պէզնեան  
 առանց վայրկեան մը վարտնելու , Սուլթանին  
 առջևը գետին ինկաւ , և լալագին պաղատա-  
 նօք ըսաւ . Տէր իմ սրբօյ , գա երկուքէն մէկը  
 կը ինդրեմ , կամ բանտարկեալներուն ազա-  
 տութիւնը և ողջամբ իրենց սուներ վերադա-  
 նալը , և համ իմ մահն անոնց հետ :  
 Սուլթանը հարցուց թէ . Յարութիւն ,  
 ինչէ՞ գրդեալ Քարեխօսութիւն ընելու ե-

կեր ես . երբ դու ինքնդ իսկ գանգատեցար  
անոնց վրայ :

Կրկնեց Պէզձեան , ով Ա՛րքայ , անոնց ըն-  
տանեաց և զուակաց ազիսզորմ՝ գոռումն ու  
գոչումը և սղբը բոլոր գիշերս դղրդեցին եր-  
կինքն ու երկիրը , լեռներն ու ծովն արձա-  
գաճեց կուտային անոնց պաղատանաց ձայնին .  
և ոչ վայրկեան մը հանգիստ կրցաց առնուլ  
անոնց ազատակէն . Ավ Ա՛րքայ , ծառաները ըստ  
մարգկութեան կը սխալին , բայց թագաւոր  
նեղը կը զիջանին և անոնց տկարութեանը նե-  
րողամիտ կ'ըլլան :

Առլթանին գութը շարժեցաւ , և ըստ  
ինգրոց Պէզձեանի հրամանագիր խրկեց Բ .  
Իռուր , որ բանտարկեալներն արձկուին և  
թող տրուին իրենց տունն երթալու :

Երկրպագութիւն ըրաւ Պէզձեան Ա՛հա-  
փառ Առլթանին , և արտասուալից ցնծու-  
թեամբ գարձաւ իր տունը . և ծովու վրայ  
նայող պատահանէն անդադար կը գիտեր . որ  
պէսպի տեսնէր աղատելոց նաւակը , որ իր տա-  
նը առջեէն պիտի անցնէր :

Ահս օր եղաւ , և երբ շերեցաւ և ոչ մէ-  
կը , կասկածել սկսաւ Պէզձեան թէ չըլլայ որ  
հրամանագիրը չհասած սպանութիւնն է  
գործ գրուած ըլլայ . ուստի կանչեց իր սպա-  
սաւոր թէլլի Պ . Յարութիւնը , և պատուի-  
րեց անոր որ շուտով փողերանոց երթայ , և  
անոնց ուշանալուն պատճառը իմանայ : Սպա-  
սաւորը դեռ նաւակ չէր նստեր , և ահա ճա-

նիկ ամիրա իր նաւահով եկաւ իր ծովեզերեայ տունն ելաւ, և իր ընտանեաց այցելութիւն չըրած, անցաւ եկաւ Վեղձեան ամիրային տունը:

Իմաց տունին Վեղձեանի թէ Ղանիկ ամիրան կուգայ, ոտքի ելաւ, գնաց սրահին դուռը: Ընդգրկեցին զիրար, և Վեղձեան են վերին սեղը բազմեցուց Ղանիկ ամիրան, որ մահուան վտանգէն ազատած և այլ յայլմէ եղած, չկրնալով Վեղձեանի այս մեծ բարերարութեան վրայ ինչպէս շնորհակալ բնապէ գիտնալ, սկսաւ լալ դռունապէս:

Միւսնայն զգացմամբ լքուեցաւ Վեղձեանի սիրտն ալ: Ինչ մը ետքը եկաւ Սաքուտ աւմիրա, սենեակէն ներս մտաւ, և մօտեցաւ Վեղձեանի ձեռքը համբուրելու. Վեղձեան ոտքի ելաւ, տրտում հայեցուածքով մը անոր երեսը նայեցաւ, և ձեռքէն բռնելով նստեցուց ըսելով. Ըստուած ապաշխարութիւն համարէ. ասոնք աշխարհիս փորձութիւններն են, որոնցմով պէտք է զգաստանանք և գիտնանք թէ մարդ մահկանացու ենք, և վտանգու աղէտ անպակաս են մեղի համար: Այդ բայրներս, ըսաւ Վեղձեան, թէ որ հարկ թէ լայ Տէրութեան պաշտօնակալի մը առջև ելնելու, ձեռք ձեռքի վրայ դրած, ահով և գողով կը մտնենք անոր քով, և խոնարհութեամբ երկրպագութիւն կ'ընենք, ու անոր հրամանները ի գործ կը գնենք. միթէ բարձրեալն Ըստուած անոնցմէ ստորին է, որ կը

բակի օրերը Լիկեզեցւոյ դռները ձիերով ու կառքերով կը լեցնենք, և չենք թողուր որ ժողովուրդը հանգիստ Լիկեզեցին մօտէ ու անկէ ելնէ. ամբարտաւանութեամբ կը մըտնենք յԼիկեզեցի, և ժողովրդեան կարգը կենարը փորքիութիւն համարելով, կ'անցնինք քահանաներուն դասը. ահա ասոնց համար է որ ասանկ փորձութիւններու մէջ կ'իյնանք :

Եւ քիչ մ'ալ յորդորելէն աւ միտթարելէն զինի, ուրի ելաւ ու հրամցուց որ իրենց տունն երթան, ուր իրենց ընտանիքը կարտտով կ'ըսպասէին զիրենք տեսնելու : Եւ զերար ողջունելով մեկնեցան, ու նոյն օրը մեծ ուրախութեան օր եղաւ թէ անսնց ընտանեաց և թէ համօրէն լ'ըգիս :

## Գ Լ Ո Ի Խ Դ Թ .

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ ԴԳՈՑԱՑ, ԵՊԵՆՑԵՑԱՑ ԵՒ Մ .

ՓՐԿՉԻ ՀԻԻԱՆԴԱՆՈՑԻՆ ԵՏԻԳՈՒԼԵԻ

Պէզձեան իր անթիւ բարեգործութեանց միջոցին չէր մոռցած նաև հաստատուն բարիք և իր անուան մշտնջենաստոր փառք ու յիշատակ ըլլալիք ձեռնարկութիւնները : Լիկեզեցիներ շինեց կամ նորոգեց, զանոնք այնպիսի ընտիր ընտիր զարդերով լցուց ու գեղեցկացուց, որ անոնց նմանները ոչ իրմէ առաջ և ոչ իրմէ ետքը տեսնուած են, և ոչ գուցէ

ասկէ ետքը պիտի տեսնուին . ազքաւոնները կերակրել ջանաց , անանկները մփփթարել , և անոնց համար մշտնջենաւոր ողորմութեան սնտուկ մը հաստատել . սակայն չմոռցաւ նաև դպրոցները ու անոնց կարեօրութիւնը . կեղեցիկաց պայծառութիւնը դպրոցներէն կախում ունենայլը , և ազքատաց թուայն օրքան զօր նուազման հնարը դարձեալ դպրոցներէն սպասելը գիտցաւ , որչափ օր իր ժամանակին պէտքը ու պարագաները , և իր բնական ըյտն ու հանձարը իրեն կը թելադրէին :

Գպրոց շինել , դպրոց ծաղկեցնել և արգիւնաւորել միայն դրամով կ'ըլլայ . գրամ իրնայած չէր երբէք Պէղճեան , միշտ առատաձեռն էր . բաւական էր որ իրմէ ինչքէին : Պէղճեանի նման առատասիրտ անձի մը ժամանակակից անձերը , մանաւանդ անոր հետ վերաբերութիւն ունեցողները ամսոս որ ուսման և դպրոցի ճաշակ չունենալով , չկրցան առաջնորդել զՊէղճեան մեծ ու անմահ յիշատակ ըլլալու արժանի ձեռնարկութեան մը , ըսել կ'ուղեմք բարձրագոյն ուսմանց և արուեստից դպրոցի մը հաստատութեանը , ու զայն պայծառ պահելու և զարգացնելու հասոյթին ու եկամտից կարգաբերութեանը . այսօր Ազգը այդ դպրոցը պիտի ունենար , և որչափ մեծ արգիւնքներ ալ անկէ պիտի վայելած ըլլար , ու պիտի վայելէր միշտ : Պէղճեան օր մը բարձրաստիճան եկեղեցականի մը կը հարցնէ թէ Ազգը ինչ բանի պէտք ունի ,

ինչ կ'ուզէ որ ընեմ. պատասխան կ'ըստանայ  
 թէ, քու ողջութիւնդ կ'ուզէ : Այո, անոր  
 ողջութիւնը կ'ուզէ : Ազգը, բայց ոչ թէ այն  
 ողջութիւնը որն որ ապին իր ձեռքը չէ, հա-  
 պա անոր անուան ու յիշատակին ողջութիւնը .  
 զոր Ազգը կրնայ տալ անոր, և յաւիտեան պա-  
 հել, և յորդուոց յորդի իր մէջ անմահացնել :  
 Ահա Պէզճեանը շրջապատող անձանց գաղա-  
 փարը . որոնց մէջ Պէզճեան փիւնիկ մը  
 եղեր է, և ինչ որ կրցեր է ընել, իրմէ թե-  
 լադրուած ըրեր է և ոչ ուրիշէն : Աղէկ որ  
 Պէզճեանի ողջութիւնը գոնէ ուղել գիտցեր  
 է, հապա ամարանոց առն մը, մատանի մը  
 ուզելն աւելի սիրող ըլլար, ինչ դժբաղդու-  
 թիւն պիտի ըլլար :

Պէզճեան վարժապետի յարգ ալ կը ճանչ-  
 նար : Սեր ատենը մինչդեռ վարժապետները,  
 չըսենք ընդհանրապէս, գէթ ըստ մեծի մա-  
 սին անարգութեան մէջ են, այսինքն իրենց  
 պաշտօնին արժանաւ որ յարգանքը չեն ստա-  
 նար, այլ թփաղական աղաներէ դուք, Հոգա-  
 բարձուներէ սարսափ, Տնօրէնէ ակնածու-  
 թիւն, (չենք գիտեր որչափ անուէնով պաշտօ-  
 նեաներ պիտի աւելնան տակաւին դպրոցնե-  
 րուն վրայ) ասոնց արգահաններէն ու բարե-  
 կամներէն սրտատրոփ, ասոնց ամենուն զա-  
 ւակներէն կամ թոռներէն ալ պատկառանք կը  
 կրեն . մինչդեռ վարժապետները ամիրայի ներ-  
 կայութենէ զրկուած, գիտնականներու ժու-  
 ղովէ մերժուած, քանի մը դահեկան առնելու

համար հասարակ օրեր շուկան անդամներու սենեակները շրջելու, և կիրակի օրերն ալ մինչև երեկոյ թաղական խորհրդարաններու անջլեք կամ խակիլ օձաղթ սպասելու պարտաւորութեան. ան անոնն Վեղձեանի նման անձ մը իր քովը ունէր Փէշտրմալձեան Վրիգոր Պատուելի մը, կը պատուէր զայն. ուրիշ ամիրաներ Փէշտրմալձեան վարժապետին չափ համարձակութիւն չունէին Վեղձեանի քով, և անոր չափ Վեղձեանի անջլե շնորհք ունենալու կը ցանկային: Վեղձեան Վեորդ Պատուելի մը յիշատակն ալ անմահ, և անոր Պարսկերէն Հայերէն բառարան երկնափրու թիւնն անկորուստ պահելու համար, ՚ի շնորհս անոր երախտեաց՝ զայն տպագրել տուած էր իր ծախիւքը, Փէշտրմալձեան վարժապետին թերձդրութեամբը, և ձրի նուիրած Ազգին:

Գումբաբուլի Ռայր դպրոցը, որ հիմա Լուսաւորչի դպրոց կ'ըսուի, կիսափորձան մը նացած էր: Վեղձեան իր բազկէն նորոգեց զայն, և յանձնեց Ռսկերիչ արհեստաւորներուն, որ այն դպրոցին սէսքը հոգան:

Գումբաբուլի դուրսը Հայ ձկնորսներու բնակութիւն է, հոն ոչ դպրոց կար, և ոչ եկեղեցի: Երկու դպրոց շինել տուաւ, մէկը իր հօրը Պողոսի յիշատակին, և միւսն իր մօրը Վառվառեային յիշատակին. ուստի մահէ տըղայոց վարժարանը յանուն Ս. Ընտրելոյն Պողոսի նուիրեց, և ազջիկ տղայոց վարժարանը յանուն Ս. Կաւսին Վառվառեայ: Եւ դիտ

նալով տեղւոյն աղքատ բնակչաց անկարողութիւնը այս վարժարաններուն պէտքը հոգալու մասին, 250000 զուրուշ ֆուաւ Այսր Լեկեղեցւոյն, այս դաշամբ որ ամսէ ամիս 1000 զուրուշ շահք անխափան վճարէ յիշեալ երկու վարժարանաց: Այս դաշինքը ազգային ժողովով, և Ստեփաննոս Պատրիարքին, ու անոր նախորդ կարապետ Լախիսպուսին և գլխաւոր ամիրայից ստորագրութեամբը վաւերացաւ: Ընչպէս որ մինչև ցարդ նոյն 1000 զուրուշը ամսէ ամիս անխափան կը վճարուի:

Իսկ Լեկեղեցին Պէզճեանին մահուընէն շատ ետքը 1855 ին շինուեցաւ, և նուիրեցաւ ի փառս Ս. Հարութեան Բրիտանոսի, ի յիշատակ Պէզճեանի անուան:

Բերայի Վռնավուլա և Աքուտէլա Թաղերուն մէջ երկու վարժարաններ հիմնուեցան 1830ին, Փափաղեան Ղանիկ Ամիրայի օգնութեամբը, Բերայի Տ. Օլաքարիա քահաւային ջանիւքը և Թելադրութեամբը: Թէ այս վարժարաններուն ուսանող մանկտին, և թէ նոյն կողմերը բնակող ժողովուրդը ջուրի կողմանէ շատ նեղութիւն կը կրէին. և շատ հեռաւոր տեղերէ ջուր բերել կուտային:

Պէզճեան լսելով այս խեղճութիւնը, ի դիմաց նոյն ուսանող մանկուոյն աղերսագիր տուաւ Սուլթանին, ուրախութեան միջոցի մը մէջ: Սուլթանը հրամայեց որ այն երկու Թաղերուն մէջ երկու աղբիւրներ շինուին:

Պէզճեան Բերայի մէջ ուրիշ վարժարան

մը արդէն հիմնած էր, վարժարան ասղնեգործութեան, աղջկանց համար: Աղջկանց դաստիարակութեան կարեւորութիւնը ճանչցողները գիտեն թէ ասղնեգործութիւն որչափ պէտք է աղջկանց, մանաւանդ ազքատ աղջկանց. Պէզճեան այդ պէտքը հոգաց անոնց ուսումնական դաստիարակութենէն առաջ, թելադրութեամբ տիրացու Սերովբէի, որ փողերանոցին մէջ ոսկերիչ էր:

Անոնք աղէկ կ'ըզգան Պէզճեանի այս բարեգործութիւններուն յարգը, և մեծագործութիւններ կը համարին, որոնք Ազգին ներկայ փիճակին մէջ դրամի, և ասանկ առատ ձեռքի մ'ալ կարօտ ըլլալին կ'ըզգան:

Ազգը երկու հիւանդանոց ունէր, մէկը ի Նարըքբաբու և միւսն ի Պէյօղու, որոնք Շընորհք Ամիրային հաստատութիւններն էին. բայց շատ փոքր ըլլալով, չէին կրնար բովանդակ պարունակել հիւանդները, յիմարները, անառակները, փորձանաւորները, և անտէրունչ անձերը:

Պէզճեան Ազգին այս կարօտութիւնն ալ լեցնել ուզելով, Եւտիգուլէի դուրսը ընդարձակ պարտեզ մը ծախու առաւ, Փիշմիշեան Միքայէլ Ամիրային միջոցաւ. և շինութիւնն ալ յանձնեց ճարտարապետ Գովհաննէս և Օտեան Պօղոս աղաներուն: Շէնքը ընդարձակ և գեղեցիկ եղաւ, բայց փայտաչէն: Եկեղեցի մ'ալ կառուցուեցաւ, որ Համբարձման օրը օծուեցաւ յանուն Ս. Փրկչին, և

սահմանուեցաւ որ ամէն տարի նոյն օրը կատարուի Եկեղեցւոյն աստիճանութիւնը , Պատրիարքը մատուցանէ նոյն աւուր Ս . Պատարագը , և պաշտօն մատուցուի վասն հոգւոյ բարեյիշատակ Հիմնադրին և նպաստողաց շինութեանն և ծախուց :

Բ . Դռնէն հրովարտակ մ'ալ առաւ Պէգձեան , որպէս զի ոստիկանութեան զինուոր մը կամ ուրիշ որ և իցէ զինուոր մը առանց Սուլթանին հրամանին չկրնայ ներս մանել , և մէկը պահանջել թէ պարտքի համար ըլլայ , և թէ ուրիշ խնդրոց ու դատի համար :

Երկու հիւանդանոցներուն պատասպարեալները Ս . Փրկչի նորակառոյց Հիւանդանոցը փոխագրեցին , և հին հիւանդանոցները նորուբերով , եկեղեցի շինեցին , Նարլը քափուլինը յանուն Արքայն Յովհաննու Լեւտարանչին , և Բերայինը յանուն Արքայ Յարութեան Փրկչին :

Եյս միջոցներուն ժանտախար բաւական կոտորած ընել սկսաւ Կ . Պօլոս մէջ . ժանտախտէ բռնուած պանդուխտները հիւանդանոց տարուելով , հոն ալ այս ախտը սկսաւ ճարակուիլ : Ուստի Պէգձեան Սիրայէլ Լմիւրայի և Օտեան Պօղոս ազայի խորհրդով , Ս . Փրկչի Հիւանդանոցին մօտ ծովեզրին վրայ բաւական ընդարձակ տեղ մը ծախու առաւ , փոքրիկ Հիւանդանոց մ'ալ հոն շինել տուաւ , որպէս զի ժանտախտէ բռնուողները հոն տեղաւորուին : Հոն ալ Եկեղեցի մը կառուց

ուեցաւ յանուն Սրբոյն Յակոբոս Կիլիկացի Առաքելոց  
Հայրապետին :

Այս բոլոր ծախքերը մեծ մասամբ Պէզ  
ճեան ըրաւ . ուրիշ օգնութիւն ընողներ ալ  
չպակսեցան , ոմանք կամաւ և ոմանք ալ սկա-  
մայ վասն ահին Պէզճեանի :

## Գ Լ Ո Ի Խ Ի .

ՊԵՋՃԵԱՆԻ ՀԻՄՆՈՒԹԻՒՆԸ , ՊՈՒՍԱ ԵՐԹԱԼԸ ԵՒ  
ՎԵՐԱԻՄՁԸ , ՍՈՒԼԹԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԸՆՈՐՀԻՆ  
ԱՐԺԱՆԱՆԱԼԸ :

Պէզճեան գիշեր ու ցորեկ անընդհատ աչ-  
խատանքներէ պարտասած , ծերութիւնն ալ  
վրայ հասած , ջրգոյրութեան տարժանելի ախ-  
արն ալ զինքը տանջելուն հիւանդացու :  
Իր բժիշկներն անկարացան դարման մ'ընելու .  
Սուլթանն իր բժիշկները խրկեց . անոնք ալ  
բաւական օր դարմանելէն վերջը , խորհուրդ  
տուին որ Պրուսացու ջերմ բաղանիքները եր-  
թայ , գուցէ օգտաւորութեամբ ալ օգուտ  
տեսնէ :

Պէզճեան ելաւ Սուլթանին գնաց հրաման  
խնդրելու համար . երբ մեծ սրահը մտաւ ,  
տեսաւ զինքը Ծիրարի Ահմէտ փաշայն , և  
Սուլթանին աւետիս տուաւ թէ Յարութիւն  
ծառայդ քալելով ահա հոս կուգայ . Սուլթա-  
նը հրամայեց որ սանդուխներէն վեր չելէ ,

որպէսզի չյագնի . այլ ներքին յարկին մէջ հան-  
գրտանայ . սակայն Պէզճեան մտիկ չընելով ,  
սանդուխներէն վեր ելաւ , և Սուլթանին  
երկրպագութիւն ըրաւ : Պէզճեանին որպիսի  
սութիւնը հարցուց Սուլթանը , և իմանալով  
որ բժշկաց խորհրդով Պրուսա երթալ կը հար-  
կադրուի , հրաման տուաւ Պէզճեանին , և  
հրաման ըրաւ նաև Պրուսայու փաշային գիր  
գրել , որ մեծ ընդունելութիւն ընէ Պէզճեա-  
նին . և միտիթարելով զայն , և բարեմաղթու-  
թիւններով թոյլ տուաւ որ իր տունը դառ-  
նայ :

Սուլթանին կամօսքը համեմատ Բ . Գունէն  
գրուեցան հրամանագիրներ Լյալըվա և Պրու-  
սա , որ խիստ մեծ պատուով ընդունին Պէզ-  
ճեանը : Եյն տեղերուն պաշտօնակալաց սե-  
ղանաւորներն ալ գիր գրեցին , և իրենց սպա-  
սաւորները յատկապէս խրկեցին , որ պակա-  
սութիւն մը չպատահի :

Պէզճեան հետն առած Տ . Գալուստ քա-  
հանայն և Ալքօլաքի բժիշկը , և իր սպասա-  
ւորները նաև մտաւ , և ուղղակի Լյալըվա գը-  
նաց , անկէ ի Պրուսա :

Ըւելորդ կը համարինք մի առ մի պատմել  
Պէզճեանի եղած ընդունելութիւնը , Սուլ-  
թանի մը վայել եղած յարգանքը կը մատուց-  
ուէր ամէն տեղ : Պրուսայի մէջ Չեիլիէ ըս-  
տած տեղը գեղեցկաշէն տուն մ'իջաւ , և  
հոն օթեանեցաւ : Բանի մ'որ ետքը Պէզ-  
ճեան ուզեց որ Լիկեղեցի երթայ . տեղւոյն

Փաշայն այս լսելով, իր փոխանորդը խրկեց ազաչելու զՊէղճեան, որ իր սպարանքը գալ բարեհաճի օջարակ մը խմելու : Ընդունեց Պէղճեան այս խնդիրը սա պայմանաւ որ ապարանքին ստորին յարկին մէջ քլայ ընդունելութիւնը, վասնզի կտրազուծիւն չուներ սունդուններէ վեր ելելու :

Անձ հանդիսիւ գնաց Պէղճեան փաշային ապարանքը, արք և կանայք խուռն բազմութեամբ լցուեր էին փողոցները ի տես Ըմիրային, որ Սուրէթը Հիւմայունն իր կուրծքն ունենալով՝ գահաւորակի մէջ բազմած էր : Փաշայն դիմաւորեց զՊէղճեան իր ապարանքին դուռը խոնարհ ակնածութեամբ և մեծ յարգանք, և պարտեզին գեղեցիկսչէն շատրուանը բազմեցուց զայն, և ինք ոտքի վրայ կեցաւ : Պէղճեան ստիպեց և թախանձեց որ նստի, շնորհակալութեամբ ծունկի նստաւ Փաշայն, և խոնարհ յարգանք կը պատասխանէր Պէղճեանի :

Եթէ ժեր օրերուն մէջ այս ընդունելութիւնը կատարուած պատահէր, թերևս հաւանականութիւն գտնէր, թուրքաստանի արդի լուսաւորութեան և յառաջդիմական գաղափարներուն արդիւնքին վերածելով զայն. սակայն այնպիսի ժամանակի մէջ՝ յորում սուկական Սահմէտական մ'անգամ հպատակ ազգերէ Սուլթանի մը վայելուչ փառք ու պատիւ կ'ըսպասէր, երևելի Սիւշիւր փաշայի մը՝ Պէղճեանի մատուցած յարգանքը և արքայաւ

վայել ընդունելութիւնը ամէն լսողները կը զօրմանայնեն. և անհաւատալի անգամ պիտի թուէր, եթէ ականատես անձինք դեռ կենդանի ըլլալով մեզի չվկայէին :

Պէզճեան օշարակը խմելէն զկնի, 10,000 ղուրուշ զինքը բարեւելու կեցող զինւորաց և 3,000 ղուրուշ ալ անոնց գլխաւորին պարգև տալով, քաժնուեցաւ Փաշայէն, և մի և նոյն հանդիտիւ ուղեւորեցաւ տեղւոյն Ս. Լէվելեցին. հոն իր ջերմեռանդ ուխտն ու աղօթքը կատարելէն ետքը, Ղաջնորդարանն ելաւ, ուր ընդունեց մերազնեայ իշխանաւորաց և առաջնորդ Յարութիւն արքեպիսկոպոսին այցելութիւնը. և դարձաւ իր տունը :

Ընկերք է պատմել Պէզճեանի մարդասիրական և ազգասիրական նուէրները և պարգեւները, որոնք ըստ սովորութեան իւրոց հոն իրեն դիմող բազմաթիւ թշուառներու մատոյց, առանց խտրելու ազգն ու կրօնը : Սարաց երկրէն Տէր Ներսէս անունով քահանայի մը 12,000 ղուրուշ տուաւ Տ. Վարուստ քահանային ձեռամբ. այս քահանայն իր երկրին այլազգեաց 9,000 ղուրուշ պարտք ունենալով, իր ընտանիքը գրաւ դրած, դիմեր էր Պօլիս, և Ղզգային Պատրիարքարանէն շրջաբերական կոնդակ մ' առած էր Միոյ քաղաքներէն ու զորժութիւն հաւաքելու համար. բարեբաղ դաբար նոյն օրերը Պրուսա հանդիպեցաւ, ուր իր պարտքը վճարուելէն զկնի, 3,000 ղուրուշ ալ ձանապարհի ծախք առաւ :

Պէզճեանն ոտանն և ութ օր կեցաւ ի Պրուսա, և օգուտ մը չտեսնելով դարձաւ ի Պօլիս :  
 Սուլթանը լսելով Պէզճեանի դարձը, և ուզելով գիտնալ անոր որպիսութիւնը, գիշեր մը ժամը 4 ին ատենները այցելութեան եկաւ Պէզճեանին տունը, իր հեան սենեակով երկու սենեկապետները, Ըլի Սիզա և Սէհմէտ Ըլի պէյերը : Սուլթանը նաւակով Պէզճեանի տանն առջեւ ելաւ, և դուռը բաղխելով, բաւնալ աուաւ, և հրաման րրաւ որ Պէզճեանին շիմացնեն իր գայլը, որպէսզի իր գիմացն եք ներու համար նեղութիւն չլրէ. և սանդուխներէն զեր կ'ելնէր :

Սակայն Պէզճեանի սպասաւորները լմացուցին անոր, որ փութաց ոտք ելաւ, և սենեկին դուրսը դիմաւորեց Սուլթանին, և ոտքն ինկաւ : Իսկ Սուլթանն երկնցուց ձեռքը, բռնեց Պէզճեանը, և դռքի հանեց, բռնելով ինչո՞ւ անկողնէդ ելար, և թնձի համար յոգնեցար. և հրամայելով որ նստի անկողնին մէջ, ինքը Սուլթանն ալ անոր դէմը ակժստի վրայ նստաւ, և անոր ճանապարհորդութեանց և հիւանդութեան վրայ հարցութորձներ ընելով, սփոփեց Պէզճեանը. բազբ և յուսադրական խօսքերով, սուրճ և օշարակ խմեց, և վերադարձաւ իր պալատը :

Սուլթանին այս այցելութեան շնորհը Պէզճեանի վրայ ունեցած բարձր սիրոյն և համարման և գորովոյն մէկ հզօր ապացոյցը կրօնայ սեպուիլ : Հիւանդութեան մէջ Սուլթան

Սոհմուտ հզոր ինքնակալին նման բարեկամե մը միտթարանք լսելու պէս ուրիշ ինչ քաղցր և կաղզուրիչ կրնար ըլլալ: Սուլթանին այս մարդասիրական այցելութենէն յայտնի կ'երևայ թէ Պէզձեան ինչ սատիճան արժանիք ունի եղեր անոր առջևը, իր արթուն և փուլթաջան գործունէութեամբը և երեւելի հանձարովը, այս այցելութիւնը ոչ միայն Պէզձեանի այլ բովանդակ Հայ Ազգին սիրտը բերկրութեամբ և միտթարութեամբ ցուց, և մինչև օպագոյս դարերուն մէջ արձագանգ պիտի գտնէ, և իբրև սնունդ յիշատակաց արժանի դէպք մը պիտի հռչակուի. և փառք Պէզձեանի անուան և պարծանք Հայ Ազգին պիտի մնայ պատմութեան մէջ:

Արքունի թիավարները երեք հազար զուրուշ պարգև ընդունեցին նոյն օրը թէպէտ Պ. Յարութիւնէն հրամանաւ Պէզձեանի:

Արքունի բարձրատախճան պաշտօնատարները, նախարարները և բոլոր աւագանին լըսելով որ Սուլթանն անձամբ այցելութիւնը քրեր է Պէզձեանի, իրենք ալ փուլթային այցելութեան, և միտթարելու զՊէզձեան. մի ևնոյն պատիւն ընելու զիջան և օտարագրի երեւելի անձինք ալ:

Արքունի թանգարանին և Երզնի գանձուց վերատեսուչ Պէքիր էֆէնտին կ'աղաչէ Սուլթանին որ թոյլտուութեան հրաման չընորհէ Սագսուտ ամիրային, որ ըստ առաջնոյն սեղանաւորութեան պաշտօնը վարէ, որ

մէ արգիլուած էր արքունի հրամանաւ : Սուբ  
թանը Սիւսայիպ Սայիտ էֆէնտին կը իրկէ  
Պէզճեանին , սր Պէքիր էֆէնտին խնդիրը  
պատմէ : Պէզճեան լսելուն պէս , ինքն ալ մի-  
ևնոյն խնդիրը կ'ընէ , և ոչ միայն Սափուտ  
ամիրային , այլ և ճանիկ ամիրային ալ մի և  
նոյն արտօնութիւնը շնորհել կը խնդրէ : Սուբ  
թանը Պէզճեանի խնդրոյն համեմատ հրա-  
ման կ'ընէ :

Պէզճեան նկատելով որ օր աւուր կը ծան-  
րանայ իր հիւանդութիւնը , ինք ալ առողջա-  
նալէ յուսահատեցաւ , և սկսաւ հանդարտ  
մտօք մահուան պատրաստուիլ և հոգեւոր մը-  
խիթարութեամբ զօրանալ : Սայիտ էֆէնտին  
ամէն օր Պէզճեանին կուգար , և ի դիմաց  
Սուբթանին կը հարցնէր անոր օրպիտութիւնը  
և կ'երթար կը պատմէր Սուբթանին : Օր մը  
Պէզճեան նստեցուց Սայիտ էֆէնտին , և իր  
կողմանէ ազերսագիր մը գրել տուաւ Սուբ  
թանին , որպէսզի իր տեղը՝ փողերանոցի  
պաշտօնին յաջորդէ Տիւզեան Յակոբ շէլէպին ,  
զայն օրինաւոր ժառանգ ճանաչելով այն պաշ-  
տօնին , զոր անոր հայրերը այնքան տարի ա-  
մենայն հաւատարմութեամբ վարած են , ըս-  
կըսեալ իրենց նախահաւ Անցի Տիւզ Սարգիս  
սէն , Սուբթան Սուսթաֆա Վի օրէն ի  
վեր : Սուբթանն անմիջապէս ներելով Տիւզե-  
անց՝ կը հաստատէ Պէզճեանի խնդիրը ար-  
քունի հրովարտակով , ինչպէս որ Պէզճեանի  
մահուընէն ետքը կատարուեցաւ անոր խնդ-

դիրք : Պէզճեան միշտ իր խնամքն արդէն չէր պահակեցուցած Տիւղեան գերգաստանին վըրայէն , և կը սիրէր Յակոբ չէլէպին , այս վերջին բարիքն ալ ընելով աւելի իր սէրը և համակրութիւնը յուցուց :

Պէզճեանի հիւանդութեան ժամանակը զօրմանալի գիպուած մը պատահեցաւ , որուն վըայ չեմք ուղեր լուծեամբ անցնիլ : Փողերանոցին վերատեսուչ Նաֆիզ փաշայն հաշիւ կը պահանջէ Սանտրք քեար Պետրոս աղայէն , որ Պէզճեանի գլխաւոր գործակալն էր : Պէզճեան երեկոյին կ'իմանայ այս բանս Սանտրք քեարէն , նոյն գիշերը Նաֆիզ փաշային սեղանաւոր Փիշմիշեան Աիքայէլափրայն կը խրկէ , հարցնելու թէ այնչափ արտօնութիւն ստացած է որ հաշիւ կը պահանջէ իմ գործակալէս , քանի որ ես կենդանի եմ : Նաֆիզ փաշայն այս հարցման վըայ վախնալով , կը փութայ հետեւեալ օրը Պէզճեանի տունը գալու , որ ներուսն խնդրէ անկէ . վասն զի ապահովապէս գիտէր որ այն օրը իր պաշտօնէն պիտի իյնար : Պէզճեան հրամայեց իր ծառաներուն որ չընդունին զայն , և ըսեն թէ հոս չէ :

Երբ Նաֆիզ փաշայ ետ դարձած նաւը կ'երթար , բացաւ Պէզճեան պատուհանը և ըսաւ . Բարի երթաս էֆէնտի : Փաշան վեր նայելով խոնարհեցաւ և աղօթող եմ կենացքդ , ըսաւ : Պէզճեան հրաւիրեց վեր իւր սենեակը , և առանձին խրատեց զանի , և պատուով արձրկեց :

## Գ Լ ՈՒ Խ Ի Ե Լ Ե .

ՄԱՅ ԵՒ ՓԵՌԱՒԱՌ ԷԿԵՆԻՍ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ  
ԳԵՋՃԵԱՆԻ .

Պէզճեանն բժշկաց խորհրդով փոխեց իր բը նակութեան տունը , և Փիշիկեանն (Յովհաննէս աղային տունը գնաց նստաւ , որ ծովէ հեռու և բարձրաւանդակ տեղի մը վրայ շինուած էր :

Սուլթանը միշտ Պէզճեանի վրայ իր գուլթնու սէրը ցուցնելու միջոցներէն ետ չէր կենար . անգամ մը իր նուագածուները խրկեց Պէզճեանն զբօսցնելու համար . ուրիշ անգամ մ'ալ ինք դարձեալ գնաց Պէզճեանի տունը , բայց զոյն հոն չգտնելով , հարցուց իմացաւ որ բժշկաց անօրինութեամբը օդափոխութեան համար ուրիշ տուն գացեր է , հրաման ըրաւ որ Պէզճեանին գանուած տեղը փառաւոր տուն մը շինուի արքունի գանձէն Պէզճեանի համար : Կործաւորները լցուեցան , և գիշերու ցորեկ մեծ փուլով շէնքն յառաջ կը տանէին , ճարտարապետն էր Յակոբ շէլէպի Տիւզեան , և հազիւ կէս եղած էր շէնքը , Պէզճեան կնքեց իր մահկանացու ընթացքը , ամէն հոգեւոր պարտաւորութիւնները տեսնելէն վերջը , 1834 յունվարի 3 ին :

Պէզճեանի մահուան լուրը կայծակի օրա գուլթեամբ հասաւ Պօլսոյ բոլոր բնակչաց ա-

կանջը, և հաղարաւոր անձերու աչքերէն յորդարտասուք հոսեցիւց՝ Տիւղիանի Յակոբ չէլէպին առաւ Սուրէթը Հիւմայունը և ուրիշ պատուանշումները, և անձամբ տարաւ Սուրէթանին առջև դրաւ, ծանուցանել ուզելով Պէզճեանի մահուան գոյժը: Սուրէթանն իմա նարով մահի՝ ցտեցաւ յոյժ, և լրտաւ, ամբողոր իմ հաւատարիմ՝ ծառայող հարսնացուցիւ՝ և հիանալի բրաւ որ անոր յուզարգաւորութիւնը մեծահասակէս բլայ, և մարտին պաշտերեն աչքունի պալատին քովն նաւամատոյցէն նաւ դնեն, որ իր վերջի տեսութիւնն լինէ, և յոանին թողնեն այն եկեղեցւոյն մէջ, ուր թաղութիւնս յանդիմանէր Պէզճեան, և ինք ալ հրաւմոյած:

Տիւղիան եկաւ Սուրէթանին կամքն իմա ցոց՝ Հայ փշխանաւորաց: Թաղիտն կարգը կտտարուեցաւ: մարմինը դադարէ մէջ դրաւ ու եցաւ, որուն առջևէն կ'երթային Ստեփաննոս Պատրիարք՝ կարսպետ և Մտուածաւորաբ Մրբեպիսկոպոսունք, երկու վարդապետք, երկու քահանայք, տաանց շուրջառի. ետեւէն Յակոբ չէլէպի, Ղանիկ և Կրկանեան Յարութիւն ամիրայք, և դադարին երկու կողմէն ալ հանգուցեպն վեց սորասաւորները:

Նաւամատոյցը տարուեցաւ դադարը, և առանց երգի նաւ դրուեցաւ. դադարին երկու կողմը երկու քահանայք աւազերէց Մայր Եկեղեցւոյ Տէր Մաթէլ, և Օրթագիւղի Տէր Վալտ սո ծունկի նստան: Թիաւորները

ճամբը ծորնը քարը շարժելով նաև ակը , բարձր են պահ  
 ընտրին ծավաղելովն թողնեն , յետոյ բնթացքը  
 առջևնցին դէպ ի Պոլիս . և Սուլթանն իր  
 անենակեն կը գիտէր զագաղակիր նաևակը , և  
 բազմաթիւ յուզարկաւորներուն և ի անկաւե  
 կողներուն նաևակաց բազմութիւնը :

Ս Վարձինը Լէնիչարու իջ տաւը տարջուե  
 ցաւ , դէր բնութ հզգեպրայնաց գաղղ պատ  
 թագս կ'ըսպատէր , հանձնէ մեծ թագօր կազմը  
 ւեցաւ . արքունական հրովարտակն անջեկն  
 Բարձրացուցած կը տանէր հանգուցելոյն սպա  
 պաւորը Լիմանձեան Սթանիան : Լը սկիզբնաց  
 թողեւ այն անհամար և խառն ըբազակութիւ  
 նը որ Լէնիչարու յեն մինչև Սայր Լիկեղէն  
 ցին պտուած եին , և այն Յայն Լեւոնացի ի  
 այլազգի , արք և կանայք թխանքը Սայր Լե  
 կեղեցւոյն մերձենալուն պէս , Յունաց եկե  
 ղեցականներէն երկու Մետրապօլիտ և Պատրի  
 արքական փոխանորդը զգեստաւորուած և մու  
 մեղեններով ընդ առաջ եկան աղօթելով : Եւ յս  
 պէս մտան Սայր Լիկեղէցին , ուր կարապետ  
 Լըբեպիսկոպոսը ըստ սովորութեան բացաւ իր  
 բերանը , և զբանչելի ու արտաշարժ դամբաւ  
 նական մ'ըսկտաւ , արտասուալից աչօք , և մի  
 անգամայն բոլոր բազմութիւնը յարտասուս  
 շարժելով . բայց ի վերջոյ նկատելով որ բազ  
 մութեան ձայնէն իր ձայնը լսելի ընել անկա  
 թելի պիտի ըլլայ , վերջացուց դամբանականը .  
 Թագման կարգը կատարեցին , և Ս Յարու  
 թեան պաճարին մէջ պատրաստուած գերեզ

մանին մէջ դրին Պեղծեանի մարմնը՝ անոր  
 երկու սպասաւորները Թէրէի Յարութիւն և  
 Կարայեան Յովսէփ : Այսպէս վերջացաւ  
 Պեղծեանի մարմնոյն յուղարկաւորութեան  
 հանդէսը խիստ փառաւոր և նմանը չտես  
 նուած կերպով :

Հետեւեալ Տպարանագիրը՝ զոր ի դիմաց  
 Սայր Իջեղեցւոյն շարագրած է Փէշտրմաք  
 Ճեան Կրիգոր Պատուելին՝ Պեղծեանի կենդան  
 նութեանը առեմն, և որ փարագրուած պատ-  
 րաստ էր. Պեղծեանի մահու ընէն ետքք քանի  
 մը ամիրայեց կեղծ երկիւղին հասնար սրբեղ  
 արուեցաւ, և ուրիշ համառօտ տապանագիր  
 մը շինուեցաւ, ու այն փորագրուեցաւ, ու  
 տի մէնք ալ տուածինը ածբսղը հաս դնելնէս յե-  
 առայ երջորդն ալ կը հրատարակէր :

Հարն մարուք եմ ես ծագման Մօքն լուսայ :

Արկեալ զին քեհեզ պարզ և Հոգւոյն սրբոյ :  
 Երկին յերկրի ցուցայ պճնեալ ի զարդ շքեղ :

Յիս միշտ որպէս փեսայ ճեմէ պսիին անեղ :  
 Ունիմ անթիւ ծնունդ ծնեալ ժառանգ փառաց :

Որոց ջամբեմ սնունդ հաց և բաժակ կենաց :  
 Բայց մեծ հոգեհ եղեալ ամբջ յառաջ ի վեր :

Այս ուրբ Տաճար կեղեալ եղև իսպառ աւեր :  
 Տեսուչն որբուց իմաց Տէր Կարապետ Արհի :

Նստեալ ի լաց ի կոծ ողբայր որպէս այրի :  
 Բայց սիրտ նորին տխուր ուրախ եղև փութով :

Յորժամ փեսայս հզոր այց արար ինձ լիով :

Յարուց յորդուց իմոց զվեհ Յարութիւն Պեղծեան :

Իշխան իտհեմ և փորձ պարծանք ազգին Հայկեան :

Արիի պայծառ ցուցաւ արամեալ սրտից բազմաց :

Բարիք նորս անբաւ զոր նա գաղտնի գործեաց :

Ասէ . մի ինչ հոգար այնպէս շքեղ լինի :

Մինչ զի ասես . սուրբ Հայր . այրիչն եղև բարի :

Նա ետ նպաստ առստ շինել զայս սուրբ փարսիս :

Որով եհաս յաւարտ շքնազ քան զոր էր նախ :

Ջանօթ , զզգեստ նորոգ յաւէս յսկի յարծամթ :

Կազմեաց բազում տրոք ի զարդ ի գեղ զուարթ :

Խաչեալ պատկեր շքեղ , սկիհ , և յաչ , բուրվառ :

Քշոց , և ջահ , կանթեղ , վակաս և Թագ պայծառ :

Շուրջառ , բազպան , սւրար , շապիկ աղնիւ խտես :

Եւ այլ գործած ճարտար , սպաս և զարդ պէնպէս :

Շինեաց յիւրոց արգեանց երրեակ գարոց ուսման

Որոց հասցիթ կարգեաց կալ միշտ հաստատ համայն :

Ջգանձ աստի կենաց փոխեաց յերկնից կամար :

Մնալ ի կեանս անանց հոգւոյն իւրում պաշար :

Ոչ են այսչափ միայն գործքն բարեաց վեհիս :

Առ են անցեալ ըստ շափ զոր նա արար յաստիս :

Ուստի ես Մայր բարի իրաւ վարկայ այժմիկ

Հանգչել յիմում ծոցի՝ մարմնոյ որդւոյս այսմիկ :

Հազա որ այց առնէք շիրմիս Առն մեծի :

Ջայս քաջ ի միտ առէք զոր ձեզ անձայն խօսի :

Թաղել յայս սուրբ շիրմիս այժ չի արժանի :

Սակայն զտենչ սրտիս ելից անմահ Աքքայն :

Դիտմունք իմոց մտաց յառնել զայսչափ բարիս

Չեին վասն իմ փառաց այլ առ օգուտ Ազգիս :

Խնդրեմ ի ձէնջ միայն վասն իմ առ Տեր մաղթել

Մեղաց իմոց համայն քաղցր գթով ներել :

Արգիւնք անբիծ գառ ին որ աստ ձօնի նուէր

Տեսեան փառաց Վեհին լիցին և ինձ հրաւէր :

Ազգոք որ միշտ մատչին քաւիչ մարդկան մեղաց

Հանցն մասն և բաժին հոգւոյս և իմ նախնեաց :

Սերունդ իմոց սահմին և իւր բարի համբաւ

Մինչ ի գալուստ Փրկչին կեցցէ փառօք բազմաւ :

Եւս տանարանադրին տեղ յետոյ փորա-  
գրեցաւ հետեւեալը, որ նշնայէս Պէզձեանը  
ձեան Պատուելին յորինածն է :

Ահա մեծագործ Այր անդուգական  
Պարսն Պողոտի սրբի պատուական .

Իշխան վեհապան՝ Յարութիւն Պէզձեան  
Ազգօգուտ գործովք անմահ ի մահուան .

Գիտոց դաստի կեննս ստուեր անցական  
Սեծութիւն և փառք Երազ ջորական .

Իբրև ցանկացող կենացն անվախձան  
Մթերեաց իւր գանձ յերկնայն խորան .

Չեան իւր առնաւ լեզու էր խոստան  
Օգուտն լզգի շահ օգուտի ինքեան .

Որ խոկմամբ մահու որպէս խոհական  
Շինեաց զայս շիրմ ի կենդանութեան .

Ուր անխոփեցաւ արդեամբք բազմադան  
Ի վախճուն էրեք ամիս իւր լրման .

Սա տեսմամբ վերին յարկիդ բնակութեան  
Բնակեաց ի գաւիթ տանս սրբութեան .

Բարերար Յիսուս հանգո յախտան  
Չհոգի ծառ այիդ յերկնից քո խորան .

1854 Յունվար 5

Պէզձեանի կեննագործութեան մէջ յեյտնի  
երևցաւ Պէզձեանի ուշիմ խոհական և բանի-  
բուն ըլլալը : Պէզձեանի այս յատկութիւննե-  
րը աղէկ զգալու , և Մեծ ՄԱՐԴ մ էր բոլոր  
չափ անոր արժանիք տալու համար . Հարկ է  
որ դէս ետե Պէզձեանի ժամանակին երթանք ,  
անոր ժամանակին մարդն ըլլանք , կամ գոնե  
այն ժամանակին հանգամանքները նկատենք ,

արնոցսն՝ աւելի ազէի ոչխարի փայլի Պեզմանի  
 ոքին, որ հասնապրը

... (Չափանեան Վերաւթիւնը ի սկզբանէ ան  
 տի քաղաքաւանկ միտայեմտական դրու թեամբ կը  
 կրտնի վարձախ) Եւ յարու թեան հետ ժամու  
 նակին քաղաքակալու թիւնը կամ թե՛ դեռ

(Չափանեան Տերու թիւնը Եւրոպիոյ բազարա  
 կրթութեան հետ վերաբերու թիւն կամ սր  
 եւ իջէ մտածուք յարաբերու թիւն մը չունե  
 նաք Թիւսեանի ի հարկէ դիւրու կը մտա  
 բերէր նայն աստեղի հանգամանքներն ոչ) Պեզ

մանի աստեղի Թիւսեանի չկար, և Սուլթան  
 Սահմուտ իր կենաց մեծագոյն մտաք Եւնիւն  
 ըրու թեան դարաւն մէջ անցնելէն յետոյ, հա  
 ղիւ թե իր հզօր և աներկիւղ յողեցող թեամ  
 քը վերցոյց ու բնութիւնը բոլոր զայն

Եւնիւն  
 ըրու թեան ժամանակ կեանք ինչք սրտիւ  
 սարք հով չէին նայն իսկ Սուլթաններն ան  
 գամ իրենց բախտին վայ ապահովութիւն  
 չունէին սակայն Սուլթան Սահմուտին այն  
 անկէ՛հէր Բերնակային միայն սահուած էք

բռնուք որ Եւնիւն ըրու թիւնը ընդէլ և Օս  
 մանեան Տերու թիւնը նոր հիման վայ բարե  
 կարգէր և այն օրէն Եւրոպիոյ բազարակր  
 թութեան ներքնդարմակ ընդէլ

... Պէնք գիտաւորութիւն չունինք Եւնիւն ըր  
 ու թեան և արգի վիճակին հանգամանքները  
 քա յարաբերութիւնները մի առ մի հաս թուել

բաւական է որ գիտնանք ինչպէս վերն ըսինք  
 թէ Սուլթաններուն բախտն անգամ ապահո

վուժիւնն չունէր . որմէ դիւրաւ կը հետեւին  
ընդհանուր ժողովրդեան և արքունի պաշա-  
տակարաց վիճակը, և մանուսանդ Պէղճեանի  
նման Հայու մը արքունի գործերուն մէջ բա-  
րեհամբաւելուն, յառաջադիմելուն, և Սուլ-  
թան Սահմուտի նման հզօր Ինքնապաշտ մը  
պնդափ սիրելի լլալաւն հետ աճող ու զար-  
գացող վասնդները :

Սուլթան Սահմուտ իբրև մարդ կրնար  
սխալիլ . և պատմութենէն կրնանք նկատել  
թէ եղեր են այնպիսի անձինք, որոնք թէպէտ  
սիրելի էին Սուլթանին, սակայն չեն կրցեր  
այն սիրոյն պտուղը վայելել իրենց կենաց մին-  
չև վերջին րոպէն . ինչպէս որ Պէղճեանին ե-  
ղաւ, Սուլթանին այցելութիւնն անգամ իր  
հիւանդ անկողնոյն վերէն ընդունելով, և մին-  
չև անգամ մահուրնէն ետքը իր ցուրտ մարմ-  
նովը ի տես Սուլթանին ներկայանալով : Սու-  
րէթը Հիւմայուն բարձր պատուանըջանը ըն-  
դունելէն յետոյ, հրաման ստացաւ Սուլթա-  
նէն որ արքունի պետական խորհուրդներուն  
ներկայ ըլլայ, նախարարական պատուով ձի և  
նաւակ գործածէ, և թէ ամէն օր պալատը  
գայ ու կերակուրը տնտեսէ : Բամազանի օր  
մ'ալ Սուլթանն իր հետն առած Պէղճեանը  
չընկաւ շուկայի մէջ . ամէն տեսնողները ու  
լսողները զարմացան, և սկսան բոլորովին եր-  
կնչիլ և ակնածիլ Պէղճեանէ : Սուլթան Սահ-  
մուտին անձնական յատկութիւններուն նկատ  
մամբ կ'ըսենք թէ այն ամէն շնորհքը որ Պէղ-

ձեան վայելեց իր վեհափառ Սուլթանէն, իր հաւատարիմ ծառայութեանց ու խոհականութեան ու ժրաջան գործունէութեան արդիւնքն են, և անոնցմով միայն արժանաւորութիւն ստացած էր այդ շնորհոց :

Քանի քանի բարձրաստիճան պաշտօնատարներու նախանձն արդեօք Պէզճեան շարժած է իր վրայ, քանի քանի անգամ արդեօք փորձութիւններէ ազատած է. միթէ կարելի չէր որ օր մը կամ ինքը Պէզճեան զայրացընէր զՍուլթանը, կամ Սուլթանն ինքնին վըշտանար անկէ, և ուրիշներ՝ որոնք համարձակութիւն և շնորհք ունէին երեւալու Սուլթանին՝ Պէզճեանի նման, առիթ գտնէին քրտութիւն ընելու և այնպէս անուանարկ ընելու զՊէզճեան, որ գլխապարտ դատուէր. ասանկ հրաման մը բաւական էր որ ըլլար, ալ անգառնալի կ'ըլլար. վասն զի Պէզճեանի հակառակորդները վայրկեան մ'սնգամ չէին կորսնցնէր. և թոյլ չէին տար որ Սուլթանը զզջալով վերագարձնէր իր հրամանը. բանը բակէն անցած պիտի ըլլար : Հապա Պէզճեան ինչպէս այս երկիւզալից և վտանգաւոր վեճակները անցուցեր է. արգարե մեր զարմանքն ալ հոս է, և ապագայն աւելի պիտի զարմանայ, ու անշուշտ Պէզճեանի մեծ արժանաւորութիւն մը պիտի սայ :

Պէզճեանի ատեն հետզհետէ երեւելի հանգիստեցան, Սուլթանին սիրելի ըլլալով, նախ Հիւսէին (չա փաշայն, յետոյ մեծ Վեզիրն

Սէլիմ փաշայն, յետոյ մեծ Ապարապետն խիւս  
րէվ Մէհմետ փաշայն, և ներքին Քարաու  
ղարը Սուսթաֆա Ղլայն. ասոնք ամէնքը մէ  
մէկ առիւծներ էին, բայց ինչպէս շահուե  
ցան, Պէղճեան ինչպէս զասոնք իրեն յանկոյց,  
մանաւանդ որ լսած ալ էնք թէ Սուլթանը  
շատ անգամ իր ուրախութեան միջոցներուն՝  
Պէղճեանին հրաման կուտայ եղեր որ կտտա  
կով վարուի անոնց հետ իր ներկայութեանը.  
Ի հարկէ Սուլթանին ներկայութեանը՝ Վէզիրի  
կամ Ապարապետի սրտիւ չպահուիր Պէղճեան  
ոչ միայն Սուլթանին կամայք կը ծառայէր,  
այլ այն բարձր պաշտօնէից սիրտն ալ շահիւ  
կը ջանար, թէպէտև միշտ անոնց քինախրնդ  
րութենէն կը խիթայր. ուստի իր ծառայու  
թիւնները կը կրկնապատկէր, արթուն կը հըս  
կէր, խոնարհամիտ կը գտնուէր, և առաւել  
Նստուծոյ կը դիմէր, միայն Ննոր յուսացած և  
Ննկէ զօրացած կը գործէր. անոր համար  
խիտ երևելի հանդիսացաւ իր բարեգործու  
թեանց մէջ. Նկեղեցիներ, դպրոցներ, հի  
ւանդանոց կառուցանել, զանոնք զարդարել  
և պայծառ պահել, տղքատները կերակրել,  
թշուառներու արցունքը սրբել, վերջապէս  
առանց բարեպաշտական ձեռնարկութեան օր  
չանցնել. այս էր իր կեանքը: Իր խնամքը հա  
ւասար էր ամէնուն վրայ, խորութիւն չու  
նէր. իր դէմն ելնողը նախ կը սաստէր, կը  
յանդիմանէր և կը գանախոծէր անգամ, բայց  
պահ մը ետքը այն թշուառը անյուստի կեր

պով կը մխթարէր . և սատր համար իրմէ ու զորմնութիւնն ակնկալուցները կը ջանային որ զայրացնեն զինքը , և ապտակ մ'ուտելու բարեբազդութիւնն ունենան . վտան զի ապտակին անմիջական հետեւութիւնը բարութիւնն , լիութիւնն և գթութիւնն էր : Արիչ ազգերու վրայ ալ միօրինակ գթոտ էր , անոնց աղքատաց ալ սչ նուազ առատաձեռն էր : Հէլէնացւոց ապստամբութեան ժամանակ բաւական (Յոյն մեծամեծներու կեանքն ապահով ցուց . Յունաց I անկայի II . Թորոս I կեղեցւոյն 12 մեծադիր սակեզօժ և արծաթապատ I ւետարաններ նուիրեց : Հայ Հռովմէականաց I պալատիոյ մէջ II . Փրկիչ կեղեցւոյն շնութեանը օգնեց . ևն ևն :

I հա այս բարեպաշտական ընտիր գործերով , և աղքատասէր ու ազգասէր բնաւորութեամբը և հզօր ձեռնհասութեամբը , ու արքունական պատուով զարդարուած ըլլալուն մինչև իր կենաց վերջին օրն ալ իր փառքն ու պատիւը անաղարտ պահելով երեւելի եղաւ Պէդճեան , և արժանի մեր դարուն մեծ մարդըն Հայ ազգին համար կոչուելու , և մենք ալ շնայութիւն մ'ըրած չենք ըլլաք ԱԶԳԱՑԻՆ ԱՆԶՈՒԳԱԿԱՆ ԲԱՐԵՐԱՐ կոչելով : I նմահ է Պէդճեան իր անմահական գործերովը մեր մէջ , և անմահ պիտի մնայ ապագայ դարուց մէջ փառք ու պարծանք ըլլալով Հայ I ղգին , և օրինակ ու նախատիպ պատկեր խրախուսիչ այլոց :

# Յ ԼՆ Կ

<p>ՎԼԱԻՒ . . . . .</p> <p>Ա. Պեղձեանին ծնունդը և զարգացումը . . . . .</p> <p>Բ. Պեղձեան Եարութիւն գործակալութեան պաշտօնով կը մտնէ Տիւղեանց թով . . . . .</p> <p>Գ. Պեղձեանի խնայական ջանքով շքոք ազնուական անձանց մահուրնք ազատուիլը . . . . .</p> <p>Դ. Պեղձեանի հաւատարմով ծառայութիւնը . և անոր առաջին բարեգործութիւններն ի խորհրդով . . . . .</p> <p>Ե. Ս. Երուսաղէմայ Ս. Եակոբայ վանուց խնդիրքը Արքուեի մատակարար պաշտօնը Պեղձեանին յանձնուիլը . . . . .</p> <p>Զ. Պեղձեան կը հրաժարի պաշտօնէն . Տիւղեանք կը բանտարկուին . Պեղձեան Փողոթանոցի պաշտօնէն կ'ընտարուի . . . . .</p> <p>Է. Տիւղեան գերգաստանին կորուստը . . . . .</p> <p>Ը. Խնդիր վերագործի Հասկեական Հայոց ի ծոց ազգային Լուսաւորչական Ս. Եկեղեցոյ . . . . .</p> <p>Թ. Հայ Ժողովրդեան ազմուկը . Եարութիւն Պեղձեան և ուրիշ ամբաններ կ'ազատուին . . . . .</p> <p>Ժ. Պեղձեան և Տիւղեանք արտօրէն կը վերագտնան . . . . .</p> <p>ԺԱ. Արքունի Հասկեական Հայոց . . . . .</p> <p>ԺԲ. Պեղձեանի բարեպաշտական գործերը . . . . .</p> <p>ԺԳ. Զարտարապետ Գրիգոր ամիրային պատրիստ և վերագործը . Սէժ սովուն ժամանակը կ'. Պաշտ պաշտ Ժողովրդեան ազատութիւնը Սնատուրն արտօրուելէն . . . . .</p> <p>Ի. Պեղձեան կ'ազատի գլխատման վտանգէ մը . և ժառիթի համայուն շքոքանք կ'ընդունի . . . . .</p> <p>ԺԵ. Պեղձեան հրովարտակ կ'ըստանայ Մայր Եկեղեցոյ մէջ իր գերեզմանը շինել տալու . Երուսաղէմի մէջ Ս. Գե. րեզմանին վրայ Ս. Պատարագ մատուցանելու արտօնութիւնը կ'ըստանայ Հայոց համար . . . . .</p> <p>ԺԶ. Պեղձեանին ճանապարհորդութիւններն ընդ Սուլթանին . Ճանիկ ամիրային ի Էստառ արտօրիլն և վերագործը . Ենիթթարուցի Չարքը Ռեհիզ անուն նաւավարը . . . . .</p> <p>ԺԷ. Վառօղապետ և Զարտարապետ ամիրայից մահը . Տնանկ աղքատաց համար սղարմուէ մատուկին հաստատուիլը . Եկեղեցեաց եկամտից ազատուիլը յարքունական գրասեանէն . . . . .</p> <p>ԺԸ. Ճանիկ . Մագալա և Խնդիր ամբաններուն մահու մերձ բանտարկելութիւնը և անոնց ազատութիւնը . . . . .</p> <p>ԺԹ. Հիմնարկութիւն դպրոցաց . Եկեղեցեաց և Ս. Փրկչի հիւանդանոցին Ենիթթուլի . . . . .</p> <p>Ի. Պեղձեանի հիւանդութիւնը . Պրուսա երթալը և վերագործը . Սուլթանին պղծելու շնորհին արժանանալը . . . . .</p> <p>ԻԱ. Մահ և փառաւոր հանգէս յուղարկաւորութեան Պեղձեանի . . . . .</p>	<p>ԵՐԵՍ</p> <p>1</p> <p>8</p> <p>7</p> <p>11</p> <p>15</p> <p>20</p> <p>25</p> <p>28</p> <p>35</p> <p>42</p> <p>45</p> <p>54</p> <p>66</p> <p>70</p> <p>74</p> <p>76</p> <p>83</p> <p>90</p> <p>98</p> <p>105</p> <p>115</p>
--	--

UNIVERSITY OF MICHIGAN



3 9015 04147 2146

